



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Փ Ի Ր

№ 6 1895

Յ Ո Ւ Ն Ի Ս

1895 № 6

ԵՕԹԵՐԱՐԴ ՏԱՐԻ

երևս

1	ԼԵՐՄՈՆՏ.—Յ. ՏԵՐ-ԳԷՈՐԳԵԱՆ	747	Մցիրի (սոճեմա, վերջ):
2	ՀԱՅՆԷԻՑ—Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ . . .	758	Երգեր (բանաստեղծ.):
3	ՀԱՄՍՈՒՆ, ՔՆՈՒԳ	760	Գազանիք (սյառուճածք):
4	ՇԱՆԹ	770	Զգուշ (բանաստեղծ.):
5	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	772	Դպրոցական նամակներ:
6	ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	782	Պատկերներ (բանաստեղծ.):
7	ԶԱՔԱՐԵԱՆ, ԹԱԳԷՈՍ ԲԺ.	784	Ժառանգականութիւն (վերջ):
8	ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ	801	Հրածեշտ (բանաստեղծ.):
9	ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ	802	Խոշոր ինզուստր. զարգացումը, III:
10	ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆՅ	809	Գարագաշ. «Քննակ. սյառու. հայրց:
11	ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՔ	822	Ժամանակակից տեսութիւն.— Հաշ- կական խնդրի նորագոյն զարգա- ցումը: Յողւած չորրորդ:
12	848	Հաշկական ունեւորմաների ծրագիրը:
13	Ա. Ա.	868	Վարչ. ունեւ. ծրագրի ամփոփումը:
14	ԾԱՏՈՒՐԵԱՆ, Ա.	872	Լեոն վարդապետ Խօջազեան:
15	ՍԵՒԵԱՆ, Հ.	876	Թատրոնի շուրջը, IV:
16	Հ.	880	Քաղաքական Տեսութիւն:
17	ԽՄԲ.	886	Զանազան լուրեր:
18	»	905	Բովանդակ. «Մուրճ» 1895 № 1—6:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротвицка, Гол. пр., д. № 41.

1895

Handwritten text in a narrow column on the left edge of the page, likely bleed-through from the reverse side. The text is written in a cursive script and is difficult to decipher due to its orientation and fading. Some legible fragments include "1911", "1912", and "1913".



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1895

Յ Ո Ւ Ն Ի Ս

1895 № 6

ԵՐԲԵՐԻՐԿ ՏԱՐԻ

Ք Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ի. Գ. ՌՕՏԻՆՆԱՆՑԻ

Типография М. Д. Ротвианца, Гол. пр. д. № 41.

1895

საქართველოს

საზოგადოებრივი განათლების

საზოგადოებრივი განათლების

Дозволено цензурою. Тифлисъ, 29 Мая, 1895 г.

Մ Յ Ի Ր Ի

Մ Ի Խ Ա Ի Ն Լ Լ Ե Ր Մ Ո Ն Տ Ո Վ Ի

Թարգմ. ՅԱԿՈՒՅ ՏԼԻՐ-ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

Ճաշակելով ճաշակեցի... զտակաւ մի
մեղր, և ահա մեռանիցիմ ես:

Գիրք Առաջին թագաւորաց ԳԼ
ԺԻ, 43: ²⁾

XVI

Դու չիշնում ես, որ մանուկ հասակում
Օրումս երբէք չէի արտասուում,
Իսկ այդ րոպէին, ինչպէս երեխայ,
Առանց քաշելու լաց էի լինում:
Ո՞վ պէտք է տեսներ, միայն մոլթ անտառ
Եւ վերը սահող լուսինը հանդարտ:
Պարզ լուսաւորած նորա շողերով,
Աւազով ծածկւած,
Եւ անթափանցիկ ծառէ պարսպով

¹⁾ Տես «Մուրճ» 1895 թ. № 5: ²⁾ Այս բնաբանը «Մուրճ»-ի նախորդ համարում թարգմանչի մոռացութեամբ բաց էր թողած: Պատահած վրիպակները տեսնել սույն համարում՝ վրապակներին չատկացրած տեղում:

Խիտ շրջապատուած,
 Մամռապատ դաշտ էր իմ առաջ փռուած.
 Եւ այնտեղ յանկարծ ցայտեց մի սուեր,
 Եւ թռան երկու հրացայտ կայծեր.
 Յետոյ մի գազան թեթև ոստիւնով
 Յատկեց անտառից և թռչկոտելով
 Պառկեց աւազում երեսի վերայ:
 Անսպասաների հիւրը մշտական—

Յովագն էր հօր:

Ուրախ ունում էր և կրծում ազան
 Նա մի թաց ոսկոր.
 Երբեմն քաղցրութեամբ պոչըն էր շարժում,
 Եւ արիւնային վառւող հայեացքը
 Գէպի լրացած լուսինն էր դարձնում.

Եւ նորա վերան

Բուրդը փայլում էր արծաթի նման.
 Ես սպասում էի կոււի բուպէին,
 Մի եղջիւրաւոր ծառի ճիւղ բռնած.
 Եւ ահա դարձեալ արեան և կոււի
 Ծարաւով վառւեց իմ սիրտը յանկարծ:
 Բայց ճակատագիրը բոլորովին
 Մի ուրիշ վիճակ սահմանել էր ինձ.
 Եւ համոզւած եմ ես այժմ այն բանում,
 Որ կարող էի հայրերիս շարքում
 Վերջինը շղիինել անվախ քաջերից:

XVII

Ես սպասում էի Եւ ահա մթին
 Գիշերւայ մէջը թշնամուն զգաց.
 Ինչպէս հառաչանք ողբալի և զիլ
 Ունոց արձակեց ահա նա յանկարծ:

Եւ նորից սկսեց

Աւազը թաթով փորել բարկացած:

Նա դեռ զիք կանգնեց,

Սպա տարածւեց.

Եւ հէնց առաջին կատաղի թոխչքով
ինձ սարսափելի մահ էր սպառնում.

Բայց ես կանխեցի.

Հարւածս արագ էր և շեշտակի:
Հաւատարիմ ճիւղը, ինչպէս սուր կացին
Նորա լայն ու հաստ ճակատը ձեղքեց.

Եւ հառաչելով նա մարդու նման
կամաց շուռ եկաւ և գետին փռւեց:
Եւ, թէև սաստիկ արիւն էր հոսում

Նորա խոր վերքից,

Մահացու կռիւը կրկնակի ոյժով
Բորբոքւեց նորից:

XVIII

Յարձակեց ուղիղ նա կրճքիս վերայ,
Բայց շուտով զէնքս կոկորդը խրել
Եւ երկու անգամ մէջը պտտել

Ես կարողացայ:

Նա ոռնաց և իւր ոյժերը վերջին
Հաւաքեց մի տեղ,
Եւ զոչգ օձի պէս իրար փաթաթւած,
Բարեկամներիցն էլ ամուր գրկւած,
Ընկանք միասին.

Եւ գետնի վերայ սկսեցինք կուել
Խաւարի միջին:

Ահռելի էի ես այդ բոպէին,
Ինչպէս յովազը վայրենի և շար,
Նրա պէս տաքանում, մռնչում էի.
Կարծես գայլերի և յովազների
Ընտանիքի մէջ, անտառային թարմ
Հովերի տակը ծնւած լինէի:
Թւում էր ինձ, որ մարդկային լեզուն
Մուսացել էի—և որ իմ կրճքում

Այն սարսափելի ձայնըն էր ծնել,
 Կարծես թէ լեզուս հէնց մանկութիւնից
 Ուրիշ հնչիւնին չէր ընտելացել:
 Բայց իմ թշնամին սկսեց թուլանալ,
 Տատանւել, ապա դանդաղ շունչ քաշել.
 Եւ ամուր սեղմեց ինձ վերջին անգամ:
 Բիբերը նորա անշարժ աչքերի
 Մի անգամ ես կատաղի փայլով
 Բոցավառւեցին —
 Եւ յետոյ հանդարտ, մշտական քնով
 Յաւէտ փակւեցին:
 Նա յաղթահարեց թշնամուն—սակայն
 Երես առ երես հանդիպեց մահւան,
 Ինչպէս վայել է կուռում զինուորին:

XIX

Ահա տեսնում ես դու կրճքիս վերայ
 Սուր ճիրանների թողած խոր հետքեր.
 Նոքա դեռ ես չեմ առողջացել
 Եւ դեռ չեմ լցւել: Բայց հողի խոնաւ
 Ծածկոցը նոցա կը թարմացընէ,
 Եւ մահը նոյնպէս ընդ միշտ կը բուժէ:
 Վէրքերիս ցաւը այնժամ մոռացայ,
 Եւ, մնացած ոյժերս հաւաքելով,
 Անտառի խորքում սկսայ քայլել.
 Բայց իմ բախտիս հետ զուր էի կուռում
 Ինձ վերայ զազանի նա ծիծաղում էր:

XX

Ես դուրս եկայ խիտ անտառի միջից:
 Եւ ահա արդէն օրն էլ լուսացաւ,
 Եւ ճանապարհորդ աստղերի մի հոյլ
 Նորա շողերի մէջ անյայտացաւ:
 Միզապատ անտառն սկսեց խօսել,

Հեռու աուլը հանդարտ ծուխ անել.
 Հովտում քամու հետ խուլ հնչիւն անցաւ:
 Ես նստեցի և սկսայ լսել.
 Բայց հողմերի հետ նա ևս լռեց:
 Ես այն ժամանակ շուրջս նայեցի.
 Այն վայրը ծանօթ էր ինձ երևում:

Ես սարսափեցի—

Երկնի ժամանակ չէի հասկանում
 Որ կրկին բանտը յետ էի դարձել.
 Որ այնքան օրեր անօգուտ, ունայն
 Գաղտնի միտումս փայփայել էի,
 Համբերել, տանջւել, շարշարել էի,

Եւ ինչու համար:

Որպէս զի մատնող, ծաղիկ հասակում
 Դեռ հազիւ տեսած Ստուծոյ աշխարհն,
 Թաւուտ անտառի հնչող արտունջն

Դեռ հազիւ լսած,

Եւ հազիւ ազատ կեանքի քաղցրութեան
 Ճաշակըն առած՝

Ինձ հետ յաւիտեան, տանեմ գերեզման՝
 Թախիժը—իմ սուրբ հայրենիաց համար,
 Յանդիմանութիւն յոյսերի խաբւած,
 Եւ նախաօրինքը ձեր կարեկցութեան:
 —Դա մի սոսկալի երազ է—այդպէս
 Տարակուսելով խորհում էի ես.

Բայց յանկարծ անդորր լռութեան միջին
 Ջանգակի ձայնը լսեց վերստին—
 Եւ այդ ըոպէին պարզեց ամեն բան.

Օ՛, ձանաչեցի ես իսկոյն նորան.

Առաջին անգամ չէ նա հալածում

Անոջ տեսիլներ աչերից մանկան—

Քաղցր ծեղոներ և բարեկամներ,

Անսպասանների վայրի ազատ կեանք,

Կատաղանձ, թեթև, սրարշաւ ձիեր,

Սքանչելի կուխներ—ժայռերի միջին,
 Ուր չաղթում էի մենակ բոլորին:
 Ես լսում էի անզօր, անարցունք
 Այն ձայնը կարծես ուղիղ իմ սրտից
 Լինէր դուրս գալիս.
 Կարծես թէ մինը երկաթով ամուր
 Խփում էր կրճքիս:
 Եւ մութը կերպով ես այնժամ միայն
 Հասկացայ, որ էլ իմ հայրենիքում
 Ոտք չեմ գնելու
 Այլ ևս չաւիտեան

XXI

Այ՛ն, վիճակիս արժանի էի:
 Մի անապատով գնալիս, հզօր ձին
 Գետին զցելով իւր վաս հեծնողին,
 Կարճ և ուղղակի,
 Իւր հայրենիքի
 Կը գտնէ ուղին դեռ ևս հեռւից:
 Ի՞նչ եմ նորա մօտ:— Կուրճքս իզուր է
 Լեցում զանկութեամբ և լուռ վշտերով.
 Դա դատարկ, անզօր մի սաքութիւն է,
 Դա մտքի ախտ է, և խնդ զնորքի:
 Բանտը դրոշմել է ինձ իրա կնիքով.
 Այգպէս է և մութ ծաղիկը բանտի՝
 Բուսնում է մենակ,
 Եւ մընում զժողջն, խոնաւ քարերում.
 Եւ չէր արձակում երկար ժամանակ
 Ձահիլ տերեւներ,
 Այլ միշտ կենսատու շողերի սպասում:
 Անցնում են օրեր,
 Եւ մի բարի ձեռք վշտակցեց ծաղկին
 Եւ վարդենու մօտ—պարտէզ փոխադրեց:

Ուր ամեն կողմը շնչում էր կեանքի
 Բազցըրութիւնը:
 Բայց վերջը. — հազիւ արևը ծագեց,
 Նորա հրատապ և կիզիչ շողը
 Բանտում մեծացած ծաղիկը այրեց:

XXII

Նորա պէս, ինձ էլ այրում էր անգութ
 Օրւայ կրակը: Իգուր խոտերում
 Իմ յոգնած գլուխս թագցընում էի.
 Նորա չորացած թերթերը — փշեայ
 Պսակի նման — գալարում էին
 Արևից այրւած ճակատի վերայ.
 Գեանքը կրակ էր իմ գէմքին շնչում:
 Կայծերը արագ սրտուում էին
 Օգի մէջ բարձր, դէմը փայլելով.
 Սպիտակ ժայռերից շոգի բարձրանում.
 Խոր լուծեան մէջ Աստուծոյ աշխարհն
 Նիրհում էր քնով յուսահատ ու ծանր
 Գոնէ կանչէին լորամարդիներ,
 Կամ գէթ ճպուռի ճոխնչը լսէր.
 Եւ կամ առւակի թոթով մանկական
 Միմիայն օձը շողշողուն մէջքով,
 Կարծես թէ ծածկւած ողջ երկարութեամբ
 Մի երկխակալ սակեայ մակագրով,
 Անհիւթ, չոր խոտի նման շրջում էր.
 Փխրուն աւազը տակից ակօսում,
 Զգոյշ սողում էր:
 Ապա քնքշաբար խաղում էր վերան,
 Եւ գալարում էր օղեր կազմելով.
 Եւ մերթ էլ ջանկարծ այրւածի նման
 Վերեն էր թռչում,
 Դէս ու դէն ընկնում:
 Յետոյ հեռաւոր կորչում թփերում:

XVIII

Ամեն բան երկնում լուռ էր և պայծառ,
 Շողինների մէջ երկու մեծ լեռներ
 Հեռաստանումը սևին են տալիս:
 Մեր մենաստանի ժանկոր պատերն
 Փայլվում էին սարի ետեից:
 Քուռն ու Արագւան ներքերը նոյնպէս,
 Գրկած արծաթէ ժայաւէնի պէս
 Քարմ կղզիների լսոորոտները,
 Սիրով ու թեթև այնտեղ հոսում են,
 Ճեղքում շշնջող թփերի արմատներ:
 Շատ հեռու էի գտնւում նոցանից.
 Ուզեցի կանգնել—
 Առաջս ամեն ինչ արագ պտըտուեց.
 Եւ կամ թէ կանչել, —
 Սակայն լեզուս էլ, անձայն, չորացած՝
 Տեղից չը շարժուեց:
 Ես մեռնում էի. Մահւան մի անուրջ
 Չարչարում էր ինձ: Թւում էր կարծես
 Խոր գետի տակը պառկած էի ես.
 Մի խորհրդաւոր խաւար էր իմ շուրջ:
 Մշտական ծարաւս չագեցնելով
 Սառցէ հեղեղը, խոխոջուն ձայնով
 Ուզիդ իմ կրծքիս մէջն էր լցւում.
 Եւ միանց քնել վախենում էի,
 Այնպէս քաղցրը էր, այնպէս սիրելի:
 Իսկ իմ վերերը — աւելի բարձրում —
 Ալիքը շփւում էր ալիքի հետ.
 Եւ մաքուր ջրի բիւրեղի միջից
 Լուսնից էլ քաղցր արեգն էր փայլում:
 Նոյնպէս գոյնզգոյն ձկների վըտառ
 Շողերում երբեմն խաղում էր կայտառ:
 Յիշում եմ ահա նոցանից մէկը

Որը միւսներից աւելի սիրով
Գըգւում էր մօտից.

Նորա մէջքի վրայ ոսկէ թեփերը
Պսպղում էին արևի շողից:
Յաճախ պտըւում էր գլխիս վերայ.
Եւ նորա կանաչ աչքերի հայեացքն
Քնքոյշ էր, տխուր և խորաթափանց:
Եւ իմ զարմացման
Չըկար մի սահման,

Նա արծաթաձայն իւր հնչիւններով
Անտվոր խօսքեր շշնջում էր ինձ,
Նա և երգում էր և լսում նորից:

*
* *

Նա ասում էր. «Սիրուն մանուկ,
Մնա՛ աչտաեղ զու ինձ մօտ.
Չրում ազատ է մեր կեանքը,
Թէ հանգիստ է և թէ ցուրտ:

*
* *

Ես կը կանչեմ իմ քոյրերիս,
Մենք խաղալով միասին
Կ'ուրախացնենք մութ հայեացքդ,
Եւ թէ յոպնած քո հոգին:

*
* *

Քնիր, փափուկ է անկողինդ,
Թափանցիկ է քո վերմակ.
Եւ սքանչելի երազներում
Կ'անցնի երկար ժամանակ:

*
* *

Օ՛ սիրելիս, չեմ թաղցընի
Որ ես շատ եմ սիրում քեզ,

Ինչպէս ազատ հոսանք ջրի,
Սիրում եմ քեզ կեանքիս պէս:

Եւ երկար ժամեր լսում էի ես,
Եւ թւում էր որ կարկաչող հոսանքն
Իւր լռիկ մրմունջն խառնում էր կարծես
Խօսքերի հետը այն ոսկէ ձկան:
Եւ այստեղ ահա ես ինձ մոռացայ,
Ատուծոյ աշխարհն իմ աչքիս հանգաւ,
Եւ շուտով անմիտ զառանցանքները
Տեղի տւեցին մարմնի թուլութեան:

XXIV

Այդպէս ինձ գտան
Իսկ մընացածը դու գիտես արդէն,
Ես աւարտեցի: Կը հաւատաս այժմ
Խօսքերիս, թէ ոչ, — նոյն է ինձ համար.
Բայց վշտացնում է ինձ միայն մի բան,
Այն է՝ անմունչ, սառած դիակս
Հարազատ երկրում չը պէտք է նեխւի.
Եւ պատմութիւնը իմ տանջանքների,
Այս խուլ պատերում, չը պիտի գրաւի
Իմ անւան վերայ և ոչ մի մարդու
Ուշադրութիւնը տխուր, վշտալի:

XXV

Մընաս բարե, հայր... տուր քո ձեռք ինձ.
Դու զգում ես՝ իմն աչրում է կրակում.
Այդ բոցը, գիտցիր, մատաղ օրերից
Հուլեելով վաւում էր այս իմ կրծքում:
Բայց այժմ չկայ էլ չաղուրդ նորան,
Եւ իսպառ աչրեց իւր արգելարանն.
Եւ նա կը դառնայ դէպի նա նորից,

Ո՛վ որ բոլորին օրէնքի կարգով
 Թէ տանջանք և թէ հանգիստ է տալիս:
 Բայց ինձ ինչ գրանից: Թող սուրբ զըրախումս,
 Ամպերի մի ո կողմն եղած աշխարհում,
 Հոգիս իւր համար գտնի ապաստան—
 Աւանդ, մի քանի բոպէի հետ միայն,
 Անցրած մութ և թեք ժայռերի միջին,
 Մանուկ հասակում ուր խաղում էի,
 Յաւերժութիւն, գրախոն կս կը փոխէի:

XXVI

Ծերուկ, ես երբ որ մեռնելու լինիմ,—
 Հաւատան, շատ չես սպասի այդ ժամին,—
 Ինձ հրամայիր որ տեղափոխեն
 Մեր այգին, այնտեղ, ուր ծաղկում էին
 Երկու ձերմակ թուփ ախացիաների:
 Նոցա տակ այնքան թաւ, կանաչ է խոտն,
 Թարմ օդը այնքան է անուշահոտ,
 Այնպէս թափանցիկ և ոսկեգօծ են
 Արևի շողում շարժուող տերևներն.
 Այնտեղ, հրամայիր, ինձ համ զստացնեն:
 Ահա այնտեղից ես վերջին անգամ
 Կապուտակ օրւայ փայլով կարբենամ.
 Այնտեղից նաև Կովկասու շղթան

Կ'երևայ աչքիս

Ո՛վ գիտէ, գուցէ իւր կատարներից
 Հրաժեշտի ողջոյն կ'ուղարկէ նա ինձ,
 Ողջոյն գովաբեր, մեղմ քամիներով:
 Եւ մահիցս առաջ իմ շուրջը դարձեալ,
 Կը լսւի նորից հարագատ հնչիւն
 Եւ կը մըտածեմ որ կամ իմ եղբայրն
 Կամ մի բարեկամ, խոնարհած ախուր,
 Սրբեց ի՛ գէժքից ուշադիր ձեռքով
 Ասուն քրախնքը ողբալի մահւան,
 Եւ որ նւագում է իր մեղմ ձայնով
 Նա իմ սիրելի աշխարհի մասին.
 Ես հանգիստ կը քնեմ այս վերջին մտքով,
 Եւ չեմ անիծի ես էլ ոչ որին:

Ե Ր Գ Ե Ր

ՀԱՅՆԷԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

I

Կապոյտ աչերն—ասես մի զոյգ մանիշակ.
Փոքրիկ ձեռքերն—շուշանի պէս թարմ, սպիտակ.
Թշկներն շիկնած ու միշտ վարդազեղ—
Ահն՝ ձեզ մի փունջ շքեղ!

Նա ծաղկում է, նա փայլում է—և ուրախ
Միշտ արձակում անոյշ քրքիջ ու ծիծաղ.
Բայց փայլ չկայ մատաղ կուտի և՛ կրճքում—
Այնտեղ սէրը չի ծաղկում!

1893 թ. 15 ապրիլի

II

Շողշողում են անվերջ դարեր
Պայծառ աստղեր երկնքում,
Երկրին յառած փայլուն աչեր—
Մերթ խնդալից, մերթ տրտում:

Եւ նոքա միշտ ջերմ վառվառն
Զրոյց են անում իրար հետ.

Բայց չի մեկնել դեռ այդ լեզուն
 Ոչ մի հրմուտ լեզւագէտ:

Իսկ իմ սիրտը շուտ հասկացաւ
 Վառ սասողերի այդ բարբառ —
 Ինձ քերական հանդիսացաւ
 Քո հայեացքը բոցավառ. .

1893 թ. մայիսի 5-ին:

 III

Օ՛, սիրտ իմ, մի՛ լար և մի՛ վշտանար,
 Համարձակ նայիր բախտի երեսին!
 Ինչ էլ որ ձմեռն սպանէ անարդար,
 Կրկին կեանք կ'առնէ նորոգ Մայիսին!

Օ՛ւ տես աշխարհը որքան գեղանի,
 Որքան զարդարուն, գլրաւիչ է դեռ.
 Սիրիւր ինչ կուգես — քոնը կը լինի.
 Վարդ, ծաղիկ, ծիծաղ, երգ, համբոյր ու սէր!

1893 թ. մայիսի 8-ին

Մոսկւա:

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

(ՆՈՐԻՆԵԳԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ)

ՔՆՈՒՑ ՀԱՄՍՈՒՆԻՅ

Թարգմ. Մկր. Նաւասարդեանի

Այս պատահեց մի երեկոյեան պահին, սենեակում, մի անմար-
դաքնակ փոքրիկ քաղաքում, ոչ Նորեգիայում ի հարկէ, այլ՝ այս
միւնոյն է թէ որտեղ, կարճ աքաժ՝ աշնանային մի տաքուկ երե-
կոյեան, սրանից տասը տարի առաջ, 1883 թւին, սենեակումս
կատարեց այս: Մէջքս դէպի դուռը դարձրած ես մի զիրք էի
կարդում:

Վուրսը տիրում էր մի սաստիկ մութը գիշերս ես նստած էի
ու կարդում: Յանկարծ ոտնաձայն լսեցի, ես լսեցի պարզ կերպով
սանդուղքների վրա բարձրացող մարդու ոտնաձայնը և լսեցի նոյն-
պէս, թէ ինչպէս նա դուռս բաղխեց:

—Ներս համեցէք:—Բաց ոչոք ներս չի դալիս: Բացում եմ
դուռս, մարդ չկայ... Չանգալս հնչեցրի և աղախինս ներս մտաւ:

—Մեր սանդուղքի վրա հօ մարդ չբարձրացաւ:

—Ոչ. ոչ ոք չէ բարձրացել:

—Շատ լաւ, դէհ, գիշեր բարի:

Եւ աղախինս դուրս գնաց:

Ես վերստին նստեցի, որ ընթերցանութիւնս շարունակեմ:
Ահա, այն ժամանակ ես լսեցի մի շուռի, մի տեսակ շունչ, ինչպէս
մարդկային շնչառութիւն, և լսում եմ թէ ինչպէս մէկը շըշնջում

ինձ «Արի»: Յետ եմ նայում, մարդ չկայ: Շարունակում եմ կարգալ և ջգրիցս ասում եմ «սառանէն տանի քեզ»: Ես մէն մէնակ էի, բայց և այնպէս «սառանէն տանի քեզ»: ասեցի: Այն վայրկեանին տեսայ, որ կողքիս կանգնել էր մի դալկադէմ, շէկ միրուքով և մազերը փուշ-փուշ եղած մի փոքրիկ մարդ. այս մարդը ձախ կողմիցս էր կանգնել: Սա ինձ աչքով նշան արեց, որին ես միևնոյն նշանով պատասխանեցի. առաջ մենք իրարու երես երբէք տեսած չէինք և սակայն մենք միմեանց աչքերով նշան էինք անում: Յետոյ աջ ձեռքովս զիրքը ծալեցի և այն մարդը մօտենում է դռանը ու անհետանում է, ես աչքովս հետևեցի ու տեսայ թէ ինչպէս անհետացաւ նա: Տեղիցս վեր կենալով մօտենում եմ դռանը ու նորից լսում եմ միևնոյն շշուէջը «Արի»: Դէ՛հ լաւ. հագայ վերարկուս և կրկնակոշիկներս և դուրս գնացի: Լաւ կը լինէր, եթէ մի գլանակ վառէի, ասեցի ինքս ինձ: Եւ սենեակս վերստին ներս մտնելով մի գլանակ վառեցի: Մինչև անգամ շատ սիգառներ վերցրի հետոս: Աստժուն է միայն յայտնի թէ ի՞նչու այսպէս վարեցի, բայց ես արի այսպէս և դուրս ելայ:

Աննկարագրելի մութը գիշեր էր և բան չէի տեսնում. բայց զգում էի որ փոքրիկ մարդը մօտս էր: Ես ձեռքերս շարժում էի ամեն կողմը նրան բռնելու նպատակով ու վճռեցի այլ ևս չգնալ, եթէ նա չուզէր ինձ բացատրութիւն տալ. սակայն անըմբռնելի էր նա Փորձեցի յետ շրջւելով նշմարել նրան մթութեան մէջ, սակայն իզուր:

—Դէ՛հ լաւ, ասի ինքս ինձ, ես դուրս եկայ յօժար կամքովս և ոչ թէ քեզ համար. ես կամենում եմ զբօսնել: Խնդրեմ, լաւ հասկանաս, որ ես ուզում եմ զբօսնել և ուրիշ ոչինչ: Ես խօսում էի բարձրաձայն, որպէս զի նա խօսքերս լսէր:

Ես քանի մի ժամ շարունակ առաջ էի գնում: Նկատեցի, որ լայն տարածութեան վրա եմ մի անտառում ու զգացի թէ ինչպէս ծառերի ցողապատ ձիւղերն ու տերևները երեսիս էին զարկում:

—Ախ, բացականչեցի վերջապէս ժամացոյցս հանելով, կարծես ժամը քանի եղածն էի ուզում տեսնել, այժմ պէտք է վերադառնամ: Սակայն ես չդառնայ, անզօր էի վերադառնալ. այլ մի ոյժ ինձ գէպի առաջ էր մղում շարունակ:—Սակայն զեղեցիկ եղանակ է,

ասի ինքս ինձ, գեղեցիկ եղանակ է, այնպէս որ՝ դեռ ևս կարող եմ մի կամ երկու ժամ Կորնթեալ զբօսնել, ժամանակ ունեմ էլի:—Ես այս ասում էի, թէև յոգնած էի և ցօղից բոլորովին դռջւած: Մի նոր սիգառ վառեցի, փոքրիկ մարդը շարունակ կողք—կողք էր գալիս հետս, նրա շունչը ինձ դիպում էր: Եւ ես քայլում էի շարունակ առանց դադար առնելու, քայլում էի զանազան կողմերով բայց ոչ դէպի քաղաք: Արդէն ոտներս սկսեցին ցաւել, նրանք մինչև ծնկները թաց էին եղել, դէմքս այրւում էր ցօղից թաց եղած ճղների հարւածներից:

Ասում եմ ինքս ինձ.— կարելի է զարմանալի կը թւայ, որ ես գիշերով այստեղ թափառում եմ, բայց ես սովոր եմ այսպէս. այս սովորոյթս է մանկութիւնիցս իվեր զբօսանքներիս համար աւելի լայնատարած անտառներում շրջագայել զիշերներով:— Եւ բերանս ամուր փակած ես առաջ եմ գնում Գանկարծ աշտարակի ժամացոյցը հեռում, քաղաքի մէջ, զիշերուայ տասերկու սը զարկեց, մէկ, երկու, երեք, չորս... տասներկու զարկ. ես հարւածները համբեցի: Այս ինձ ծանօթ հնչիւնները ինձ ոգևորեցին, թէև ցաւեցայ, որ այսպէս երկարատեւ ընթացքից յետոյ շատ էլ չէի հեռացել քաղաքից: Բայց զնաս շունի ժամացոյցը հնչեցրեց տասներկու զարկ և տասներկուէրորդ զարկին փոքրիկ մարդը նորից առաջս տնկեց, բոլորովին տեսանելի կերպով, նայեց երեսիս ու ծիծաղեց: Կեանքումս երբէք չեմ մոռանայ նրան. նա աչքիս առաջ տնկեց բոլորովին յայտնի կերպով: Նա առաջին երկու ատամները կորցրել էր և ձեռները յետ տարած մէջքի վրա էր դրել: Նա ամբողջ մարմնով լուսափայլ էր և մի առանձին լուսակ էր ցոլում, որը կարծես թէ հէնց իրենից էր բղխում ու թափանցիկ դարձնում նրան: Հագուստը ցերեկայ պէս պարզ էր, վարտիկը մաշւած և չափազանց կարճ: Ես այս ամենը մի ակնթարթում տեսայ: Այս երևոյթը ինձ ապշեցրեց, սկամայից յետ ընկրկեցի մի քայլ և աչքերս փակեցի: Երբ աչքերս նորից բացի, մարդը անհետացել էր:

Ես ինձ տեսայ այս հինաւուրց աշտարակի մօտ կանգնած... մի աշտարակ, սև, ութանկիւնի, վերին աստիճան անշուք, որը Աթէնքի Հողմերի աշտարակին էր նմանուհի: Երբէք չէի լսել, որ այս անտառում մի աշտարակ կայ... Բայց, վերջապէս, ես կանգ-

նաճ էի այս աշտարակի առաջ, որտեղ նորից «Արի» խօսքը լսեցի և ես մտայ: Դուռը ետեւիցս բաց մնաց, և այդ մի որոշ չափով յուսայրեց ինձ:

Ներսին նախագաւթում ես դարձեալ տեսայ փոքրիկ մարդուն: Մի պատից կախուած էր փոքրիկ լամպարը և լուսաւորում էր, որի պատճառով ուզածիս չափ կարողացայ դիտել: Նա այնպէս դիմաւորեց ինձ, կարծես թէ երբէք այստեղից հեռացած չլինէր, ժպտեց երեսս ի վեր առանց մի խօսք ասելու և աչքերը վրաս չառեց ծիծաղելով. այն աչքերը ինձ թւում էին թէ լիքն են ամբողջ կեանքում վայելած ու տեսած դառնութիւններով: Այն աչքերը ինձ նշանացի արին, բայց ես չպատասխանեցի:

Ես չեա էի ընկրկում այնչափով, որչափ փոքրիկ մարդը մօտենում էր ինձ: Յանկարծ ես ետեւիցս թեթեքայլ ոտնաձայն լսեցի, յետ դառայ և տեսայ ինչպէս մի ջահել կրնամարդ ներս եկաւ:

Ես նրան նայում եմ և մի առանձին ցնծութիւն եմ զգում: Նրա մազերը շէկ, իսկ աչքերը սևորակ էին: Բայց և այնպէս լաւ էր հաղնւած: Նա ոտաբոբիկ էր քայլում սալարկի վրա. նրա թեւերը մերկ և անբիծ էին:

Նա գննեց մեզ երկուսիս մի վայրկենաչափ, գլուխ տւեց ինձ խորին կերպով և փոքրիկ մարդուն մօտենալով յետ քաշեց նրա հագուստները, սկսեց մի բան որոնել: Վերարկուի աստառի տակից դուրս քաշեց մի ցոլուն լոյս, վայրենի լուսով մի ջահիկ, որը իր մատի վրա ամբարցրեց: Այս լոյսը այն աստիճան փառահեղ էր, որ պատից կախած փոքրիկ լամպարը չքանում էր նրա առաջ: Մարդը շէր շարժում և անընդհատ կերպով ծիծաղում էր քանի որ աղջիկը որոնում էր:

—Գիշեր բարի, ասեց ջահել աղջիկը դուռը ցոյց տալով և մարդը, այս տարօրինակ, զարհուրելի հրեշը, դուրս գնաց: Ես մենակ մնացի այն աղջկայ հետ:

Աղջիկը կրկին խորին կերպով գլուխ տւեց ինձ ու առանց ձայնը բարձրացնելու, առանց ժպտելու ասեց.

—Մրտեղիցն ես գալիս:

—Քաղաքից, զեղեցիկ օրիորդ, քաղաքիցն եմ գալիս:

—Օտարական, ներկր հօրս, ասեց նա յանկարծ, ներկր նրան

և մեզ մի ֆեստիր. նա հիւանդ է, նա խելագար է, հօ տեսնը նրա աչքերը:

—Այն, ես նրա աչքերը տեսայ, պատասխանեցի ես. ես նրանց չարութիւնը զղացի ու նրանց հետեւեցի:

—Ո՞րտեղ պատահեցիր նրան:

Եւ ես պատասխան տւի.

—Ինձ մօտ, սենեակումս, որտեղ ես նստած կարդում էի:

Այն ժամանակ նա զլուխը շարժեց և աչքերը վար թողեց:

—Մի վշտանար սակաջն, սիրունիկ երեխայ, ասեցի նրան, ես յօժար կամքովս եմ անցել այսչափ տարածութիւն և քեզ տեսածիս պատճառով շատ ուրախ եմ: Այ, նայիր, ես դո՞հ և ցնծալից եմ. դէհ, ժպտիր դու ևս:

Բայց նա չժպտեց և ասեց.

—Կօշիկներդ հանիր. այս գիշեր քեզ անկարելի է այստեղից հեռանալ: Ես հագուստդ կը ցամքեցնեմ:

Նայեցի շորերիս, տեսայ որ թաց էին, կօշիկներս ջրով էին լցւել: Կատարեցի ինչ որ ուզում էր, կօշիկներս հանեցի և իրեն տւի: Երբ այս ամենը կատարեցի, նա լամպարը հանդգրեց ու ասաւ.

—Արի, բայց ձայն մի՛ հանիր:

—Մի քիչ էլ սպասիր, իմ գեղեցկուհի, ասեցի նրան բռնելով, եթէ այստեղ մնալու չէի, էլ ինչո՞ւ կօշիկներս հանել տւիր ինձ:

—Դու այդ չես իմանայ, ասեց նա:

Եւ ես չիմացայ այս:

Նա ինձ առաջնորդեց մի մութը սենեակ: Այստեղ ականջիս ոտնաձայն հասաւ, կարծես թէ մէկը մեզ հոտոտելով հետեւելիս լինէր. մի քնքոյշ ձեռք շրթունքներիս ըմբերանեց ու ջահել աղջկայ ձայնը լսելի եղաւ:

—Այս ես եմ, հայրիկ, օտարականը գնաց, գնաց:

Սակայն նորից զգացի, որ ծեր խելագարը մեզ հոտոտում էր:

Մենք մի սանդուղք բարձրացանք ձեռք ձեռքի տուած ու մեզ նից ոչ ոք բան չասեց:

—Ձայն մի՛ հանիր, շշնջեց նա, ահա անկողինս:

Եւ ես խարխափելով անկողինն էի որոնում:

Հանիր շորերդ հիմա, շարունակեց նա: Գիշեր բարի:

—Ո՛չ, մինն այտեղ, զեղեցկուհիս, ամենամանուշիկս: Ես հասկանում եմ թէ ինչ պատճառով կոշիկներս հանել տւիր. հայրդ չի իմանայ.— արի մօտս:

Բայց նա չեկաւ:

—Գիշեր բարի, կրկնեց նա ու մենակ թողեց ինձ...

Ես միայնակ էի. իսկ ինձ շրջապատող մթութիւնը ծանր էր և թաւշի նման թանձր: Ես յոգնած էի և ծնկներս զողզողում էիս: Խելագարը ինձ շրջեցրել էր ժամերով թաց արօտների մէջ և ասածնորդել էր ինձ ինչպէս մի անասունին միայն իր հայեացքի ոյժով և իր բարի, արխով: Մի ուրիշ անգամ ես նրանից ջահիկը կը խլեմ և գլուխն էլ կը կտորեմ: Բարկութիւնիցս մի զլանակ վառեցի ու պառկեցայ: Ես մնացի այսպէս բաւականին միջոց երկար ու ձիգ պառկած և զլանակիս լուսաւոր ծայրին էի նայում, երբ ներքևի դուռը ուժգնապէս փակեց, — վերջը ամեն բան լռեց:

Անցաւ տասը լույս. յանկարծ սենեակը լցւեց մի անսովոր շաշիւնով: Ես թիկնեցի և թողի որ սիգարս հանգչի, աչքերովս թափանցում էի մթութեան մէջ առանց այնտեղ բան կարողանալու տեսնել: Ես նորից պառկեցայ ու ակննջ էի դնում. և ինձ թւաց թէ ես հեռուից եկող ձայներ եմ լսում, երկնքի ամենաբարձր կետից իջնող և հազար բերանից բղխող մի հրաշալի և միանգամայն անուշ երգ: Այս նւագը շարունակում էր անընդհատ, մօտեցաւ աւելի և հնչում էր իմ վերևում, աշտարակի տանիքից վերևը: Ես նորից թիկնեցի Փոքրիկ ու լուսասփիւս էակների մի ամբողջովին սպիտակ յորձանք թափեց վրաս. հրեշտակներ, բերաւոր հրեշտակներ ներս էին հոսում հեղեղի նման ինչպէս լոյսի մի շառաւիղ և սենեակը լցնում էին, կարծես թէ ալիքներ լինէին: Նրանք չատակից սկսած մինչև դմբեթը ծփում են ալիքանման ու երգում, երգում՝ նրանք մերկ են և ձերմակ: Սիրտս զաղարեց բաբախելուց. բոլոր տեղերը հրեշտակներով էին լցւել: Ակննջ եմ դնում և լսում եմ նրանց երգեցողութիւնը. նրանք չիսլչում են կոպերիս, նստառում մազերիս վրա և նրանց կիսաբաց փոքրիկ շրթունքներից բուրոզ քաղցր բոյրով տոգորւած էր սենեակի օդը:

Բազուկիս վրա թիկնած՝ ես ձեռքս մեկնեցի նրանց, որոնցից եօթը հաս եկան և վրան նստեցին. սրանք ձեռքիս վրա եօթնաս-

տեղեան կենդանի համաստեղութիւն էին կազմում: Սակայն ես թե-
քում եմ նրանց աչքերում նայում. տեսնում եմ որ լոյսից զուրկ
են: Ձեռքիցս թողնում եմ այս եօթ կոյրերին և բռնում եմ նրան-
ցից մի այլ եօթը հատ, սակայն սրանք էլ կոյր էին: Աւաղ, բո-
լորն էլ կոյր էին: Ամբողջ աշտարակը լցւել էր կոյր հրեշտակնե-
րով, որոնք երգում էին:

Ես մնացի անշարժ և համարեան թէ շնչարգելեցայ այս բանը
տեսնելով և այս կոյր աչքերի պատճառով մի կսկծեցուցիչ խայթ
հոգիս թափանցեց:

Անցաւ մի վայրկեան. անկողնումս մեկնւած՝ ես սկանջ էի
չնում և լսեցի ծանր հարւածի մի ձայն երկարատև, հեռուից լըս-
ւող: Ես այն ձայնը այնպէս մի ուժգին և պարզ կերպով լսեցի, որ
միևնոյնը շատ երկար միջոց արձագանգում էր իմ մէջ. այս էր
քաղաքային ժամացոյցը, որ զարկում էր, ժամը մէկն էր զարկում:

Այս միևնոյն ակնթարթում հրեշտակների երգասացութիւնը
դադարեց: Ես տեսայ թէ ինչպէս նրանք միատեղ հաւաքւեցին և
դէպի տանիքը թռան շտապով միմեանց կպելով հեռանալու նպա-
տակով և այնպէս մաքուր լոյսի մի ճառագայթ: Դուրս թռչելուց
առաջ նրանք բոլորն էլ երեսները իմ կողմը դարձրին: Վերջին
հրեշտակը դարձրեց վերջին անգամ իր կոյր աչքերը դէպի ինձ և
թռաւ դուրս:

Սրանից յետոյ ամեն ինչ մթնեց. ես նորից ընկայ անկողնիս
վրա և քնեցի:

Երբ ես զարթեցայ արևը արդէն վաղուց էր ծագել: Սենեա-
կումս ես միայնակ էի, իսկ շորերս ինձնից ոչ հեռու գետնի վրա
էին թափւած. ես շոշափեցի շորերս, թաց էին դեռ ևս բայց և
այնպէս ես հագայ: Յանկարծ դուռը բացւեց և երէկւայ ջանել
աղջիկը երևեց ինձ:

Նա ինձ մօտեցաւ ու ես հարցրի նրան.

— Ինչպէս տփուցն ես, գեղեցկուհիս, գիշերը սրտեղ անցկացրիր:

— Վերևը, եղաւ պատասխանն և մատնացոյց արեց դէպի աշ-
տարակի առաստաղը:

— Ձես քնել այնտեղ:

— Ոչ, ես չքնեցի. ես հսկում էի:

—Բայց լսեցիր արդեոք այս գիշերուայ նւագածութիւնը, հարցրի ես Ես մի սքանչելի նւագածութիւն լսեցի:

Եւ նա պատասխանեց.

—Այո՛, ես էի երգում:

—Դ՞նչ էիր: Ասա, իմ հրեշտակ, միթէ դուն էիր:

—Այո՛, ես էի, պատասխանեց նա և ձեռքիցս բռնելով ասեց.

—Դէ՛հ, արի. ես քեզ կ'ուզեկցեմ մինչև այն կէտը, որ տեղից պէտքէ գնաս:

Եւ մենք դուրս ելանք աշտարակից, ձեռք ձեռքի տւած, դէպի դուրս, անտառի մէջ: Արևը շողշողեցնում էր սրա ոսգեզօծ մազերը և սևորակ աչքերը փայլում էին վեհաբար:

Ես նրան ընդդրկեցի ու ճակտից երեք անգամ համբուրեցի, յետոյ նրա ոտների առաջ ընկայ: Գողզոջ ձեռներով նա քակեց իր վրայից մի սև ժապուէն և բլակիցս կապեց, բայց այս անելու միջոցին նա յուզւած արտասուում էր:

Ես հարցրի.—Ի՞նչի ես լալիս: Ներիր ինձ, եթէ քեզ վշտացրել եմ:

Բայց նա միայն այս պատասխանը տւեց.—Կարողանում ես քաղաքը տեսնել:

—Ոչ, պատասխանեցի ես, չեմ կարողանում տեսնել քաղաքը: Բայց դու, դու կարողանում ես տեսնել:

—Կանգնիր ոտիդ վրա և առաջ գնանք, ասեց նա:

Եւ մենք շարունակեցինք միևնոյն գեծանով առաջ գնալ փոքրիկ բլուրների վրա բարձր ու ցածր անելով: Նորից կանգ առնելով ես նրան կրծքիս վրա սեղմեցի ու ասեցի.

—Ո՛րքան ցնծութիւն ես պատճառում ինձ քեզանով, որ աստիճան երջանկացնում ես ինձ:

Եւ նա նոյնպէս ստուռաց դրկիս մէջ թւապատ. սակայն նա այս ասեց միայն.

—Այժմ ես պէտք է տեղս վերադառնամ: Հիմի հօ լմւ ես տեսնում քաղաքը:

—Այո՛, պատասխանեցի ես: Դուն էլ ես լաւ տեսնում հօ, դուն էլ:

—Ոչ:

—Ի՞նչ պատճառով ոչ:

Նա յետ ընկրկեց ու մեծ-մեծ բացած աչքերով ինձ նայեց և հեռանալուց առաջ նա նորից խոնարհ գլուխ տւեց: Քանի մի քայլ անելուց վերջը նա յետ շրջեց միանգամ և ինձ նայեց:

Եւ այն ժամանակ էս տեսայ նրա աչքերը. տեսայ որ նրա աչքերն ևս կոյր էին...

Տասներկու ժամ անցաւ այն ժամանակ, ուրեմն, որոնց մասին չեմ կարողանում հաշիւ տալ ինձ, այն ժամերի մասին, որ ես կորցրել եմ: Ես չգիտեմ թէ ո՞ր էն գնացել. սակայն ես շատ անգամ եմ գլխիս ամուր զարկել ու ինքս ինձ ասել.

—Հարցը տասներկու ժամերի մասին է, որոնք այստեղ մի քնջում թագնւել են. նրանք թագնւել են և անհրաժեշտ է վերստին գտնել նրանց: Բայց երբէք չեմ գտել ես նրանց...

Գիշեր է դարձեալ, մի մութ և գաղջ աշնանային գիշեր: Նստած եմ սենեակումս ձեռքիս մի գիրք բռնած: Նայում եմ կօշիկներին, տեսնում եմ թաց են. նայում եմ բլակիս, մի սև ժապաւենով է կապած:

Ես զանգահարում եմ աղախնիս և հարցնում, չկան արդեօք մեր շրջակայքում, քանի մի քայլ հեռու գտնող անտառի մէջ մի սև ութանկիւնի աշտարակ:

—Այո, մի աշտարակ կայ:

—Մէջը բնակւում են:

—Այո, մի մարդ է բնակւում մէջը. սակայն նա խելագար է. նրան Ֆեօ-Ֆոլլէ ¹⁾ (Feu-Follet) են կոչում: Եւ այս Ֆեօ-Ֆոլլէն ունի մի աղջիկ, որը նոյնպէս այնտեղ է բնակւում: Այս երկուսից աւել էլ ուրիշ մարդ չկայ այնտեղ:

¹⁾ Feu follet ֆրանսիացիք անւանում են այն առկաջող լուսերին, որոնք երբեմն-երբեմն երևում են ձախձների երեսին. իսկապէս լաւաջանում է ձախձի ֆոսֆորալին ջրածնի ինքն ըստ ինքեան բոցավառելուց: Այս լուսը երևում է նաև գերեզմանատներում և այն տեղերում, որտեղ օրգանական մարմիններ սկսում են փլթել. ահա այս փթուովից է առաջանում այն լուսը, որը տգէտ և ռամիկ ժողովուրդը երկնքից եղած լուս է համարում: Հայերէն ասում է շրջմուլիկ հուր, մուլի հուր:

—Շատ լաւ, դէհ, բարի զիշեր: Եւ ես պառկեցայ քնելու: Եւ միւս օր, առաւօտեան շատ կանուխ ես գնում եմ անտառը, անցնում եմ միւսնոցն զեծանով, տեսնում եմ միւսնոցն ծառերը և մօտենում եմ աշտարակին: Մերձենում եմ դռանը, սիրտս դադարում է բարբախելուց: Գիտնի վրա տարածւած է ջահել կոյր աղջիկը ջախջախւած, անշունչ... Նա ընկած է այնտեղ բերանը կիսաբաց, իսկ արեգակը լուսաւորում է նրա մոլշգ կարմիր մազերը: Եւ աշտարակի վերևում սրա հագուստի մի պատառ, որը ամուր կպած է մնացել այնտեղ, ծածանում է. իսկ վարը, խիճերի վրա, այն փոքրիկ մարդը, նրա հայրը, պտտւում է դիակի բոլորի շուրջը: Փոքրիկ մարդու կուրծքը կծկւում ու խուլոտ հառաչանքներ է արձակում. և նա ուրիշ ոչինչ չէ անում, բացի դիակի չորս կողմը պտտելուց և խուլոտ աղաղակներ արձակելուց:

Նրա զարհուրելի հայեացքը, որը ինձ վրա զարձրեց, սասանեցրեց ինձ ու փախաչ դէպի քաղաք: Այն օրից ի վեր երբէք չեմ տեսել նրան:

Զ Գ ՈՒ Ե

Շ Ա Ն Թ Ի

Եկհոր ըսէ ինչո՞ւ այդպէս
Կը սեղմես դուն ձեռքքս ծածուկ.
Հեշտութիւն մը արգեօք կ'ըմպես
Գիւրին, անմեղ ու վաղանցուկ:

Թէ այդ քու գիրգ թաթիգ սիրուն
Սովորութիւնն է անտարբեր,
Ու նոյն շեշտով դու նոյն պահուն
Վեցեակ մը ձեռք կըրնաս սեղմեր:

Բայց ո՞վ գիտէ, գուցէ տենչոտ
Անգուսպ սիրտ մը ունիս, ինձ պէս.
Եւ հեշտանքի, յուզման կարօտ
Ձրգիտես իսկ, թէ ինչ կ'ընես:

Թէ պարզ խազի համար նետուած
Այդ խաչձ մըն է շարածը՞ծի.
Ու կուշտ խընդաս պիտի՞ յանկարծ
Եթէ սիրտըս կարթիւ կառչի:

Բայց, չնոր աղջիկ, ըզգուշացի,
Այդ սրբտին հետ շատ խաղալէն,

Թէ չէ երկար, անշուշտ, չանցնիր
Կը սարսափիս քու կատակէն:

Մի. քարայր մըն է հողիս անհուն,
Խոր, անթափանց ու սիրայեղ,
Ուր ամեն մի չընդին հըծծիւն
Խուլ արձագանդ կու տայ անեղ...

Վ. Պոլիս, 1892 թ. դեկ. 27:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

X

ԼԵՒՈՆԸ ՍՄԲԱՏԻՆ

Սիրելի Սմբատ! Ստացել եմ վերջին երկու նամակներդ և, ինչպէս միշտ, կարդացել եմ հետաքրքրութեամբ: Դու, իհարկէ, զարմացած կ'լինիս, որ այսքան ժամանակ է չեմ պատասխանում: Մի զարմանալ, հոգեակս, լուծեանս պատճառը տկարութիւնս էր: Այժմ ես կատարեալ առողջ եմ և լիաջոյս, որ նախկին եռանդով կը շարունակենք մեր նամակագրութիւնը:

Քո նամակների տպաւորութեան տակ շատ մտքեր և խորհրդածութիւններ չղացան իմ գլխումս և շտապում եմ ահա քեզ հարդակից անել նոցա:

Վերջընթեր նամակովդ դու նկարագրել էիր հայերէն լեզւի դասաւանդութեան եղանակը, որ հին է և սխալատիկական: Մայրենի լեզւի վիճակը մեր միջնակարգ դպրոցներում առհասարակ աննախանձելի է: Հինգ տարի շարունակ աշակերտի գլուխը լցնել գրաբարի հազար ու մէկ կանոններով, բացառութիւններով, նրբութիւններով, և միևնոյն ժամանակ կատարեալ արհամարանքի մատնել մեր այժմեան աշխարհիկ լեզուն, դա սարսափելի է: Անշուշտ, մեզքը ընկնում է ոչ այնքան դասատուների վերայ, որոնք կարող են լինել լաւ, որքան այդ աւարկայի ծրագրի կամ աւանդութեան վերայ: Ծրագիրը կամ աւանդութիւնը այդ է պահանջում սկսած երկրորդ դասարանից մինչև վեցերորդը պէտք է անցնել

գրաբար, գրել գրաբար շարադրութիւններ, կարգալ հին մատենագիրներին—Մեր միջնակարգ դպրոցներում գրաբարը կատարեալ իշխում է:

Գրաբարը կատարելագոյն իշխում էր նաև մեր գրականութեան մէջ դարեր շարունակ: Աշխարհիկ լեզուն չէր համարձակել ծպտուն հանել գրականութեան մէջ, չնայելով, որ հէնց այդ աշխարհիկ լեզուն էր մեզ ժողովրդի հոգու ամենհարազատ արգիւնքը և հանրամատչելին:

Անցան դարեր, վերածնեց և նոր կեանք ստացաւ վերջագոյն հայի միտքը: Ժողովրդի մէջ տիրապետող խաւարը և ագիտութիւնը, գրաբարի իշխանութեան դարերում, զարհուրելի էր: Ով լաւ մտածեց, նա տեսաւ, որ ժողովրդին գիտակցական կեանքի կոչելու և լուսաւորելու միջոցն էր նախ և առաջ խօսակցական կենդանի լեզուի գրականական գործածութիւնը:—Եւ ան ապտերազմ յայտարարեց աշխարհաբարի և գրաբարի մէջ:

Սուր սուր գրիչները, նետերի սլէս, գրաբարի կուրծքը խոցոտեցին, և չնայելով իւր զօրեղ դիմադրութեանը, տապալեց և ընկաւ, հառաչելով, ինչպէս դարաւոր կաղնի, որ, չկարողանալով դիմանալ սղոցի ատամներին, ճռնչելով և ծանր ընկնում է գետին և, գետին ընկնելով, կտորատում իւր չորացած ճիւղերը և ոստիկները: Ուրիշ ինչ էր մնում այդ ժամանակ գրաբարին, եթէ ոչ հաւաքել իւր ունեցած շունեցածը և հեռանալ գրականական ասպարիզից, իւր իշխանութիւնը ջանձնելով աշխարհաբարին, որ հիմա անում, ծաղկում, նոր ոյժ է ստանում, և որի զարգացմանը հետա մնալ է այժմ ամեն մի հայ դրող:

Իսկ յաղթողները այնքան երախտագէտ էին և խելացի, որ չկամեցան իսպառ ջնջել գրաբարի իշխանութիւնը: Նոքա թոյլ աւին, որ նա մնաց դպրոցներում: Ինչ կարող էին անել այն ժամանակ իրանց աշխարհաբարով, երբ աշխարհաբարը դեռ հազիւ հազ կարողանում էր թօթովել, երբ աշխարհաբար մի հատ դաստիարակ չկար, երբ ոչ Ռաֆիկի կար, ոչ Պատկանեան, ոչ Մերենց, ոչ Պարոնեան, ոչ Սոււդուկեանց? Այն օրերից մինչև մեր օրերը տասնեակ տարիներ են անցել: Աշխարհաբարը այժմ հասել է զարգացման մի որոշ աստիճանի, հարստացել է բառերով, դարձւած-

ներով, կոկեւել շտկեւել է, և դեռ, իհարկէ, պիտի զարգանայ, հարտանայ բառերով և դարձեալներով և անվերջ պիտի շտկուի և կոկուի, քանի որ գոյութիւն կ'ունենայ:—Այժմ երևան են եկել մի շարք հեղինակներ, որոնք խօսում են ուղղակի մեր մաքի և հոգու հետ: Աշխարհաբարը այժմ ոչոք է զգում իւր մէջ և համոզուած է, որ դպրոցներում ինքն էլ կարող է իւր պատելի տեղն ունենալ, և ահա ինչու նա դիմում է զրաբարին և քաղաքավարի կերպով խնդրում, որ իւր իշխանութեան մի մասը զիջանի իրան:

—Ես չեմ պահանջում, —ասում է երիտասարդ աշխարհաբարը, — որ դու, յարգելի զրաբար, բոլորովին թողնես մեր դպրոցները. քաւ լիցի: Միայն խնդրում եմ, որ իշխանութեանդ կէսը ինձ տաս, այսինքն՝ եթէ այժմ դու շաբաթական քսան ժամ ես իշխում, այսուհետեւ իշխիր միայն տասը ժամ, մնացած տասը ժամը թող ես իշխեմ:

—Դա անկարելի է, — պատասխանում է զրաբարը հպարտութեամբ իւր ձերմակ գլուխը թափահարելով:

—Բայց ինչու?

—Ինչու? Արովհետեւ ես շատ զարգացած եմ, հարուստ եմ բառերով և դարձեալներով և...

—Գիտեմ, գիտեմ, — ընդհատում է աշխարհաբարը, — ես այդ չեմ ուրանում: Բառերի և դարձեալների հարստութեան կողմից դու անսպառելի գանձ ես. և այդ գանձից ես միշտ օգտուել եմ, այժմ էլ օգտուում եմ, և դեռ երկար ժամանակ պիտի օգտուեմ: Բայց ես կարծում եմ, որ այնքան էլ աղքատ և անճոռնի չեմ, որ չհամարձակեմ քեզ հետ հաւասար իրաւունք վայելել դպրոցներում:

—Ինչ պիտի անես դու դպրոցներում? Ինչ ունիս, որ ինչ հազորդես աշակերտներին? Ես ունիմ դարաւոր գրականութիւն և անթիւ անհամար մատենագիրներ՝ Մովսէս Խորենացիի, Եղիշէի, Փարպեցիի, Եզնիկի, Փաւստոսի, Դաւիթ Անյաղթի:

—Իրաւ, ասաց աշխարհաբարը, հակառակ ծայրը բռնելով, դու ունիս դարաւոր գրականութիւն, բայց իմ կէս դարու գրականութիւնը, որ իմ պարծանքն է, չեմ փոխիլ քո հազար հինգ հարիւր տարւայ գրականութեան հետ: Եւ ինչ ես պարծենում քո մատենագիրներ:

րով? Դու ունիս Մովսէս Խորենացի, Եղիշէ, Փարպեցի, Եզնիկ, Փաւստոս, Դաւիթ Անյաղթ, իսկ ես ունիմ—Նալբանդեան, Պատկանեան, Շահազիզեան, Ռաֆիի, Մերենց, Պեշիկթաշլեան, Պարոնեան, Սունդուկեան...

—Դու համարձակու՞մ ես համեմատել այն պատկառելի, այն հրաշախօս, այն սուրբ մատենագիրներին այդ թշուառ նորելուկների հետ?

—Խնդրե՛մ,—ասաց աշխարհաբարը, իւր զայրոյթը զսպելով,— խօսիր ինձ հետ քաղաքավարի, այնպէս, ինչպէս ես եմ քեզ հետ խօսում:

—Օ՛, ապերսոյս զաւակ!...

Սիւ ելի Սմբատ! գիտե՛մ դու շէս նեղանալ, որ լուրջ ինդրին կատակի ձև տւի: Որքան լուրջ խօսէի, դարձեալ պիտի ասէի նոյնը, ինչ որ ասացի կատակի ձևով: Ի՞մ ասածը սա է. մայրենի լեզուի դասաւանդութիւնը մեր դպրոցներում միակողմանի է. դրաբարը և հին մատենագրութիւնը անհրաժեշտ է անցնել մեր դպրոցներում, բայց անհրաժեշտ է նոյնպէս անցնել աշխարհաբարը և նոր մատենագրութիւնը: Գրաբարի լիակատար իշխանութիւնը մեր միջնակարգ դպրոցներում—մեր ժամանակաց անսխրոնիզմներից մէկն է:

Անա այսպիսի մտքեր չզացան իմ մէջ, երբ կարդացի քոնախովերջին նամակը: Վերջին նամակովը նկարագրում ես ձեր դպրոցի բարք ու վարքի անկումը: Այդպէս էլ պէտք է լինէր վաղ թէ ուշ: Կրակոնի կրթական աշխարհայեացքը հիմնւած է երկու սիւնի վերայ, որոնք են—երկիւղ և բռնութիւն: Աւելի խախտւա հիմք դժուար է երևակայել: Այն բոլորը, ինչ հիմնւած է երկիւղի և բռնութեան վերայ, պիտի կործանուի: Երկիւղից և բռնութիւնից ծնւում են ստրկութիւն կամ ըմբոստութիւն—երկուսն էլ կործանի: Այդ օրէնքին ենթակայ է թէ ընտանիք, թէ դպրոց, թէ նոյն իսկ տէրութիւն:

Հայրը, որ իւր ընտանիքի անդամներին պահում է մշտական երկիւղի մէջ իւր անձի վերաբերմամբ և կառավարում է բռնութեամբ, պիտի պատրաստէ կամ բթացած ծեծւած զաւակներ կամ ըմբոստ և անպատկառ որդիք: Նոյնը կարելի է ասել և կառավարիչների և հպատակների մասին: Անա արիւն ցանեց, արիւն էլ պի-

տի հնձէրոյ, այդպէս է ասում Հեռոնները, երբ խօսում է Փրանսիայի մի պետական անձի մասին իւր «XVIII-րդ դարու գրականութեան պատմութեան» մէջ:

Գանք այժմ մեր դպրոցին:

Մեր դպրոցական կեանքից ես կամենում եմ քեզ հաղորդել մի նորութիւն գրականական երեկոնների մասին: Երկու շաբաթ առաջ մեր մանկավարժական ժողովը մշակեց կանոններ գրականական երեկոնների համար, որոնց մէջ որոշւած են նախ երեկոնների նպատակը և ապա նոցա ղեկավարելու ձևը: Նպատակը որոշւած է այսպէս. «ընտելացնել աշակերտներին ինքնուրոյն աշխատութեան և զարթեցնել նոցա հոգոյ մէջ հարցասիրութիւն»: Գրականական երեկոններ պիտի լինին երկու տեսակ. մէկը՝ ընդհանուր, բոլոր աշակերտների համար. միւսը՝ մասնաւոր, միայն բարձր դասատանների աշակերտների համար:—Առաջին տեսակի երեկոնները (կամ առաւօտները) խառը և հանրամատչելի բնաւորութիւն ունին. կարդում են շարադրութիւններ, բանաստեղծութիւններ, երգում են խմբով և solo: Այդպիսի երեկոնների նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ հոգեկան ազնիւ զւարճութիւն պատճառել սաներին, մի հանգամանք, որ անգիտանում էին միայն միջնադարեան սխոլաստիկները և մեր օրերում նոքա, որոնք կարծում են, թէ դպրոցը մի այնպիսի հիմնարկութիւն է, որտեղ երեխաները հաւաքւում են թւերի հետ զանազան գործողութիւններ կատարելու, զբաքար քերականութիւնը անգիր անելու, համետութեան և երկխօսի մէջ հոգին վարժեցնելու, և ուրիշ այս տեսակ բաներ սովորելու և ապա հինգերով զարգարւած վկայականով ուսման ընթացքը աւարտելու:

Այսպիսի երեկոններ (կամ առաւօտներ) կ'լինին գլխաւորապէս եկեղեցական և ազգային ասոներին և դպրոցի տարեգարձին: Ինչ վերաբերում է երկրորդ տեսակին, այսինքն այն երեկոններին, որոնք յատկապէս բարձր դասարանների համար են, պիտի կազանան աւելի յաճախ, երկու շաբաթը մի անգամ: Այս տեսակ երեկոնների նիւթը առնւում է գրականական և պատմական աւարկաններից, իսկ ղեկավարներ ընտրւում են գրականութեան և պատմութեան դասատուներից: Բայց գրականական երեկոնների մասին ես դեռ չեմ կամենում երկարաբանել: Այդ խնդիրը դեռ ևս շատ նոր է մեր դպրոցի

համար: Երբ մի քանի անգամ կ'կայանան այդպիսի երեկոներ, ես կը շտապեմ հաղորդել քեզ իմ սպաւորութիւնները:

Ք ո Լ և ո ն:

XI

ՍՄԲԱՏՐ ԼԵՒՈՆԻՆ

Սիրելիս, վերջապէս ստացայ նամակդ, որին երկար ժամանակ է սպասում էի: Ես միանգամայն համաձայն եմ քո այն մտքերի հետ, որոնք վերաբերում են մայրենի լեզուի և զրականութեան դասականութեան: Բայց միայն այդ չէ մեր թեմական դպրոցների ծրագրի թերութիւնը: Ներկայ ծրագիրը կարօտ է առհասարակ բարեփոխութիւնների: Կան առարկաներ, որոնց դասընթացքի ծաւալը պէտք է ընդարձակել, կան առարկաներ, որոնց ծաւալը պէտք է սղել, կան այնպիսիները, որոնց պէտք է տեղափոխել մի դասարանից մի ուրիշ դասարան, կան և այնպիսիները, որոնք պիտի մոճեն ծրագրի մէջ իբր նոր առարկաներ:—Դա, ի հարկէ, ծանրակշիռ խնդիր է, որով ես չեմ կամենում զբաղել ներկայ նամակովս: Այդ թողնե՛ք ապագային:—Աւելի լաւ է զրեւմ դարձեալ մեր դպրոցի կեանքից: Գիտեմ, քեզ այդ հետաքրքրում է:

Մեր դպրոցն էլ, հօ գիտես, օրէցօր առաջադիմում է... իւր անկման ճանապարհի վերայ: Դրակոնի մտցրած ուեժիմը աչստեղ հաստատուում և խորը արմատներ է ձգում: Ուսուցիչների հայեացքները համակերպւում են տեսչի աշխարհայեացքին, վերակացուները համակերպւում են ուսուցիչներին, ծառաները—վերակացուներին. աշակերտների մի մասը կորցրել է արգէն իւր անհատականութիւնը, մի կողմ է զրել իւր սեփական «եսը», դարձել հեղ և խոնարհ—Աստճոյ գառներ! Բայց մեծագոյն մասը դարձել է դպրոցի սարսափը և տիրապետող կարգ ու կանոններին զիմադրող մի ոյժ: Դիտելու և ուսումնասիրելու բան է այն հանգամանքը, որ Դրակոնի ընդհանուր ուղղութիւնը արտայայտուում է նոյն իսկ դպրոցական կեանքի ամենաչնչին երևոյթների մէջ: Վերցնենք, օրինակի համար, թւանշանների խնդիրը, որը, սակայն, միայն ըստ երևոյթին չնչին խնդիր է: Թւանշաններ առհասարակ պիտի լինին թէ ոչ, այդ թողնում եմ մի կողմ: Բայց երբ մի անգամ

ընդ միշտ ընդունւած է մեր դպրոցներում հնգանշան սխտեմը, առողջ դատողութիւնը պահանջում է այդ սխտեմի կանոնաւոր և խելացի գործածութիւնը: Թւանշանները արտայայտիչ պիտի լինին աշակերտների իսկական գիտութեան: Սակայն մեր դպրոցում այդպէս չէ: Իրակոնը ասել է. «չլինի հինգ թւանշանը!» և ահա ուսուցիչներից շատերը այլ ևս հինգ չեն նշանակում, թէկուզ աշակերտը պատասխանէ գերազանց, գիտակցաբար, և այնպէս լաւ, որ ուսուցիչը ինքն էլ զարմանաց: Քանի որ թւանշաններին այնքան մեծ նշանակութիւն են տալիս ուսուցիչները, աշակերտներն էլ բնականաբար այդպէս կը վերաբերեն: Հինգ կամ հինգ ու խաչ թւանշանը քաջալերում է աշակերտին և աւելացնում է աշխատելու եռանդը, իսկ երբ աշխատանքը ըստ արժանւոյն չէ վարձատրւում, չէ խրախուսւում, հոգու եռանդը, հասկանալի է, պիտի պակսի: Թւանշանների սխալ գործածութիւնը այդպէս է ազդում (մանաւանդ ստորին դասարաններում) լաւագոյն և ընդունակ աշակերտների վերայ: Միջին ընդունակութիւն ունեցող աշակերտները, որոնք զրկւած են ընդ միշտ հինգ կամ չորս ստանալուց, կամայականաց աշխատում են այնքան, որքան հարկաւոր է, որպէս զի դասարանները փոխեն, ծնողների աւաջ սեւեռես չմնան և ետ չմնան ընկերներից: Այդպիսիները կազմում են դասարանի մեծ մասը: Գոցաբնաւորութեան վերայ ևս վատ դրոշմ է թողնում թւանշանների խիստ ժլատ կամ անկանոն գործածութիւնը: Այդպիսիներից ամեն մէկը գառնում է մոլերացկան, որ, չտեսի պէս, դասարանում կամ դասարանից դուրս ուսուցչի ետեւից ընկած, աղաչում է, պաղատում, իւր կոկորդիցը բռնում, թէ ինչ է, ուսուցիչը պակաս է դրել, ինքը լաւ պատասխանեց, թող գոնէ մի խաչ աւելացնի կամ ջնջի մինուսը (հանածը): Արժէ ներկայ լինել մեր դպրոցում այն բոպէին, երբ դասամիջոցի զանգը տալիս են, և ուսուցիչները դուրս են գալիս դասարաններից. աշակերտները խումբ-խումբ այս կամ այն դասատուին շրջապատած, ժպտալով կամ լալով քայլ առ քայլ հետեւում են նորան մինչև ուսուցչանոցի դուռը, և իսկ և իսկ մուրացկանների պէս աղաչում:

—Պարոն, մի խաչ աւելացրէք, պարոն ջան, հանածը ջնջեցէք. պարոն, խնայում եմ. պարոն ջան, աղաչում եմ...

Թւանշանների ժլատ և անկանոն գործածութիւնը մանաւանդ փնտախար ազդեցութիւն է անում ծոյլ և թոյլ աշակերտների վերայ: Այդպիսիները կամ միանգամայն թողնում են դաս սովորել և դաս պատասխանել ասած բանը և բոլորովին անտարբեր դառնում զէպի Տիաւորները և զրօները, կամ, որ աւելի վատթար է, դառնում են վերին աստիճանի յանդուգն, անամօթ և անպատկառ:

— Պարոն, ինչու ինձ միաւոր նշանակեցիք? Ես դասս զիտեմ!

— Պարոն, ինչու Աւետեանցին երեք նշանակեցիք, իսկ ինձ երկու. նա ինձանից լաւ պատասխանեց?

— Պարոն, ինչու ինձ միաւոր նշանակեցիք? Ես տեսին կը յայտնեմ!

Պէտք է նայել այդ ժամանակ կողիտ և աներես պատանու լիտի և ծամածռած զէմքին և լայն բացած աչքերին, պէտք է լսել այդ ժամանակ նորա սպառնալից ձայնը, պէտք է ականատես լինել թէ ինչպէս է նա բացած զիրքը փակում, սեղանին տալիս և, անըը նստելով, ծնօտը յենում երկու ձեռքերի վերայ և ուղիղ ուսուցչի աչքերին նայում, — այս բոլորը աչքով պէտք է տեսնել և ականջով լսել, համոզելու համար, որ մեր դպրոցը, իւր ներկայ զրութեամբ, ողբալու արժանի մի հիմնարկութիւն է դարձել:

Աւելայինք այստեղ մի բան ևս: Մենք ունինք այնպիսի տարօրինակ ուսուցիչներ, որոնք վարքի թւանշանը խառնում են յառաջադիմութեան թւանշանի հետ. չգիտեմ, թէ որքան սխտեմատիկաբար, որքան յաճախ են պատահում այդպիսի զէպքեր, բայց թէ այդպիսի զէպքեր պատահում են, այդ հաստատ է:

Այսպիսով թւանշանը դարձել է մեր ուսումն սրանի կռածաղիկը: Թւանշանների թիւը և անարդար գործունէութիւնը, եթէ ի մի ամփոփեմ ասածներս, նւազեցնում է աշխատասէրների եռանդը, միջակներին դարձնում է մուրացկան և ստկարկու, ծոյլերին դարձնում է անտարբեր և յանդուգն: Կարելի է կազմել յանդգնութեան, կոպտութեան և առհասարակ անկարգութիւնների մի ահագին տոհոս, որ անմիջական կսպ ունի թւանշանի հետ:

Բայց շատ գտատունների անհեռատես միտքը այնքան անընդունակ է իրերի խորութիւնը թափանցելու և ըմբոստութեան սկզբնապատճառը զտնելու, որ նոքա նոյն իսկ պարծենում են, որ խիտ են թւանշանների վերաբերմամբ և ժլատ:

—Ասացէք, խնդրեմ, պարոն տեսուչ, — հարցրի մի անգամ մեր Գրականից, — ինչու էք թոյլ տալիս, որ իմ ջարգելի պաշտօնակիցներից շատերը այնքան խիստ և ժլատ լինին թւանշանների նկատմամբ...

—Այդպէս էլ հարկւոր է. եթէ աշակերտին հինգ նշանակեմ, ինձ ինչ պիտի նշանակեմ?

—Բայց դա հիմք չէ, պարոն տեսուչ, թւանշանները ուսուցիչների համար չեն, այլ աշակերտների համար: Եթէ կամենում էք, կարող էք նոյն իսկ վերացնել թւանշանները. բայց քանի որ չէք վերացնում և թողնում էք հընդանշան սխտեմը, դուք պէտք է վերահասու լինիք այդ սխտեմի արդար գործադրութեանը: Մեր դպրոցի մէջ անկարգութիւնների մի մասը կապ ունի թւանշանների հետ:

—Ես ոչ կարող եմ վերացնել թւանշանները և ոչ պաշտօնապէս վերածել հընդանշան սխտեմը չորսանշան սխտեմի: Ես միայն խորհուրդ եմ տալիս խիստ լինել առհասարակ աշակերտների հետ և երես չալ նոցա երբէք:

—Թւանշանների խնդիրը ծանրակշիռ խնդիր է, որ դուք թողնում էք մնաց անորոշութեան մէջ: Այդպիսի շիտթ դրութիւնից առաջ են գալիս հանգամանքեր, որոնք նպաստում են բարք ու վարքի անկման, որ առանց այն էլ աննախանձելի է այժմ մեր դպրոցում: Ես խնդրում եմ, որ այդ հարցը մանկավարժական ժողովի զբաղմունքի առարկայ դարձնէք. ես խօսելիք ունիմ:

—Մեղանից ոչ ոք այնքան մեծ նշանակութիւն չէ տալիս թւանշաններին, որքան դուք, և բացի ձեզանից ոչ ոքի մտքով չի անցնիլ, թէ թւանշանները կարող են լաւ կամ վատ ազդել սաների վարքի վերայ: Եթէ աշակերտների մտքները պղտորում են, դորա պատճառը մի քանի անբարեմիտ պարոնների դաւադրութիւնն է: Մանկավարժական ժողովը չէ կարող զբաղւել այդ խնդրով: Զանգը արւած է: Մանաւանդ ձեզ ես խորհուրդ եմ տալիս այդ քան առատաձեռն չլինել աշակերտների վերաբերմամբ:

—Բայց ես կարևոր...

—Զանգը արւած է:

Հօ տեսնում ես, սիրելիս? Իմ վիշաք կրկնապատկուտ է այն

պատճառով, որ մեր գպրոցի ցաւերը բժշկելու ոչ մի հնարաւորութիւն չկայ:

Սոյն նամակով ուղարկում եմ քեզ մի քանի դասարանների երկամենաց թւանշանները, որ արտագրել եմ յատկապէս քեզ համար: Կարգան և տես:

Հետեւեալ նամակովդ, յոյս ունիմ, քո խորհրդածութիւնները կը գրես այդ մասին:

Մնամ տեսութեանդ կարօտող քո բարեկամ

Ս մ բ ա տ:

P. S. Մի քանի գրելիք ևս ունէի, որ յիշեցի այն բողբոջին, երբ ծրարում էի նամակս: Ոչինչ: Միւս անգամ:

Ն ո չ ն ը:

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

ՅԱԿՈՒԲ ՅԱԿՈՒԲՅԱՆԻ

I

Պռնապահ էր պանդուխտ Կարօն
Աղա-հարուստին,
Յերեկները բազն էր հսկում—
Գիշերը պողպեղ գիւն:
Եւ մուշտակը զլիւն քաշած
Բաց երկնքի տակ,
Սըրսրթալով քամուց-ձիւնից—
Պարկած էր մենակ:
Փողոցի մօտ մայթի վրայ
Կարծես քնած էր,
Վայ իւր հալին... քունն էլ աչքից
Վաղուց փախած էր:
Եւ այն ժամին, երբ հարուստը
Տաք ննջարանում,
Անուշ նիրհն էր իւր վայելում՝
Գանձեր երազում,
Խեղճ պանդուխտը ձիւն ու քամու
Տակ էր յօրանջում,
Եւ Մարօին իւր չիշելով,
Գառն հառաչում:
Ետարբ Ասուած, մրմնջում էր,
Մինչ երբ այսպէս մնամ,
Արդեօք կը գայ մի օր, ես էլ,
Իմ վախճան դառնամ:—

II

Հառաչում էր խեղճ պանդուխտը

Թոքերի խորքից,

Նա դրժել էր իրա ուխտը—

Յետ փախել խօսքից:

Նշանածին խոստացել էր

Շուա վերադառնալ,

Խըսի հողում՝ դեռ յոյս ունէր

Նա հարստանալ:

Սակայն անցաւ քանի աճառ,

Իբրև բեռնակիր,

Նա չկրցաւ վերադառնալ

Իւր սիրած երկիր:

Ու տանջւում էր գիշեր ցերեկ—

Վայ տալով օրին,

Մի քիչ փարա վաստակելով

Հասնել իր եարին:

Բայց իզուր ջանք... տարիքն անցան

Մէկ-մէկու յետքից,

Թշաւար դեռ չազատեցաւ

Բարդանի ¹⁾ տակից:

Եւ մի սև օր նա լուր առաւ

Թէ իւր Նազիկին

Քուրդի բէկը հարեմ տարաւ,

Փոխարէն պարտքին:

Ե՛լ չըղիմցաւ խեղճ պանդուխտը

Այս դառն լուրին,

Կախեց կրճքից ծանր բարդան—

Զոհեց գիծ Քուռին:

Փրֆլիս, 1895 թ.

¹⁾ Բարդան կամ Համէղ, բեռնակրի փալան:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Наслѣдственность, l'Hérédité)

ԲԺ. ԹԱԴԷՍՍ ԶԱԲԱՐԵԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

Գ.

Անցնենք այժմ ջղային և հոգեկան հիւանդութիւնների ժառանգականութեան: Այստեղ ժառանգականութիւնը արտապայտուում է արդէն իւր բոլոր ուժով և աւելի բացարձակ կերպով: Մինչդեռ ծնողների հոգեկան և ջղային դրական յատկութիւնները, ինչպէս վերը չիշեցինք, նշանաւոր կերպով ենթարկուում են կրթութեան, շրջապատող հանգամանքների և կեանքի այլ և այլ պայմանների ազդեցութեան, բացասական յատկութիւնները ընդհակառակը համարեա միշտ անխուսափելի և անփոփոխ կերպով փոխանցուում են մէկ սերնդից միւս սերնդին: Վերջին քսան-քսանհինգ տարւայ ընթացքում հաւաքած վիճակագրական տեղեկութիւններից երևում է որ հոգեկան ու ջղային հիւանդութիւնների ամենագլխաւոր պատճառը կազմում է ժառանգականութիւնը, որը մի քանի հեղինակների վկայութեամբ հասնում է մինչև 90—95%:

Այն բոլոր օրէնքները, որ չիշեցինք առհասարակ ժառանգականութեան վերաբերութեամբ, ամբողջապէս տարածուում են նաև հոգեկան ու ջղային հիւանդութիւնների վրայ: Այդ հիւանդութիւն-

1) Տես «Մուրճ» 1895 թ. № 5:

ները նոյնպէս փոխանցուում են կամ ուղղակի կամ անուղղակի ու յետադարձ ժառանգականութեամբ: Բացի սորանից հոգեկան և ջղաչին հիւանդութիւնները փոխանցուում են միատեսակ կամ այլատեսակ ժառանգականութեամբ (однородная и разнородная наследственность): Միատեսակ անանուում է այն ժառանգականութիւնը, երբ որ հոգեկան ու ջղաչին անկանոնութիւնները արտաչայուում են միևնոյն ձևով թէ նախնիքների և թէ սերունդների մէջ: Կէտերինը յիշում է մի ընտանիքի մասին, որի մէջ հայրը, նրա շորս որդիները, մի աղջիկը և միակ թուր զանազան ժամանակ վերջ են գրել իրենց կեանքին ինքնասպանութեամբ և, որ զարմանալին է, բոլորն էլ միևնոյն ատրճանակով: Ուրիշ դէպքերում սերունդների մէջ կրկնում են խելացնորութեան կամ ջղաչին խանգարումներին միևնոյն ձևը և տեսակը:

Բաց աւելի յաճախ հոգեկան և ջղաչին հիւանդութիւնները փոխանցուում են այլատեսակ ժառանգականութեամբ: Ծնողը կարող է հիւանդ լինել հոգեկան մի տեսակ հիւանդութեամբ, իսկ որդիներից ամեն մէկը կարող է ենթարկել ուրիշ տեսակ խելացնորութեան: Այդ նշանակում է որ ժառանգականութեամբ փոխանցուում է ոչ թէ հիւանդութեան ճիւղը այլ հիւանդութեան արմատը, որը, նայելով հանգամանքներին, կարող է ճիւղաւորել դէպի այս կամ դէպի այն կողմը: Մորողէ-Տուրը, Գրեզինգէրը և մանուանդ Շարկօն հիմնելով բազմաթիւ հետազոտութիւնների վրայ անհերքելի կերպով ապացուցեցին որ ջղաչին և հոգեկան հիւանդութիւնները ամենատեսակ կերպով կապւած են իրար հետ. նրանք նման են երկու վտակների, որոնք բղխում են միևնոյն ակունքից տանելով միայն ջուրը դէպի զանազան կողմեր: Ենորհիւ այդ Ֆակտին այժմ մենք գիտենք որ ծնողների խելացնորութիւնը կարող է արտաչայուել սերնդի մէջ ջղաչին հիւանդութիւնների ձևով և ընդհակառակը ծնողների ջղաչին խանգարումները կարող են փոխանցուել զաւակներին խելացնորութեան այլ և այլ ձևերի տակ: Բացի սորանից բաւական է որ ծնողը ենթակայ լինի մի որ և իցէ ջղաչին անկանոնութեան, և ահա նոր սերնդի մէջ երևան են զալիս ջղաչին հիւանդութեան բազմաթիւ տեսակները: Դատերիկայի ենթակայ մօրից կարող են ծնուել ինչպէս իստերիկ զաւակներ այնպէս և անգամալոյճներ, ընդ-

նաւորներ (ЭПИДЕМИКЪ), ապուշներ, հարբեցողներ և խելագարներ: Հարբեցողը կարող է արտագրել ոչ միայն հարբեցողութեան այլ և ամեն անասկի ջղալին և հոգեկան հիւանդութեան ենթակայ սերունդ: Նկատուած է որ ծնողների նոյն իսկ պատահական հարբեցողութիւնը և առհասարակ ծնողների հոգեկան դրութիւնը զաւակի բեղմնաւորութեան րոպէին մեծապէս ազդում է սերնդի հոգեկան և ջղալին դրութեան վրայ: Դեռ ևս Հեզիոդը խորհուրդ էր տալիս ծնողներին մեղամաղձոտ զաւակներ չծնելու համար հրաժարել ամուսնական յարաբերութիւնից թաղման և կամ ուրիշ տխուր հանդէսներից յետոյ. նոյն ժուժկալութիւնը քարոզում էր նաև Հիպոկրատը հարսանիքից և կամ խնջոյքներից յետոյ, որպէս զի սերունդը ազատ լինի հարբեցողութեան և շռայլութեան անտից: Լուդովիկոս XIV-ի ապօրինի զաւակներից մէկը, որը յղացել էր այն րոպէին, երբ որ նորա մայրը—մայրամ դը-Մոնտէսպանը—սաստիկ յուզած լաց էր լինում մի ինչ որ յօբելեանի առիթով, իւր ամբողջ կեանքում յայտնի էր իբրև լացկան և կրում էր այրելեանի զաւակ մականունը: Յայտնի է թէ ինչ գրգռուած և ջղալին դրութեան մէջ էին Պարիզի բնակիչները Ֆրանկ-պրուսական պատերազմի ժամանակ, երբոր պրուսացիները յաղթութիւն յաղթութեան ետեից տանելով արդէն կանգ էին առել Պարիզի պարիսպների տակ: Ֆրանսիացիների այդ ջղալին լարած դրութիւնը անհետեանք չմնաց այդ ժամանակ յղացած սերնդի վրայ: Եարլ Ֆէրէն այդ սերնդին նւիրել է մի վերին աստիճանի հետաքրքրական հոգեբանական հետազոտութիւն, որի մէջ այդ շրջանի զաւակներին անւանում է «պաշարման զաւակներ» (les enfants du siége):

Բացի սորանից Մորո-դէ-Տուրը, Յիմնէրը, Վեստֆալը, Բուշարը և Եարկոն ապացուցել են որ մի քանի քրոնիկական հիւանդութիւններ, ինչպէս են թղքախտը, սիֆիլիսը, շաքարի հիւանդութիւնը (сахарная болѣзнь), անգլիական հիւանդութիւնը (ոսկորների ծուրութիւն), գեղձախտը (ЗОЛОТУХА, scrophulosis) և մանուսանդ յօղացաւը (АРТРИТИЗМЪ И ПОДАГРА) նոյնպէս առաջացնում են սերնդի մէջ ջղալին և հոգեկան հիւանդութիւններ:

Առաջ կարծում էին որ վախը, սիրահարութիւնը, վիշտը, կսկիծը և առհասարակ ամեն մի պատահական բուռն յուզմունք

կարող են պատճառ դառնալ ջղային և հոգեկան խանգարմունքների: Սակայն այդ երեւոյթների մանրամասն ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս որ բոլոր այդ մոմէնտները կարող են առիթ լինել միմիայն այն անձնաւորութիւնների համար, որոնք, սուանց այն, ժառանգականապէս տրամադրւած են այդ հիւանդութիւններին: Եթէ հազարաւոր հոգի միաժամանակ ենթարկոււմ են միւլենոյն երկիւղին, միւլնոյն վշտին և միւլենոյն յուզմունքին, նրանցից հիւանդանում են միմիայն նրանք, որոնք արդէն կրում են իրենց կազմաճքի մէջ հոգեկան կամ ջղային ժառանգականութեան սաղմը: Շատ իրաւացի և հիմնաւոր են Ժ. Ֆրանկի խօսքերը, որ պնդում է թէ *on ne devient fou d'amour que quand on avait un amour de fou*—սէրը գժեցնում է միայն գժերին:

Այդպիսով, ինչպէս տեսնում ենք, հոգեկան, ջղային և քրոնիկական հիւանդութիւնները սերտ կերպով կապւած են միմեանց հետ և հեշտութեամբ փոխարկոււմ են մէկը միւսին: Բայց աւելի հետաքրքրական է այն կապը, որը նկատոււմ է մի կողմից տաղանդի և հանճարի, իսկ միւս կողմից հոգեկան ու ջղային հիւանդութիւնների մէջ: Իեռ. Էս Արիստոտէլը նկատել էր որ *nullum magnum ingenium sine mixtura dementiae*—չկայ ոչ մի մեծ խելք, որը խաւը չլինի անխելքութեան հետ: Գրեղինգէրը առաջին անգամ դարձրեց գիտնականների ուշադրութիւնը այն նշանաւոր հանգամանքի վրայ, որ միւլենոյն ընտանիքի մէջ ժառանգական ապուշների, խելացնորների և ջղայինների շարքում շատ անգամ աշխարհ են գալիս արտասովոր ընդունակութիւնների, տաղանդի և հանճարի, տէր անձնաւորութիւններ: Մորօ-լէ-Տուրը աւելի առաջ գնալով սկսեց նայել հանճարի վրայ ինչպէս ջղային հիւանդութեան մի տեսակի վրայ: Իսկ վերջին ժամանակ իտալացի յաջտնի պրոֆէսոր Աէզարէ Լոմբրոզօն մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ դարձրեց այն կապը, որը գտնոււմ է հանճարի և հոգեկան ու ջղային խանգարմունքների մէջ. նրան նշանաւոր աշխատութիւնը «Հանճար և խելացնորութիւն» վերնագրով յայտնի է ամբողջ աշխարհին:

Թէ տաղանդը և հանճարը իսկապէս ազգակից են հոգեկան և ջղային հիւանդութիւնների ժառանգականութեան հետ, այդ պայացուցում է հետեւեալ Փակտերով:

Հանձարաւոր և տաղանդաւոր անհատների ցեղագրութիւնը ցոյց է տալիս որ նրանց ծնողները կամ նախնիքները մեծ մասամբ ենթակայ են եղել ջղաջին և հոգեկան անկանոնութիւնների: Ալեքսանդր Մակեդոնացու հայրը—Փիլիպպոս Մակեդոնացին—նշանաւոր էր բարոյական զգացմունքների բացակայութեամբ: Օրոստոս կայսրի նախնիքները յայտնի էին ջղաջին զանազան հիւանդութիւններով: Նշանաւոր փիլիսոփայ Ծոպէնհաուէրի տատը և հօրեղբայրը կատարեալ ապուշներ էին:

Հանձարաւորների յետագայ սերնդի մէջ նոյնպէս յաճախ նկատուում են հոգեկան և ջղաջին հիւանդութիւնների զէպքեր: Տաղանդաւոր պատմաբան Տացիտի որդին ապուշ էր: Պետրոս Մեծի միակ որդին—Ալեքսէյ Պետրովիչը—յայտնի է պատմութեան մէջ իբրև ապուշ և խելագար. հարազատ հայրը ստիպւած էր ինքը իւր ձեռքով բանտարկել նորան և զրկել գահի ժառանգութեան իրաւունքից: Նշանաւոր Կոնդէի միակ որդին ենթակայ էր անգլիական հիւանդութեան և մեռաւ ինչպէս խելացնոր: Կիւլիէի բոլոր զաւակները մեռան ուղեղի հիւանդութիւնից:

Բայց աւելի հետաքրքրականը այն է որ նոյն իսկ իրենք, հանձարի և տաղանդի տէր անձնաւորութիւնները, մեծ մասամբ ենթակայ են այլ և այլ ջղաջին և հոգեկան անկանոնութիւնների: Օրինակները այնքան շատ են որ մենք զժւարանում ենք ընտրութիւն անելու: Սոկրատը ենթակայ էր զանանցանքների: Յուլիոս Կեսարը, Պողոս առաքեալը, Մուհամմէդը և Պետրոս Մեծը յայտնի են իբրև ընկնաւորներ (эпилептикъ): Իզնատիոս Լոյսլլան, Սաւանորոլլը, Լութերը—պարբերաբար ենթարկւում էին հոգեկան խանգարմունքների: Ժան-ժակ Ռուսսոն, Օգիւստ Կոնար, Նիւտոնը, Լիննէն, Տորկւատո Տասսոն, Սելիֆարը, Ծոպէնհաուէրը և մեր ժամանակակից Նիցշէն յայտնի են ինչպէս խելագարներ: Բայրոնը և Հեյնէն ենթակայ էին ջղաջին ծանր հիւանդութիւնների: Ալֆրէդ Միլսէն, Հոֆմանը և Եզդար-Պօէն հարբեցողներ էին: Գիւլի-ղը-Մոպասանը մեռաւ խելագարութեան մէջ ինքնասպանութիւն զործելով: Նշանաւոր երաժիշտներից Մոցարտը ջղաջին էր և մեռաւ հոգեկան հիւանդութեամբ: Հենդէլը ենթակայ էր պարբերական խելագարութեան, Բեահովէնը յայտնի էր իւր տարօրինակ բնաւորութեամբ և

մեկամաղձութեամբ: Շուժանը և Շոպէնը մեռան իբրև խելագարներ. Վագնէրի ամբողջ կեանքը լի էր հոգեկան և ջղաջին անկանոնութեան զէպքերով: Բանաստեղծները աւելի ևս յաճախ ենթակայ են ջղայնութեան և հոգեկան խանգարմունքների. նոյն իսկ բանաստեղծական ներշնչումը ուրիշ բան չէ բայց եթէ ջղային և հոգեկան կարողութիւնների արտասովոր գրգռմունք:

Խուսաց գրողներից Գոստոևսկու և Գոգոլի խելացնորութիւնը յայտնի է ամենքին. Պուշկինը և Լերմոնտովը անտանելի էին իրենց չափազանց զիւրագրգռութեամբ, որին նրանք երկուսն էջ այնպէս անժամանակ զոհ գնացին: Տոլստոյը իւր ծերութեան հասակում ընկել է կրօնական և փիլիսոփայական միտախցիկով մէջ:

Նոյն իսկ մեր սակաւաթիւ նշանաւոր գործիչների շարքում կարելի է գտնել օրինակներ Լոմբրոզօի թէօրիայի համար: Գրիգոր Նարեկացին, ինչպէս պարզ երևում է նրա գրածներից, ենթակայ է եղել կրօնական չափշտակութեան (ЭКЗАЛТАЦИЯ) և խտրիկացի: Ներսէս Աշտարակեցին ենթակայ էր ընկեաւորութեան. Քաչատուր Աբովեանը, ինչպէս ինքը վկայում է, ենթարկւում էր ուղեղային խանգարմունքների և ուշաթափութեան, և հաւանական է որ մեռած լինի ինքնասպանութեամբ: Ստեփանոս Նսզարեանցը յայտնի էր ինչպէս վերին աստիճանի տարօրինակ (ОРИГИНАЛНЬИ) մարդ: Գրիգոր Արծրունին, Պամառ-Փաթիլյան և Արափիլին յայտնի էին իրենց ջղայնութեամբ և բնաւորութեան անհարթութեամբ:

Այդպիսով հոգեկան և ջղային ժառանգականութիւնը, նայելով հանգամանքներին, մեկ զէպքում առաջացնում է տաղանդ և հանճար, միւս զէպքում ջղային հիւանդութիւն, խելացնորութիւն և ապշութիւն: Իսկ երկու զէպքում ևս մտցնում է սերնդի մէջ հոգեկան և ջղային հիւանդութիւնների արամաւորութիւնը, որը առաջնորդում է նորան զէպի վերջնական սպառում, զէպի սերհատութիւն (ВЫРОЖДЕНИЕ, dégenérescence): Պ. Իսկոբի որի աշխատութիւնը ժառանգականութեան մասին անցել է կլասիքական գրածքների շարքը, իրաւացի է նկատում որ ամեն մի անհատ, որը չափազանց բարձրանում է ժամանակակից հասարակութեան ընդհանուր մակերեւոյթից, նա ինքը իւր ձեռքով ստորագրում է իւր սերնդի մահան գատաւճիւր: Ճշմարիտ, բնական անմահու-

թիւնը կաշանում է սերնդի յարատևութեան մէջ. հանձարը և տաղանդը այդ բնական անմահութիւնը փոխանակում են պատմական անմահութեան հետ, որը անւանում է հռչակչ Նրանք իրենց սեփական կեանքի և իրենց ապագայ սերունդների կեանքի գնով դարերի անսամանութեան ընթացքում գնում են միայն մի երկուտող կենսագրական բառարանների մէջ:

Դ.

Փառանգականութեան ազդեցութիւնը սովորաբար մի առժամանակ մնում է ծածկւած, ինչպէս կրակը մոխրի տակ, և երևան է գալիս միայն մի որոշ հասակում կամ որոշ պայմանների ներգործութեան տակ: Այդ պայմանները, ինչպէս վերը յիշեցինք, լինում են կամ բնական և կամ պատահական: Բնական պայմանների շարքումն են արբունքի շրջանը, չղութիւնը, ծննդաբերութիւնը և ծերութեան հասակը. իսկ պատահական պայմաններն են ուղեղի խոնջութիւնը (перееутомление мозга), վարակիչ և ծանր հիւանդութիւնները, երկիւղը, վիշտը, սիրահարութիւնը և առհասարակ ամեն մի բուռն հոգեկան և ջղային յուզմունք: Սակայն աւելի յաճախ փառանգականութիւնը գնում է անհատների վրայ իւր առանձին դրոշմը, և նրանք արդէն մանկութեան հասակից աչքի են ընկնում մի քանի թէ արտաքին և թէ ներքին առանձնայատկութիւններիով: Այդպիսի անհատները անւանւում են սերհատուողներ (вырождающііся, dégénéré), իսկ նրանց առանձնայատկութիւնները—սերհատութեան նշաններ:

Արտաքին նշաններից ամենազխաւորը այն անկանոնութիւնն են, որոնք նկատուում են զանգի կազմւածքի վրայ: Գանգը լինում է կամ սովորականից մեծ, կամ սովորականից փոքր և իւր ձևով միշտ տարբերւում է սովորական գանգերից. շատ անգամ գանգի մի մասը աւելի զարգացած է լինում քան թէ միւս մասը և միշտ կրում է իւր վրայ զանազան անսովոր խորզութիւններ: Երեսը և ձալատը չեն գտնուում միևնոյն հարթութեան վրայ, այլ նրանցից մէկնումէկը ցցւած է լինում դէպի առաջ և կազմում է մի որոշ անկիւն. բացի սորանից երեսի մի կէսը երբեմն աւելի զարգացած է լինում քան թէ միւս կէսը: Ականջները լինում են կամ չա-

փազանց խոշոր կամ չափազանց մանր, սովորաբար բարակ ու
 ցցւած դէպի առաջ և միշտ աչքի են ընկնում իրենց տարօրինակ
 ձևով: Աչքերի ծիածանները պատահում են տարբեր գոյների, բի-
 բերը, փոխանակ սովորական բոլորակ ձևի, երբեմն լինում են հորի-
 զոնաձև և կամ ուղղաձիգ ինչպէս կատունների բիբերը, կուպերը և
 աչքի գնտակները շատ անգամ ենթակաջ են լինում անսովոր գող-
 դոման կամ, ինչպէս ժողովուրդը ասում է, ձիպձիպում են: Երեսի
 մկանունները, ինչպէս և մարմնի միւս մասերը ենթարկւած են
 տարօրինակ ցնցումներին: Ատամները սովորաբար լինում են ծու-
 ումուռ և անհարթ. շուտով փչանում են և ցցւում են դէպի առաջ,
 աչնպէս որ դուրս են գալիս շրթունքների արանքից: Ներքին ծնոտը
 ցուռկի նման ցցւած է լինում աւելի դէպի առաջ քան թէ վերին
 ծնոտը, և բերանը փակած ժամանակ ոչ թէ վերին ատամներն են
 ծածկում ներքին ատամների շարքը՝ այլ ընդհակառակը: Երթունք-
 ները լինում են կամ չափազանց բարակ կամ չափազանց հաստ
 ինչպէս նեղրներինը. վերին շրթունքը երբեմն բաժանուած է լի-
 նում երկու մասի ինչպէս նապաստակի շրթունքը (запятыя губы).
 բերանը սովորականից աւելի մեծ: Կմախքի վրայ նոյնպէս նկատելի
 են զանազան անկանոնութիւններ, անհաւասարաչափութիւններ և
 յաճախ ոտքի ոսկորների ծուռութիւն: Տեսողութիւնը լինում է ան-
 կանոն. ամենափոքր հասակից աչքերը սկսում են կարճատես դառ-
 նալ և արդէն երրորդ կամ չորրորդ դասարանից հարկաւորութիւն
 է զգացւում ակնոցների գործածութեան: Լսողութիւնը նոյնպէս
 նւազ է և երբեմն հասնում է խլութեան աստիճանին: Խօսելու ըն-
 դունակութիւնը նոյնպէս ենթակաջ է անկանոնութիւնների. հա-
 յելով որ շատ անգամ այդ անհասները օժտւած են լինում հետ-
 արական ընդունակութեամբ, բայց մեծ մասամբ նրանք լինում
 են թլւաւ և կակազ: Գլխացաւը և մանաւանդ կիսազլխացաւը
 (мигрень) սովորական երևոյթներ են ժառանգական ջղաջինների մէջ:

Առհասարակ նրանց ջղաջին գրութիւնը վերին աստիճանի
 զգայուն և տատանող է: Ամենաչնչին և բնական պատճառները,
 օրինակ օտնդը, ատամների բուսնելը, ամսականը, որոնք առողջ
 կազմւածքների մէջ չեն առաջացնում ոչ մի աչքի ընկնող խան-
 դարմունք, ժառանգականների մօտ ընդհակառակը միշտ միանում

են զանազան ջղալին ցնցումների, ուշաթափութեան, զառանցանքի և ուրիշ ջղալին և հոգեկան անկանոնութիւնների հետ: Նրանցից շատերը արդէն ամենափոքր հասակից ենթարկուած են ընկնաւորութեան և կամ ցոյց են տալիս անսովոր ձգտում դէպի ոգելից ըմպելիքները և դէպի օնանականութիւն: Մէք դէպք ենք ունեցել տեսնել օնանական մանուկներ սկսած տարիուկիսական հասակից. այդ ախար, որի ջղալին ծագումը ապացուցւած է բազմաթիւ հետազոտութիւններով, դնալով-գնալով աւելի զարգանում է մանուկի մէջ և աւելի ևս խանգարում է առանց այն էլ ժառանգականութեամբ խանգարւած ջղալին և հոգեկան համակարգութիւնները: Սեռական զլացմունքը, որը մեծ մասամբ սովորականից վաղ է զարգանում ժառանգականների մէջ, ենթակա է ամեն տեսակ անկարգութիւնների և զարտուղութիւնների: Չնայելով իրենց վերին աստիճանի վաւաշոտութեան՝ սերհատուողները շատ անգամ զուրկ են լինում սեռական կարողութիւնից և կամ հակառակ են բաւականութիւն առ իրենց կրքերին ամենաանբնական և կեղտոտ միջոցներով:

Գալով սերհատուողների մտաւոր և հոգեկան կարողութիւններին՝ այստեղ ևս նկատելի են բազմաթիւ առանձնապատկութիւններ, որոնց շնորհիւ հեշտութեամբ կարելի էր որոշել ժառանգական խանգարմունքներին ենթակա անհատներին. նրանց թէ մտաւոր և թէ զգայնական շրջանները ազատ չեն ինքնուրոյն և արտասովոր չափութիւններից: Եթէ նրանցից շատերը ամենաթարմ հասակից ցոյց են տալիս մտաւոր կարողութիւնների կատարեալ բթութիւն, շատերն ևս ընդհակառակը ոչ միայն չեն ցոյց տալիս որ և իցէ պակասութիւն այլ մինչև անգամ աչքի են ընկնում՝ իրենց արտասովոր ընդունակութիւններով. յաճախ գերազանցում են նրանք իրենց աշակերտակից շնկերներին և արժանանում են մրցանակների, պարգևների և մեդալների: Ամենից աւելի զարգացած է լինում նրանց մէջ չիշողութիւնը, որը շատ անգամ առիթ է տալիս շքապատոզներին մեծամեծ յոյսեր տաճել նրանց ապագայի մասին, բայց աւելի խորը քննելով դժւար չէ նկատել, որ չիշողութեան այդ անսովոր զարգացումը միշտ սեղի է ունենում ի վնաս լոգիկական կարողութիւնների. նրանց ուղեղը չափազանց հարուստ է ֆանտազիայով, բայց միևնույն ժամանակ աղքատ է

առողջ և լուրջ դատողութեամբ: Դառնալով նշանաւոր ճարտարա-
խօսներ, երբեմն նաև նշանաւոր գրողներ, նրանք ընդունակ են վա-
սել, յափշտակել ամբօրին, ազդել նրա սրտի և զգացմունքի վրայ,
բայց համոզել—երբէք: Միևնոյն եռանդով նրանք ընկնում են մի
ծայրայեղութիւնից միւս ծայրայեղութեան մէջ, ծայրայեղ ազա-
տամտութիւնից անցնում են ծայրայեղ պահպանողականութեան.
ամեն քայլափոխում սայթաքում և հակասում են իրենք իրենց:
Անընդունակ լինելով լուրջ և հետևողական աշխատանքի՝ նրանք
անդադար փոխում են իրենց մասնագիտութիւնը, իրենց զբաղմունք-
ների ձևը և երբէք համբերութիւն չեն ունենում սպասել սկսած
ձեռնարկութեան վախճանին: Ամեն մի չնչին յաջողութիւնից յա-
փրշտակում են և ամեն մի թեթև արգելքի առաջ յուսահատ-
ւում և գլուխները վայր են ծռում: Սովորաբար նրանք ստեղծում
են մեծ-մեծ ծրագիրներ, անիրագործելի նպատակներ և չկարողա-
նալով հասնել այդ նպատակներին՝ սկսում են աջ ու ձախ հայհո-
յել, մեղադրել ամենքին՝ բացի իրենցից:

Առհասարակ ես-ը և անձնասիրութիւնը մեծ դեր են կատա-
րում սերհատող անհատների կեանքի մէջ: Կարծես զգալով որ
իրենք դատապարտւած են սերնդի սպառման, նրանք իրենց բոլոր
ուշագրութիւնը, բոլոր զգացմունքը կեդրոնացնում են իրենց անձ-
նաւորութեան, իրենց եսի վրայ, որին նրանք կաշտում են այնպէս,
ինչպէս խեղուող մարդը պատահական կուտնին: Նրանց համար
անհասկանալի են ազգականների և մերձաւորների սէրը և, որ աւե-
լին է, փոքր հասակից սկսած նրանք մի առանձին թշնամութիւն
են զգում դէպի իրենց շրջապատողները. իրենց քմահաճութեամբ
և չարութիւններով աշխատում են վիրաւորել նրանց, վշտացնել
նրանց սիրտը: Իրենց խստասրտութիւնը տարածում են նրանք նաև
կենդանիների վրայ և միշտ մի առանձին հաճոյքով են նայում
նրանց չարչարանքներին: Չնայելով որ այդ թշուառականները զուրկ
են պարտաճանաչութեան ամենատարրական զգացմունքից դէպի
ընտանիքը, դէպի հասարակութիւնը և դէպի հայրենի երկիրը, բայց
այդ արգելք չէ լինում նրանց ամենաբարձր ոճ գործ ածել այդ
խնդիրների մասին խօսելու ժամանակ: Առանց ամենափոքր անկեղծ
կարեկցութիւն զգալու դէպի խեղճերը և դէպի թուլերը՝ նրանք չեն

քաշուում անցնել բարեգործական ձեռնարկութիւնների զլուխը և կոկորդիլոսի արտասուքներ թափել աղքատների և հալածւածների վիճակի վրայ: Նրանք կարծես աշխատում են փքուն նախադասութիւններով և ճռճուան խօսքերով վարագուրել իրենց հիւանդոտ և ախտաւոր հոգու մուտք անկիւնները: Սիրոյ և բարեկամութեան ջերմ զգացմունքների բացակայութիւնը ծնում է նրանց մէջ ատելութիւն դէպի կեանքը. նրանք դառնում են մեղամաղձոտ և շատ անգամ վերջ են դնում իրենց կեանքին անձնասպանութեամբ:

Տոգորւած անհաշիւ անբաւականութեամբ դէպի իրենց շրջապատողները և դէպի ժամանակակից հասարակութիւնը՝ նրանք աշխատում են վիրաւորել այդ հասարակութեան զգացմունքները, ոտնակոխ անել նորա ձգտումները, հակառակել նրանց ընդունած օրէնքներին և սովորութիւններին: Եւ որովհետև հասարակութիւնը համարեա միշտ ենթարկւած է սնտոխասպաշուութեան, մոլորութիւնների, տգիտութեան և կանխակալ կարծիքների, այդ պատճառով նրանք շատ անգամ հանդիսանում են կարապետներ և առաջնորդներ նոր օրէնքների և նոր վարդապետութեան: Քաղաքակրթութեան պատմութիւնը ցոյց է տալիս որ ժառանգական ջղայիները և ժառանգական խելագարները միշտ ահագին դեր են կատարել մտքերի մեծամեծ յեղափոխութիւնների գործում: Զուր չի ասում Իւրնիէ-Պաթէսը որ ազգերի ազատութեան խնդրում երբեմն մի դիժը աւելի գործ է կատարում քան թէ հազարաւոր խելօքները: Ժառանգականութեան միւսնոյն արմատի վրայ, նայելով հանգամանքներին, մի դէպքում ծնում են Վութէրներ, միւս դէպքում Նոյոլաներ, իսկ երկու դէպքում ևս ծայրայեղ ջղայիներ և ֆանատիկոսներ:

Բանականութիւնը, զգացմունքները և կամքը կազմում են հոգեկան գործունէութեան գլխաւոր տարրերը: Այդ գործունէութիւնը այն ժամանակ է լինում առողջ, երբոր այդ երեք տարրերը գտնւում են ներդաշնակ և համբերաշխ դրութեան մէջ, հաւասարակշուում են մէկը միւսին: Ժառանգականների հոգեկան գործունէութիւնը զուրկ է այդ հաւասարակշուութիւնից, այդ պատճառով նրանք անդադար խաղալիք են դառնում իրենց կամքի և զգացմունքների փոփոխութիւններին: Ամենաչնչին դէպքը, ամենահա-

սարակ երևոյթը խանգարում է նրանց հոգու անդորրութիւնը և դարձնում է նրանց անզուսպ, զիւրազրգիտ, բարկացկոտ և բծախնդիր: Այդ յատկութիւնների շնորհիւ նրանք մեծ մասամբ լինում են անտանելի թէ ընտանեկան կեանքում և թէ հասարակութեան ու բարեկամների շրջանում:

Բացի սրանից նրանք շատ անգամ ենթակայ են լինում զանազան անհիմն և անհեթեթ գաղափարների (idée fixe): Այդ գաղափարները նստում են նրանց ուղեղի մէջ ինչպէս պարազիտներ, մեխի նման ցցւում են նրանց գլխում և խանգարում են հոգեկան անդորրութիւնը. նրանցից մի քանիսը անհիմն երկիւղ են զգում, երբոր ընկնում են լայն և դատարկ հրապարակների վրայ. միւսները չեն կարողանում առանց սարսափի անցնել կամուրջի վրայով կամ բարձր շինութիւնների մօտով. ուրիշները անցնելով խանութի կամ բաց բնակարանի մօտից՝ անդիմադրելի ձգտումն են զգում մի բան գողանալու և գրպանները ձգելու (кляптоманія): Վերջապէս շատ անգամ նրանց գլխի մէջ ծագում և բուռն են դնում անհեթեթ հարցեր—ինչ նպատակով, որտեղ է հեթեան սկիզբը, նորախորհուրդը և նորա վախճանը, և մի շարք ալիպիսի վերացական և անլուծելի ինդիւրներ, որոնց պատասխանը վեր է մարդկային իմացականութեան սահմաններից: Դժւար չէ երևակայել հոգեկան այն սարսափելի տանջանքները, որոնց ենթարկւում են նրանք այդ անհեթեթ գաղափարների առաջ: Եւ այդ տանջանքը աւելի ևս սարսափելի է նրանով, որ նրանք շատ անգամ ըմբռնում են իրենց գաղափարների անհեթեթութիւնը, աշխատում են խուսափել, ազատւել այդ տանջող մտքերից. բայց այդ մտքերը ամուր խրաժ լինելով ուղեղի մէջ՝ ամեն սեղ և ամեն ժամանակ հալածում են նրանց ինչպէս անխուսափելի ուրւակիաններ: Մի քայլ ևս, և նրանք արդէն ոտք են կոխում գժանոցի դռներից դէպի ներս:

Այս է ահա ընդհանուր սրտկերը այն Ֆիզիքական, ջղաչին և հոգեկան առանձնաչափութիւնների, որոնք կազմում են ժառանգական սերհատութեան դրօշմը: Ամեն անգամ երբ այդ նշաններից մեկնումէկը կամ մի քանիսը միասին արտայայտւում են ընտանիքի անդամների վրայ, այդ ապացոյց է որ ժառանգական սերհատութեան սերմը արդէն մուտք է գործել այդ ընտանիքի

մէջ: Եւ եթէ աւողջ ու թարմ արիւնի նոր հոսանք չէ գալիս բարեխառնելու այդ օրհասական ոյժի ազդեցութիւնը, այն ժամանակ ընտանիքը արդէն չորրորդ կամ հինգերորդ սերնդում բնաջինջ է լինում կամ, ինչպէս ժողովուրդն է ասում, «օջախը մարում է»: Բայց նախ քան այդ վերջնական կէտին հասնելը նա անցնում է հոգեկան և ջղաջին խանդարմունքներէ բազմատեսակ աստիճաններից՝ սկսած հանճարից մինչև անասնանման ապուշը:

Ե.

Պատմութիւնը տալիս է ժառանգական սերհատութեան բազմաթիւ օրինակներ. ամբողջ ազգեր և ցեղեր զոհ են զնացել այդ անողբ օրէնքին: Սարսափելի է նորա ազդեցութիւնը մանաւանդ ժողովրդի արտօնաւորած, ազնւական անւանող դասակարգի վրայ: Սպարտացիների թիւը, որոնք կազմում էին Լակոնիայի ազնւականութիւնը, Լիկուրգոսի ժամանակ հասնում էր իննը հազարի. Արեւտոտելի ժամանակ նրանցից մնացել էին միայն հազար հոգի, իսկ Բոյենոֆոնդի ժամանակ մի յն քառասուն հոգի: Հռոմի ազնւական տոհմերը այնպիսի արագութեամբ ոչնչանում էին որ տէրութիւնը ստիպւած էր անդադար նոր-նոր ազնւականութիւններ ստեղծել: Նոյնը պատահեց նաև միջնադարեան Ֆէօզալների հետ, նոյնը պատահում է և այսօր եւրոպական բոլոր արիստակրատ ընտանիքների հետ, որոնց թիւը, ինչպէս երևում է վերջին տարիների վիճակագրութիւնից, անդիմադրելի կերպով սպառւում է:

Թագաւորական և իշխանական տոհմերը աւելի ևս ենթակայ են ժառանգական սերհատութեան: Մեծն Կիւրոսի տոհմը վերջացաւ Վամբիւսով, որը ենթակայ էր կատաղի խելացնորութեան: Մագդոնական թագաւորների տոհմը սպառւեց Ալեքսանդր Մեծի մահով, որը յայտնի էր իւր արիւնըռուշտ բնաւորութեամբ և ենթակայ էր սեռական կարողութիւնների թուլութեան: Նորա հանճարաւորութիւնը ապացոյց է միայն այն սերտ չարաբերութեան, որը գոնըւում է հանճարի և խելացնորութեան մէջ: Աթուրոց Սելեւկեան հարստութիւնը ներկայացնում է մի ամբողջ շարք մոլիների, անբարոյականների, չանցաւորների և խելացնորների: Եգիպտական Լագիրները յայտնի էին իրենց վավաշտութեամբ, ջղայնութեամբ և

խելագարութեամբ: Հռոմէական կայսերական տոհմը սկսուեւ է ջղային Օգոստոս կայսրով և վերջանուեւ է հայրասպան Ներոնով որը ենթակաչ էր հրեշաւոր անբարոյականութեան և խելացնորութեան: Նորա նախորդներն էին կառաղի և ընկնաւոր Կալիգուլան, որի որկրամոլութիւնը և անբարոյականութիւնը առակի կարգ է անցել, և Կլաւդիոս կայսրը, որը կատարեալ հրէշ էր թէ ֆիզիքայէս և թէ հոգեպէս:

Հաբսուրդեան տոհմի այն ճիւղը, որը թագաւորուեւ էր Սպանիայում և Անգլիայում՝ բնաջինջ եղաւ տալով մի ահագին շարք խելացնորների, ապուշների և անբարոյականների ու նրանցից Մարիա-Տիւզորը իւր կառաղի բնաւորութեան համար ստացել է պատմութեան մէջ «հիւսիսային քաւթառ» (сѣверная гена) մականունը. իսկ Փիլիպպոս II ֆանատիկոսը յայտնի է «հարաւային վագր» տիտղոսով: Այդ տոհմի վերջին շառաւիղն էր Կարոլոս II, որը լինելով ապուշ, ընկնաւոր և զուրկ սեռական կորոզութիւնից՝ մեռաւ առանց ժառանգ թողնելու:

Անգլիական զահի վրայ չորս հարիւր տարւայ ընթացքում բարձրանուեւ են վեց հարստութիւններ, որոնք մէկմէկի ետեւից սերհատուեւ են ենթարկելով ժառանգական հիւանդութիւնների: Լանկէստրեան տոհմը տալիս է ընկնաւոր Հէնրիկոս IV-ին, վաճառու և անբարոյական Հէնրիկոս V-ին և ապուշ ու խելացնոր Հէնրիկոս VI-ին: Տիւզորների տոհմից սերուեւ են Հէնրիկոս VIII արիւնըռուշտ և խստասիրտ թագաւորը, Եղիսաբէթ թագուհին, որը իւր արտասովոր խելքի հետ միասին յայտնի էր իւր անզուսպ բնաւորութեամբ և մեռաւ ինչպէս մելամաղձոտ: Չնայելով որ նա կանացի հիւանդութեան պատճառով ստիպուած էր անպսակ մնալու, բայց նա յայտնի էր իւր տարօրինակ վաճառուութեամբ. նա առանձին բաւականութիւն էր զգուեւ գրգռել տղամարդիկներին մերկացնելով նրանց առաջ իւր կուրծքը և պորտը: Սախլարտների տոհմի մէջ Կարլոս II-ը յայտնի էր իր բթամտութեամբ և բարոյական զլացմունքների կատարեալ բացակայութեամբ: Յակոբ II-ը ապուշ էր և չափազանց վաճառու, նորա յաջորդ Կարոլոս-Էդուարդը այնքան ապուշ էր որ չկարողացաւ հասարակ կարգաւ ու զրել սովորել և մեռաւ անժառանգ ինչպէս խելացնոր և անպամալոյճ:

Նոյն երևոյթը նկատուամ է նաև Ֆրանսիայի թագաւորական սոհմերի մէջ: Նրանց պատմութիւնը լիքն է ջղայնութեան, խելացնորութեան, ապշութեան, անառակութեան և բարոյական զգացմունքների կատարեալ բացակայութեան անթիւ և անհամար օրինակներով: Այդ օրինակները այնքան յայտնի են որ մենք աւելորդ ենք համարում կանգ առնել առանձին առանձին անձնաւորութիւնների վերայ:

Նոյն իսկ մեր հայկական աղքատիկ պատմութեան մէջ կարելի է գտնել ժառանգական սերհատութեան օրինակներ: Արշակունեաց հարստութեան ներկայացուցիչների մէջ յայտնի է Տրդատ թագաւորի և նորա ամբողջ ընտանիքի խելացնորութիւնը: Տրդատից առաջ մեր անդրանիկ քրիստոնեայ Աբգար թագաւորը յայտնի է իւր բորոտութեամբ, որը միշտ միացած է լինում ջղային խանգարմունքների հետ և Աբգարի յաջորդ Սանատրուկը յայտնի է ինչպէս ազգասպան և քարասիրտ անձնաւորութիւն, որը բաւականութիւն էր գտնում հալածելով քրիստոնեաներին: Նորան յաջորդում է մի ուրիշ Արշակունի-Երւանդ Բ-ը, որի ջղայնութիւնը սուսկի կարգն է անցել. նա իւր դժնի հայեացքով կոտորատում էր քարերը: Այնուհետև գալիս է Արտաշէսի որդի Արտաւազդը, որի խելացնորութիւնը ցոյց տալու համար ժողովուրդը պատմում էր որ նա դեւերից է ծնւած. «Մարք գողացան զմանուկն Արտաւազդ և դե փոխանակ ետին» ասում է ժողովրդական ականդութիւնը: Նա մեռաւ խելացնորութեան ժամանակ դահավիժելով Մասիս սարի անդունդներից մէկի մէջ:

Արտաւազդով վերջանում է Արշակունիների ճիւղը և նորան յաջորդում է մի ուրիշ ճիւղ, որը նոյնպէս ընդհատուած է ժառանգական սերհատութեամբ: Այդ ճիւղի ներկայացուցիչներից չիշենք միայն Արշակին, որը իւր սեռական կրքերին բաւականութիւն տալու համար չքաշեց սպանել իւր ազգական գնելին և յափշտակել նորա կին Փառանձեմին: Նա մեռաւ Անյո՛ւ շ բերդի մէջ խելացնորութեան ժամանակ ինքնասպանութիւն գործելով: Արշակի յաջորդ Պապ թագաւորը յայտնի է բարոյական զգացմունքների կատարեալ բթութեամբ. «ինքն՝ իզանայր և զայլն իզացուցանէր» միամտաբար պատմում է նորա մասին Փաւստոս Բիւզանդը: Պապի յաջորդները

Արշակ և Վաղարշակ մեռան անժառանգ՝ թողնելով գահը մի երրորդ Արշակունի ճիւղի, որի թագաւորութիւնը տեւեց միայն երեսուն և հինգ տարի (387—422 թ.): Այդ նոր ճիւղը վերջացաւ Վաամշապուհի որդի Արտաշէսի օրով, որի հոգեկան դրութիւնը արտայայտելու համար Սահակ Պարթևը նմանեցնում էր նորան «ախտացեալ գառան» հետ:

Այդ օրինակները կարծում ենք բաւական են ցոյց տալու համար ժառանգականութեան ոյժը և նորա ահագին նշանակութիւնը ազգերի պատմութեան մէջ: Աւելացնենք և այն որ ժառանգական սերհատութեան նպաստող զխաւոր պայմաններից մէկը կազմում է արիւնակից ազգականների ամուսնութիւնը իրար հետ: Ինչպէս յայտնի է, իշխանական և թագաւորական ցեղերի մէջ ամուսնութիւնը համարեա միշտ կատարւում է միեւնոյն շրջանում. այդ սովորութիւնը ոչմիայն արգելք է լինում արիւնի թարմանալուն, այլ աւելի ևս սաստկացնում է ժառանգականութեան ոյժը, փոխանցելով ընտանիքի արատները սերնդին՝ միաժամանակ թէ հօր և թէ մօր կողմից: Այդ տեսակէտից խորին բիօլոգիական իմաստ է ստանում արեւելեան եկեղեցիների այն օրէնքը, որը արգելում է ամուսնութիւնը ազգակցութեան մինչև չորրորդ և վեցերորդ աստիճանները: Այդ օրէնքը հիմնաւոր է մասնաւանդ այն դէպքում, երբ ամուսնացողների տո՛մի մէջ արդէն մուտք են գործել ժառանգական սերհատութեան նշանները: Սակայն նկատւած է որ այդ ժառանգական սերհատողները դժբաղդաբար միշտ մի առանձին հակումն են ցոյց տալիս դէպի արիւնախառնութիւնը. եգիպտական և հռոմէական սերհատող գահակալները ամուսնանում էին ոչ միայն իրենց մերձաւոր ազգականների, այլ իրենց հարազատ քոչրերի և մինչև անգամ հարազատ մայրերի հետ: Կարծես մի գերբնական ոյժ կամաւ մղում է նրանց մէկ-մէկու զիրկը, ցանկանալով մի կողմից շտապեցնել ախտաւոր սերնդի սպառումը, իսկ միւս կողմից պաշտպանել առողջ անհատներին նրանց վարակիչ ազդեցութիւնից: Այստեղ կատարւում է բնութեան այն մեծ օրէնքը, որը անւանւում է «Բնական ընտրողութիւն» (естественный подборъ) և որի շնորհիւ հին, փտած և ախտաւոր սերունդները ստիպւած են տեղի տալ նոր, առողջ և թարմ ոյժերի առաջ:

Աղբիւրներ.

Крафтъ-Эбингъ—Психіотрія (Թարգմ. դերմաներէնից);
Эрлицкій—О причинахъ душевныхъ болѣзней; Деже-
ринъ—Наслѣдственность и болѣзни нервной системы;
Ломброзо—Геній и помѣшательство (Թարգմ. իտալերէնից).
Ch. Féré—La famille nevropathique; P. Jacobi—Etude
sur la sélection dans ses rapports avec l'hérédité chez
l'homme; Cuiller—Les frontières de la folie; Orshansky—
Etude sur l'hérédité normal et morbide. Mém. de l'Ac.
Imp. des sciences de St.Petersbourg t. XLII, № 9.

Հ Ի Ա Ժ Ե Շ Տ

Գ Ե Ր Ե Ն Ի Կ Գ Ե Մ Ի Ր Ճ Ե Ա Ն Ի

Բաժանման ժամը հասնում է ահա
Ինչպէս բաժակը մահւան թունով լի.
Օ՛ նա չէ սպասում, միշտ անգութ է նա,—
Նա մահւան նման երազներ չունի...
Բարեւա մնաք, դուք, իմ բարեկամներ
Եւ դուք վշտերիս միշտ համր վայրեր...

Չեզ ինչ փոյթ թէ ես հեռու ձեզանից
Պիտ տանջեմ անխօս, անմուռնչ, գաղանի...
Անվերջ տանջելիս էլ չէք սեանիլ ինձ,
Մենակ և հեռու իմ հողին կը լինի...
Վշտերի ժամին յիշեցէք դուք ինձ,—
Եւ ձեր սրտերում իմ հողին կ'ապրի...

Ո՞վ զիտէ, գուցէ տանջողի սրտից
Վերջին յոյսերն էլ կորչին հեռանան.
Գուցէ շիրիմը այս վաղ օրերից
Ինձ պատրաստել է իմ սառ. օթւան:
Աղօթքների մէջ յիշեցէք դուք ինձ
Եւ ձեր սրտերում կ'ապրեմ չաւիտեան:

Եթէ ինձ յիշէք՝ ինչպէս չաւիտեան
Կորած ընկերին՝ այդպէս յիշեցէք...
Յիշողութիւնը չի լինիլ ունայն,
Երբ արցունքներով նւիրագործէք...
Երբ դուք լաց լինէք,— օ Ես կ'լինեմ այն.
Արցունքի միջով իմ վիշտը տեսէք...

ԽՈՇՈՐ ԻՆՊՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Պատմութեան վաղեմի շրջաններում մենք գտնում ենք գրեթէ ամենուրեք հասարակութեան լիակատար բաժանումն զանազան աստիճանների, հասարակական դրութիւնների մի բազմատեսակ սանդղք:

Հին Հռովմում մենք տեսնում ենք պատրիկներ, պլեբէյներ, ասպետներ, սորուկներ. միջին դարերում՝ ֆէօդալներ, (աւատական), վասալներ, համքարական վարպետներ, քեարզահներ, ճորտեր և իւրաքանչիւր մի դասակարգի մէջ դարձեալ առանձին աստիճանաւորութիւններ:

Փոխադարձ թշնամութիւնը, դասակարգային անհաշտ կռիւները կարմիր գծի նման անցնում են բոլոր անցեալ հասարակութիւնների, հասարակական տարբեր դասակարգերի պատմութեան միջով: Ազատ և սորուկ, պատրիկ և պլեբէյ, ֆէօդալ և ճորտ, կարճ ասե՛նք՝ ճնշող և ճնշւած — կանգնած էին մշտական հակառակութեան մէջ, մղում էին միմեանց դէմ անընդհատ, մերթ թափուն, մերթ բացարձակ, հրապարակական կռիւ, մի կռիւ, որ շատ անգամ վերջանում էր կռուող դասակարգերի լիակատար կործանումով:

1) Տես «Մուրճ» 1895 թ. № 1.

Ֆէօդալական հասարակութեան անկումից առաջացած ժամանակակից բուրժուական հասարակութիւնը չի ոչնչացրել դասակարգային հակադրութիւնները: Նա միայն առաջ է բերել նոր դասակարգեր, հարստահարման նոր պայմաններ, կուրի նոր ձևեր: Պասակարգային անտագոնիզմը հասարակացել է: Ամբողջ հասարակութիւնը հետզհետէ աւելի և աւելի բաժանուում է երկու թշնամական բանակների, երկու մեծ, միմեանց ուղղակի հակադիր դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի:

Ժամանակակից բուրժուա-կապիտալիստական դասակարգը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արգասիք երկարատև, աստիճանական զարգացման, արդիւնք հաղորդակցութեան և արդիւնազորութեան մէջ տեղի ունեցած մի ամբողջ շարք չեղաշրջումների:

Նա ինքը կատարեց պատմութեան մէջ վերին աստիճանի յեղափոխիչ դեր: Ձեռք բերելով իւր տիրապետութիւնը, նա քայքայեց բոլոր աւատական (ֆէօդալ), նահապետական շարաբերութիւնները, անխնայ հարւածներ տւեց ֆէօդալական կաշկանդող, բազմատեսակ կապերը և ոչ մի կապ այլ ևս չթողեց մարդկանց մէջ, բացի մերկ շահերից, բացի անզութ ճնադդ վճարից:»

—Մարդկային անհատական արժանաւորութիւնները նա դարձրեց փոխանակական արժէքի, մոցրեց ազատ մրցում, ազատ առևտուր, հաստատեց բացարձակ, չոր, անախթ հարստահարութիւն:

—Նա զրկեց պատկառանքից գործունէութեան այն բոլոր տեսակները, որոնց վրայ մինչև օրս նայում էին բարեպաշտ երկիրաճութեամբ. բժիշկ, իրաւաբան, քահանայ, բանաստեղծ և գիտնական—ամենքին դարձրեց նա իր վարձկան բանւորներ:

—Նա լուծեց նահապետական ընտանիքը, պատռեց ընտանեկան շարաբերութիւնների քնքոյշ-զգայական քօղը, դարձնելով նրանց մաքուր փողային հաշիւների:

Նա մերկացրեց միջնադարեան ծոյլ անշարժութիւնը և իւր հրաշագործութիւններով ցօյց տւեց, թէ որպիսի հսկայական արդիւնքներ կարող է տալ մարդկային գործունէութիւնը:

Որքան աւելի զարգանում է բուրժուազիան՝ այսինքն կապիտալը, նոյնքան աւելի զարգանում է պրոլետարեատը—ժամանակակից բանւորների այդ գոյքազուրկ դասակարգը:

Ֆարբիկանտի և բանւորի փոխադարձ յարաբերութիւնները մարդկային բնւորութիւն չեն կրում, այլ զուտ անտեսական: Ֆարբիկանտը սկսւում է, բանւորը—աշխատանքը: Միմիայն այդ արտադրութիւնը սահմանի մէջն է կապիտալիստը ճանաչում բանւորին, նրա և իւր մէջ ոչ մի ուրիշ յարաբերութիւն չի տեսնում բացի լոկ առձեռն վճարից: Ֆարբիկանտի համար բանւորը գոյութիւն ունի ոչ իբրև մարդ, այլ իբրև աշխատաւոր ձեռքեր:

Բոլոր նախկին դասակարգերը տիրապետութիւն ձեռք բերելով ձգտել են միշտ ապահովեցնել իրենց նւաճած դիրքը, ենթարկելով ամբողջ հասարակութիւնը իրենց շահադիտական նպատակներին:

Իշխող դասակարգը—բուրժուազիան—աշխատեց իրեն ծառայեցնել հոգևորականութիւնը և նա օգտոււմ էր նաև Մալթուսի թէօրիայով՝ աղքատութիւնը մշտնջենական օրէնք ցոյց տալու համար:

Փակտ է, որ նիւթական գրութիւնը մեծ ազդեցութիւն ունի ազգաբնակչական շարժումների վրայ: Որքան ցոյց են տալիս մինչև օրս եղած ապացոյցները, որքան ստատիստիկան է վիհացում, ազգաբնակչութեան ամենաարագ աճումը տեղի ունի այնպիսի անկիւններում, ուր ժողովուրդը ամենաաղքատն է:

Կերմանիայի ամենաաղքատ մասերում՝ Ֆրիստեն-գերբրգէ, Շւարցլալդ, Սիլեզիան և Տուրինգեան լեռներում, ուր ժողովրդի զբաղաւոր սնունդը գետնախնձորն է,—այդ անկիւններում մենք զբնում ենք ամենախիտ ազգաբնակչութիւնը: Որքան քիչ է բանւորի ռոճիկը, նոյնքան նա աւելի երեխաներ է արտադրում, նոյնքան աւելի մեծ է նրա ընտանիքը: Այդ ապացույցել են յայտնի Ֆիրխով և ուրիշ գիտնականներ: Պատճառն այն է, որ ընդհանրապէս աղքատ ժողովրդի մէջ սեռական զւարճութիւնը արբեցողութեան հետ անհատի ամենամեծ մխիթարութիւնն է կազմում:

Կապիտալիստ դասակարգը ուղեց իւր օգուտը քաղել նաև դար-
ւինականութիւնից:

Բուրժուա-դարւինականները գիտեն, որ անասնական աշխար-
հում տեղի ունի բնական ընտրողութիւն (sélection naturelle)
գոյութեան կուրի միջոցով, և որ այդ կուրը այնտեղ չաւի-
տեմական է, անխուսափելի: Այդ միեւնոյնը նրանք վերագրում են և
մարդկային հասարակութեան. նրանք սնուում են, որ գոյութեան
կուրը ինչպէս ներկայումս, նոյնպէս և ապագայում ճակատա-
գրական անհրաժեշտութեամբ, պէտք է շարունակել մարդկային
կեանքի մէջ. նրանք հաստատում են այդ, առանց հասկանալու, որ
մարդը՝ որպէս բարձրագոյն կազմակերպութեամբ օժտւած մի էակ՝
ընդունակ է ճանաչելու բնութեան օրէնքները, ընդունակ գիտակի-
ցաբար վերաբերելու դէպի այդ օրէնքները, ղեկավարելու և օգ-
տւելու նրանից...

Խօսք չկայ, որ ներկայ սեփականատիրական և արդիւնագոր-
ծական պայմաններում գոյութեան կուրը տեղի ունի նաև մարդ-
կային հասարակութեան մէջ: Հիմք չկայ սակայն եզրափակելու դրա-
նից թէ քանի որ մինչև օրս այսպէս է եղել, այսուհետև ևս նոյնը
կը շարունակել անփոփոխ, յաւիտեականաբար¹⁾:

Այդպէս դատում են բուրժուական իդեօլոգները:

1848 թւականը նշանաւոր էր Գերմանիայի տնտեսական կեանքի
զարգացման պատմութեան մէջ: Բուրժուազիան, որպէս անկախ,

¹⁾ Մենք չենք կարող վերացնել գոյութեան համար կուրի օրէնքը,
ինչպէս կարծել է թուում մեզ լօղւածիս հեղինակը. բայց մենք կարող
ենք այդ կուրը հասարակական կեանքում միշտ աւելի ու աւելի բարձր
պատւանդանների վրայ դնել, և այդ պատւանդանների բարձրութիւնները
պատմական ալ և ալ շրջաններում ցոյց կը տան թէ ո՞ր շրջանը աւելի
քաղաքակիրթն է եղել: Գոյութեան համար կուրը վաղեմիների մէջ ար-
տալաչառում է ալ կերպ և ալ պահանջների համար քան ներկայիս լու-
սաւորեալ աշխարհում, և ապագայումն էլ այդ կողմից չառաջդիմութիւնը
պիտի կապանալ ոչ թէ գոյութեան համար կուրի իտպառ վերացման մէջ
(դա անհնարին է), ալ այդ կուրի աւելի մեծ ազնւացման մէջ:

ինքնուրոյն կուսակցութիւն անցաւ քաղաքական ասպարէզ: Նա փշրեց բոլոր այն կապանքները, որոնք խոչընդոտ էին հանդիսանում արգիւնաբերութեան զարգացման, վերացրեց հաղորդակցութեան, մաքսերի սահմանափակումները, ազատ մրցում հրատարակեց:

«Laissez faire, laissez passer» — մանչեստերեան շկոլայի ջատագովներին ընդօրինակելով, յայտարարեց նոյնը գերմանական բուրժուազիան 1848 թ.: Եւ նա հասաւ իւր փափագներին:

Հարուստ բնութեան այլ և այլ բերքերով, մանաւանդ քարածուխով, երկաթով, պղնձով և այլն՝ Գերմանիան 20—30 տարիների ընթացքում այնպիսի հսկայական առաջադիմութիւն արեց ինդուստրիայի մէջ, որպիսին չէր եղել ոչ մի ուրիշ երկրում, բացի Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգներից: Այսօր Գերմանիան արգէն երկրորդ տեղն է բռնում Եւրոպայում իբրև արդիւնագործական երկիր և դեռ չաւակնութիւն ունի առաջին տեղը բռնելու:

Ինդուստրիայի այդ սանձարձակ և յանկարծակի զարգացումն էր պատճառը, որ հասարակութեան միջին խաւերը շատ շուտ ժամանակում ծայրայեղ քայքայման հասան: Յուսահատութիւնը պատեց: Միլիոնաւոր մարշիկ թողին կայքն և ինքնուրոյն աշխատանքը, կամ թէ ամեն ինչ վաճառելով, անցան սեփականագուրկների շարքերը: Գերմանական պրոլետարիատը աճեց հսկայական արագութեամբ: Իսկ դրա հետ օր աւուր ձգւեց, խորացաւ վիճը սեփականատէր և սեփականագուրկ դասակարգերի մէջ:

70-ական թւականների նշանաւոր ինդուստրիական կրիզիսը խիստ ծանր ազդեց ժողովրդի վրայ: Ամբողջ գասակարգեր ենթարկւեցին իսպառ կործանւելու վտանգին: Տագնապը տիրում էր ամեն տեղ. պէտք էր մի եւլք որոնել: Մարդիկ թողեցին գործունէութեան հին եղանակը, սկսեցին նոր պաշտօններ որոնել, որպէս զի կարողանային մի կերպ քարշ տալ իրանց գոյութիւնը ծանր կրիզիսի միջոցին: Ամեն ոք ն իրեց իրեն մի նոր կոչման, նոր գործունէութեան: Ո՞ր խենդը կը սլարապէր այլ ևս մանր ինքնուրոյն արդիւնագործութեամբ, երբ պատրաստի ապրանքները անասելի չափերով:

լցրել էին բոլոր շուկաները և հենց այդ առատութեան պատճառով գին չէին դնում: Ո՞ր խելացնորը կը շարունակէր այլ ևս սեփական արհեստը, և ո՞վ կը դիմէր գործարան մի այդպիսի տազնապալից ժամանակ, երբ գործարաններից խումբ-խումբ դուրս էին վոնդում բանւորներին...

Երիտասարդների համար միակ ելքը մնում էր ուսումը: Զգտում էին դէպի այնպիսի պաշտօններ, որոնց կարելի էր ձեռք բերել առանց փարայի օգնութեան և որոնք կարող էին ապահովել ընդմիշտ նրանց ապրուստը: Զափից դուրս շատացան երկաթուղիների, փոստերի ծառայողները, պետական զանազան պաշտօնեաները, գրագիրներ, կոնտորների ծառայողներ և հազար ու մի տեսակ ուրիշ գործակատարներ՝ քիմիկոսներ, անխնիկներ, ինժեներներ... վերջապէս իրաւաբաններ, բժիշկներ, գրական գործիչներ, արւեստագէտներ, աստուածաբաններ և այլն և այլն և այլն. բազմացան պոլիտեխնիկոմները, ռէալական և արւեստագիտական դպրոցները, գիմնազները: Համալսարանականների թիւը աճեց զարմանալի արագութեամբ:

Գերմանական համալսարաններում ուսանում էին՝

	սփ-ճ-Ֆ.	իբո-Ֆ.	Էծեշ.	Քեյթ-Ֆ.	ընդամենը.
1851	3095	4061	1827	3046	12,029
1861	4618	2789	2131	3499	12,037
1886	4832	5034	6869	9123	25,838
1889	5849	6304	8886	8255	29,294

Դժուար էր այդքան մասնագէտներին բաւականութիւն տալ: Պետական պաշտօնները, բուրժուաների գրասենեակները հերիք չէին տալիս. իւրիստների, բժիշկների, մինչև իսկ աստուածաբանների պահանջը համեմատաբար քիչ էր հասարակութեան մէջ, իսկ աւարտող մասնագէտները տարէցտարի բազմանում էին: Վարձ միջոցում չափից դուրս աճեց սպարապ համալսարանականների թիւը: Այդպիսով ծնունդ առաւ Գերմանիայում աշխատաւոր և անգործ ինտելիգենտների մի հազարն բազմութիւն, որ ներկայ դարու բարբառով կոչւում է «մտաւոր պրոլետարիատ»:

Գերմանիան առաջին երկիրն էր, որ ամենամեծ քանակութեամբ մտաւոր պրոլետարիատ ուեց: Գերմանիան առաջինն է միևնոյն ժամանակ, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին օրինակ ուեց իւր սեփական պրոլետարիատի լաւագոյն կազմակերպութեան:

(Շարունակելի)

ԳՐԱԽՑՍՈՒԹԻՒՆ

ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ս. Էջմիածնի միաբան
Գ Ա Լ Ո Ւ Ս Տ Տ Ե Բ-Մ Կ Բ Տ Չ Ե Ա Ն Ի

Ա.

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ. Ա. Մ.—Քննական պատմութիւն Հայոց ըստ նորագոյն պատմական, լեզւաբանական և բանասիրական տեղեկութեանց: Մասն Ա. Նախնական ժամանակ: Հրատ. Թիֆլ. Հրատ. ընկերութեան № 84: Թիֆլիս տպ. Մ. Նարաձէի և ընկ., 1895 թ. Ը+278 էրես, քառաձալ, զինն է 1 րուբլի:

1. Սրանից ուղիղ 15 տարի առաջ, 1880-ին, Կ. Պոլսում հրատարակեց Ա. Մ. Գարագաշեանի լուրջ և ներհուն աշխատութեան—Քննակ. Հայոց Պատմութեան—Ա մասը ¹⁾: Հալ բարձր՝ ալսինքն է՝ կրթւած հասարակութիւնից,—որովհետև հաշերս չունինք ուրիշ բարձր հասարակութիւն,—անհամբերութեամբ սպասւած այդ գեղեցիկ աշխատութեան միւս հատորները լոյս չտեսան շատ հեշտ մակարեղի պատճառներով: Վերջին ուսութեան պատերազմից ի վեր՝ մինչև այսօր Թիւրքիւտում անպիտի մի բարբարոսական կառավարութիւն է իշխում, որ անհարկն է դարձել նոյն իսկ Հալաստան անունը գործ ածել առանց քաղաքական ամենավտանգաւոր լանցագործ դառնալու. օրացոյցներից անգամ ջեջում է Վարդանանց անունը, ուստի և պարզ է, որ անկարելի է հարկի անցեալի մասին որ և է աշխատութեան երևան դալը այդ տէրութեան սահմաններում:

Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը լաւ միտք է չղացել՝ ձեռնարկելով վերատին և ամբողջութեամբ լոյս ընծալելու Գարագաշեանի մասամբ միայն հրատարակւած աշխատութիւնը:

¹⁾ Կ. Պոլս, տպ. Յովսէփալ Գալաֆեան, 1880 թ.

Այդ ընկերութեան ազդից տեղեկանում ենք, որ Քննական պատմութիւնը բաղկացած է 4 մասից: Ա մասը պարունակում է Հալոց նախնական ժամակը. Բ մասը՝ Արշակունիների հեթանոսութեան ժամանակ. Գ մասը՝ Արշակունիների պատմութիւնը քրիստոնէութեան ժամանակ, մինչև Նրանց բարձումը, և վերջապէս Գ մասը պարունակում է Ե-դ դարի գրական շարժումը և կրօնական պատերազմները:

Աչքի առաջ ունենալով գործի մեծ կարևորութիւնը և գիտական արժանատրութիւնները՝ չարմար դատեցինք իւրաքանչիւր մասի կամ հատորի համար առանձին խօսել, վերջում դնելով մեր ընդհանուր եզրակացութիւնը:

Առ ալժմ լոյս են տեսել Գարագաշեանի աշխատութեան Ա և Բ հատորները: Ա հատորը նոյնութեամբ արտատպւած է Պոլսի հրատարակութիւնից (1880), ուստի և զարմանալի չէ որ ունի հնացած մասեր: Գիտութիւնը կանգ չէ առնում: Հալագիտութիւնը, արեւելագիտութիւնը և մասնաւորապէս բեկռագրերի ուսումը այս վերջին երկու տասնեակ տարիներում ահագին քաջեր են արել առաջադիմութեան: «Յարգելով, ասում են հրատարակիչները, մեծապատիւ հեղինակի ցանկութիւնը՝ Ընկերութիւնս ոչ մի փոփոխութիւն չարաւ բնագրի մէջ, ոչ լեզու և ոչ բովանդակութեան կողմից, թողնելով քննադատութեան՝ որոջը գրածքի արժանատրութիւններն ու թերութիւնները» (Եր. գ.): Ես էլ ընկերութեան և ուրիշների կողմից արած որ և է՝ թէև չաջող՝ փոփոխութեան հակառակ եմ: Այն տեսակ գրողների, ինչպիսին Գարագաշեանն է, զըրւածքը չեն սրբագրում, թէև նոյն իսկ չափնի վրիպակներ բովանդակէ: Սակաջն լաւ կը լինէր որ ինքը հեղինակը նորից աչքից անյիպսնելով իւր աշխատութեան Ա մասը, համաձայնեցնէր Նրան գիտութեան ընձեռած վերջին տեղեկութեանց և նոր գրւտերի հետ:

Բայց այս բանումն էլ խիկապէս ասած, չենք կարող մեղադրել չարգելի հեղինակին, որովհետև հաղիւ թէ Պոլսում պալմանները—գիտութեան հետեւու համար—աւելի չաջող լինին, չհաշւելով կառավարութեան բարբարոսութիւնը, քան թէ մեղանում, ուր վարչական որ և է արգելք չկայ գիտութեամբ զբաղողների համար: Ուսումնական կենդրոններից հեռաւորութիւնը, մատենադարանների պակասութիւնը, գիտութեամբ մասնագիտորէն հետաքրքրողների կատարեալ բացակայութիւնը և այլ նման պայմաններ թէ Պոլսում և թէ մեղանում՝ են և կը մնան դեռ երկար ժամանակ իբրև շլատիչ և խանգարիչ ուժեր, որոնց դէմ մաքառելը ամեն մարդու և ամեն բնատրութեան բանը չէ:

2. Կարճ և ամփոփ առաջաբանով (Եր. է-Ը) հեղինակը բացատրում է իւր սկզբունքները. ճշդիւ աղբւրները, որոնք զուտ ճշմարտութիւնը չոկել պատմականը զրոյցից և առասպելից, արհամարհել ազգային պար-

ծենկոտութիւնը: «Անասկար, միանգամայն ծաղրելի է նաև զգեցիլ պարծենկոտութեամբ պատմութիւնը փծուն գովեստներով փալլուն երևեցուցանել ջանալ, Չիք ինչ որ աչնպէս նւաստացուցանէ զիւցազնական գործոց անգամ բուն լարզը՝ ինչպէս սին (դատարկ) և պարծուկ վերադիրներ: Իրք պարտին խօսիլ ի պատմութեան ոչ թէ ներքոյն: Ազգային սնապարծութիւնը շողքորթողներուն մեծագոյն վնասակարութիւնը սա է, որ կ'ապականեն հասարակաց ուղիղ բանը (=դատողութիւնը), և խուլ գործեն զփողովուրդն ձայնի քննադատութեան: Անկարելի է այս զեղեցիկ մտքերին չհամաձայնիլ: Վաղուց արդէն ժամանակ էր դիտութեան ձեռք բերած արդիւնքները հանրամատչելի ձևով տալ և հաշ զարգացած հասարակութեանը, որ միջոցներ և հնարաւորութիւն չունի մասնադիտական և ցրիւ (թէ հաշ և թէ գլխաւորապէս՝ երոպական լեզուներով) հետազոտութեանց և մենագրութիւններին հետեւելու: Մեր պատմութեան ամբողջութիւնը (մինչև Ս-դ դարի վերջը) անցնել քննադատութեան բովից, եղած խուզարկութեանց և զիտական աշխատանքների տրդիւնքները համախմբել, աւելացնելով և իւր սեպհական դիտողութիւնները, երբեմն նաև հանձարեղ մտքերը—ահա Գարագաշեանի գործը:

Այս խօսքերից լետոյ աւելորդ է թւում մեզ Բնական Պատմութեան լաւ կողմերի, առաւելութիւնների վրայ երկար կանգ առնել, ապահով լինելով որ ընթերցողը անձամբ կը ծանօթանայ այդ՝ մեր գրականութեան մէջ հազւագիւտ՝ աշխատութեան հետ: Ուստի և մեզ մնում է մատնացոյց լինել աչն կէտերին միաչն, որսնք՝ մեզ թւում է թէ՛ մասամբ հնացած են կամ անճիշտ, կամ որոնց մասին մենք ուրիշ կարծիք ունինք, ուրիշ հաւեցակէտ, կամ նոր տեղեկութիւններ: Հաշ ստանի և հալոց պատմութիւնը, ինչպէս պիտի տեսնենք ներքևում, կլոր թւով մօտ 3000 տարւաչ անցքերի պատմութիւն է, հազար տարի Քրիստոսից առաջ, ևրկու հազար տարի Քրիստոսից լետոյ: Գարագաշեանի 4 հատորը այդ ահազին չըջանի առաջին կիսին են նւիրւած և պարունակում են մօտ 1500 տարւաչ պատմութիւն:

3. Նրկու կարճ երես (1-2) հեղինակը նւիրում է իբրև ներածութիւն կամ «մուտք» հալոց պատմութեան բաժանմանը, տրոհելով ամբողջ հաշ պատմութիւնը երկու մաս. Նախնական և Պատմական: Նախնական է անւանում սկզբից մինչև Տիգրան մեծը (90 տարի Քրիստ. առաջ), Պատմական՝ Տիգրանից (Բ-դ) մինչև մեր օրերը: Յետոյ թւում է նախնական պատմութեան աղբիւրները. ազգային վէպեր, լոյն պատմիչներ, հրէաների գրքերը, բնեւագրեր:

Այստեղ երկու բան ունինք դիտելու: Տիգրան մեծին զնել իբրև դարազրուկ՝ շատ լաջող է. բայց նրանից առաջ էլ եղած տեղեկութիւնները, թէև ցանցառ, հատ ու կտոր, սակայն պատմական են, ուստի և

ն ախնականը իբրև հակադրութիւն պատմականի անճիշդ ասացում է:

Այդ անճշտութիւնը մանաւանդ աչքի է ընկնում ալփմս՝ 1880 թւից լետո՛ց երբ այս 15 տարուէ ընթացքում առաջադիմութեան մեծ քաղեր կատարւեցան Հայաստանի բնեւագրերի վերձանութեան գործում, նոր արձանադրութիւններ գտնւեցան, եղածների ընթերցւածները ճշուեցան և Նախահաչերի թագաւորների մի այնպիսի ցանկ ստացանք և ժամանակագրութիւն, որ աւելի ճիշդ են քան՝ օրինակ՝ Տիգրան մեծի չաջորդներին: Եւ այդ բոլորը առաջնակարգ աղբււրներից, այն է՝ նախահաչերի թագաւորների թողած բուն իսկական արձանագրութիւններից: Եւ այն ամենը համեմատած ասորեստանեան բնեւագրերից հանած տեղեկութեանց հետ, որով երկուսեք՝ ասորեստանեանը և նախահաչերիանը՝ իրար լրացնում են և միմեանց հաւաստութեանը երաշխաւորում:

Ինչո՞ն հեղինակն էլ ասում է, թէ «ազբւր անունը տալ թերևս աւելի չարմար էր բնեւագիրներուն, բայց այս կնճուտ արձանագրութիւնները կարգալու եղանակները զեռ ոչ այլ ինչ են, եթէ ոչ հանձարեղ փորձեր հին առեղծուած մը լուծելու» (եր. 2):

Ալփմս դժւար թէ այլ ևս որ և է կասկած կալ Հայաստանի բնեւագրերի ընթերցման վերաբերութեամբ: Նրանք զրւած են միևնոյն վանկագրերով և գաղափարագրերով, որով զրւած են ասորեստանական արձանագրութիւնները Քրիստոսից 8—9 դար առաջ: Ուստի և դժւարութիւնը ոչ թէ կարգալու, այլ վերձանելու—թարգմանելու մէջն է, քանի որ արձանագրութեանց լեզուն մեզ անծանօթ է: Սակաւն աղ վիշտակարանների ընդհանուր լմատը (օր. թագաւորների անունները, ազգանունները, քաղաք, երկիր, մարդ, գետ, շինութիւն, աստածութիւն, այլ և այլ առարկաներ, թւերը ևալն) շնորհիւ գաղափարագրերի և որոշիչ նշանների (determinativ) չաճախութեանը մեզ բոլորովին հասկանալի են. ¹⁾

¹⁾ Տես և իմ չօղւածը «Ուրարտեան բնեւ. լեզուն» արտատպ. «Արարատ» ամսագրից, 1893, էջմիածին:

²⁾ Մեր երկրի նախապատմական ժամանակից, քարի, բրոնզի դրերից, կան արդէն բաւական մեծ ժողովածուներ Կովկասեան թանգարանում (Փիֆլիս), Պետերբուրգ, մանաւանդ Բերլին և ուրիշ եւրոպ. քաղաքներում: Յաւանի են վերջին տարիներս կատարւած Շանարի և դը-Մորգանի հետախուզութիւնները: Մասնաւորապէս առատ նիւթ տւին Ֆիրխովի նախաձեռնութեամբ կատարւած դր. Բելքի սեղումները և 1893-ին էմ. Ռիուլերինը, Տես Archäologische Forschungen in Armenien, Aus den Verhandlungen der Berliner anthropologischen Gesellschaft; Sitzung von 21 Januar 1893, նոյն տեղում, Sitzung von 21 April 1894: Archäologische Thätigkeit im Jahre 1893 in

Ուրեմն և նախահայերի դարը բոլորովին պատմական է, և այդ ժամանակամիջոցից մեր ունեցած տեղեկութիւնները՝ թէև միակողմանի, բայց աւելի կապակցեալ և անընդհատ են, քան բուն հայկական առաջին դարերից (սկսած Տիգրան Ա.ից) մեզ հասած կցկտուր պատուիկները:

Այսպիսով ուրեմն Գարագաշեանի բաժանումը կարելի է ընդունել միայն այն պայմանով, որ նախնականը հասկացւի նախնական-պատմականի և ոչ նախապատմականի իմաստով: ²⁾

4. Երկրորդ՝ աւելի կարևոր՝ զիտելու բանն այն է, որ Գարագաշեանի նախնական (պատմական) ժամանակը մեր կարծիքով անհրաժեշտ է բաժանել երկու բալրովին տարբեր շրջանի. ա, նախահայերի շրջան, բ, հայերի (բուն, հնդերոպացի հայերի) սկզբնական ժամանակ: Նախահայերի անունով պէտք է կոչել այն շրջանը, որից մնացել են մեզ Հաչատուանի բևեռագրութիւնները, ինչեքորդ դարի առաջին կիսից մինչև եօթներորդ դարի վերջին կէսը Քրիստ. առաջ: Այս շրջանում բուն հայերի լիցատակութիւն չկազ և ոչ մի տեղ, և Հաչատուանում ապրում էր բարձր քաղաքակրթութեան հասած մի ժողովուրդ (նախահայերը) որի լեզուն ոչ մի ազգակցութիւն չունի հազ լեզւի հետ և չէ հնդերոպական: Շատ ուշ պատմութեան մէջ երևան եկող հայերին Նախահայերի հետ նույնացնելու և ոչ մի, գէթ ամենափոքր, կուան ունինք:

Այսպիսով ուրեմն՝ Հաչատուանն ունի իւր պատմութիւնը հայերի պատմութիւնից առաջ և ամենայն հաւանականութեամբ մենք Հաչատուանի առաջին բնակիչները չենք նույն իսկ այդ երկրի պատմական շրջանում ³⁾:

5. Քրեական. Հալոց Պատմութեան Ա. գլուխը (էջ 3—8) ներառած է հազ ազգի ծագմանը: Հայերը հնդերոպացիներ են, ինչպէս լեզուն է ցոյց տալիս: Քրիստոնէութիւնը ընդունելուց շատ աւելի կապում են նրանք իրենց ծագումը հրէական աւանդութիւնների հետ: Հերոդոտոս և ուրիշ չորս գրողներ հայերին ցեղակից և համալեզու են համարում փոխազգիներին: 7 դ դարի վերջերում և 8 դի սկզբներում խոստում են առաջաւոր Ասիա հնդերոպական ցեղեր՝ սիլիթացիներ, կիմերացիք և այլն, որոնք տակն ու վրաջ են անում ամբողջ այդ աշխարհամասը, կործանում են սելուկիւններ, սելուզիան և անում ժողովուրդներ: Ալեքսանդրականները, գրեթէ բոլորն էլ, կարծում են որ այդ գաղթականութեանց հետ

Transkaukasien. Բելքի և Ռեուլերի գտածների չար և նման մի ժողովածու ունինք և էջմիածնում, Գատեան սարկաւազի պեղումներից: Այս բոլոր պեղումների մեծագոյն մասը կատարւել է Գանձակի նահանգում (Ուտի և Արցախի Հին-Հաչատուանի):

¹⁾ Խորենացու պատմութեան մէջ եղած աղօտ ակնարկութիւնները Հաչատուանի բնիկների, այն է՝ նախահայերի մասին՝ տես մի տեղ ժողովածու եւ «Ուրարա. բևեռագրերի լեզուն» եր. 6-9 ծնթ. 2.

եկան և Հաչերը, Հաչաստան մտնելով հաւանակոտնաբար արևմուտքից: Սակաջն Գարագաչեան, չիչելով հանդերձ Ռոլինսոնի, Լընորմանի, Լուի գը-Րոբերի ¹⁾ այս կէտում միմեանց համաձայն կարծիքները, այսուամենայնիւ տրամադիր է կարծել, որ հաչերը շատ աւելի կանուխ, 7-դ դարից շատ և շատ առաջ, ապրում էին Հաչաստանում: Իսկ այս երկրում գտնւած բեռնագրերը համարում է աւելի հին «քուչեան ցեղերէն մնացած», ուրեմն և 9-դ դարից շատ առաջ:

Ուրարտու կամ Արարատ անունը գործ է ածուծ ասորեստանեան արձանագրութեանց մէջ, ինչպէս և Ս. Գրքում Հաչաստանի համար, թէ նախահաչերի և թէ հաչերի ժամանակ: Նախահաչերի արձանագրութեանց մէջ այդ անունը չէ հանդիպում ²⁾: Այսպիսով՝ օրինակ՝ Սենեքերիմի որդիների փախուստը՝ չիչած սուրբ գրքում՝ ընկնում է նախահաչերի ժամանակ, մինչդեռ Նրեմիա մարդարէի Արարատեան թագաւորութեան չիչատակութիւնը Կիւրոսի (Տիգրան Ա.ի ժամանակակից) ժամանակ՝ վերաբերում է բուն հաչերին: Միևնոյն անւանակոչութեամբ շատ անգամ միևնոյն երկրի տարբեր ժողովուրդներ են անւանուում: Հին անունը շարունակուում է տրւիլ և նոր եկած ցեղերին, ինչպէս որ մենք այսօր էլ լաճախ ֆրանսիացիներին անւանում ենք հին գալլերի անունով՝ գաղղիացի, կամ սասունցիները, թուրք-օսմանցիներին անւանում են ռոմ, այն է՝ Հուռոմ, այսինքն չոյն-բիւզանդացի:

Գարագաչեանի համար թէ հաչերը և թէ մեր որոշած նախահաչեր «հին Արարատեան» թագաւորութիւնն է, հաչերէնը «Մեծ Հաչոց և բուն Արարատեան ցեղի լեզուն է»:

6. Քննական Պատմութեան Բ գլուխը (եր. 9—23) նւիրւած է Հաչաստանի աշխարհագրութեան: Այս գլխում ստիպւած ենք անել հետեւալ զիտողութիւնները:

Խոշոր թիւրիմացութիւն է կարծել, թէ Ստորին Կովկասը գտնուում է Կուր գետի և Կովկասեան գոտու միջև: Յալտնի է որ աշխարհադիրները Ստորին կամ Փոքր Կովկաս են անւանում Հաչկական ընդարձակ

¹⁾ Գը-Րոբերի ջանքերը՝ ցոյց տալու համար, որ նախահաչերի լեզուն սեմական է, նոյնպէս անչաջող անցան և հետեողներ չլտան, ինչպէս Մորզմանի փորձերը՝ նոր հաչերէնով (գրաբար և աշխարհաբար խոսք) բացատրելու այդ արձանագրութիւնները:

²⁾ Ճիշդ այնպէս՝ ինչպէս որ հաչերիս համար խորթ ևն օտար ազգերից մեզ տրւած Արմէն և Արմենիա անունները: Նիկոլային նմանութիւն է գտնում Չախալուի արձանագրութեան մէջ չիչած Ուրտախինի (տող 5-րդ) երկրի և Ուրնորտու անունների մէջ և նոյնպիսով է: Հազիւ թէ: Տես նրա հրատարակութիւնը Климобразная вадопись Русы I въ Келаны-Кпрлавы (Алуцалу) եր. 4. արձանագր. n° XV. (Москва, 1893):

բարձրաւանդակները հիւսիսից եզերող շղթաներին, որոնք ձգւում են Մեծ Կովկասին զուգահեռաբար, արեւմուտքից արեւելք, սկսելով Սև ծովի ափից մինչև Կուրի և Երասխի գետահովիտները խառնուրդը: Ուստի և սխալ է ասել «ի մէջ Կուր գետոջ և Կովկասեան գօտւոջն կը գտնենք լեռանց շղթայ մը, որ Կովկասեան գօտւոջն հետ դրեթէ հաւասար ուղղութեամբ՝ կ'ընթանայ չարեւից չարեմուտս, և է Ստորին Կովկասն հայոց, կամ լեառն Մթին ըստ Խորենացւոյն» (Խորեն. Բ. Ը.):

Խորենացու «Մթին լեառը» կարող է լինել առ առաւելն Ստորին Կովկասի շղթաներից մէկը, բայց ոչ երբէք ամբողջ Ստորին Կովկասը, որ ձգւում է Խիօնի և Կուրի երկարութեամբ, 500 վերստից աւելի, երկու գետերից հարաւ, կրելով զանազան անուններ ¹⁾:

Կովկասից դէպի Ստորին Կովկաս հիւսիսից հարաւ ձգւում է Սուրամի լեռնաշղթան, որ և միացնում է երկու Կովկասները, կամ լաւ եւ՝ բուն Կովկասը Հաչկական բարձրաւանդակների հետ: Աշխարհագրական առումով՝ հաչկական բարձրաւանդակների և բուն Կովկասեան շղթայի միջև՝ լեռնալանջերը և դէպի գետահովիտը ցածրացող զառիվայրերը՝ գետահովիտի հետ միասին՝ կազմում են Վրաստանը, և աւելի արեւելք՝ Աղւանքը: Իսկ Սուրամի լեռնաշղթայից դէպի արեւմուտք՝ Իմէրէթիան և միւս մանր վրական երկիրները:

Նոյն սխալը Ստորին Կովկասի աշխարհագրական դիրքի մասին կրկնում է և եր. 248:

7. Սխալ է նաև Ստորին Կովկասի մէջ դնել «Ալանաց և Ճորալց» պատմական հռչակաւոր դռները: Երկուսն էլ գտնւում են բուն Կովկասեան շղթայում: «Այս լեռներէն (Ստորին Կովկաս) ասդին անցնել անհնար էր, բայց եթէ մեր պատմութեան մէջ «Կապան» կամ «Գուռն» կոչւած նեղ կիրճերէ, որ սխալ էին Կապանն Ճորալ՝ Վրաց ձեռքը, և Գուռն Ալանաց կամ Կասպից՝ Աղուանից ձեռքը» (եր. 9):

8. Պէտք է դիտել նաև՝ որ Պահակ կամ Գուռն Ճորալ, ալթայեան Գարբանդը, ոչ թէ վրաց, այլ աղւանից ձեռքն էր: Ընդհանրապէս այս նշանաւոր կիրճերի մասին Գարագաշեանի ունեցած գաղափարը չփոթ է ²⁾: Աջտեղ ասրբեր կրճեր է համարում Ալանաց և Ճորալ դռները, տալով մէկը վրացիներին, միւսը աղւաններին, մինչդեռ լեռոջ նոյնացնում է այդ

¹⁾ Աճարալի լեռներ, Իմերէթեան, Թրիալեթեան (Արջևան), Ծալկալի լեռներ և այլն:

²⁾ Այս Գուռների անւանակոչութեան մասին կարծիքների մեծ տարբերութիւն կայ: Մենք Պատկանեանի հետ Ճորալ գուռը համարում ենք Գարբանդը. տես ռուս. թարգմ. Խորեն. Աշխարհ. եր 38, ծանօթ. 137. (Арм. географ. VII вѣка, Спб. 1877). տես նաև «Պատմ. վրաց», (Վենետ. 1884) երևա 14. ծանօթ. 1:

երկուսը ասելով. «Ամուսնի շնորհակերտ թուի լինել ամուսն բերող ի կրծիս, որ կոչէր Դուռն Ալանաց կամ Կապան ճորայն» (Եր. 247):

9. Աէտք է աւելացնել նաև այն, որ Հնարակերտը ոչ մի դէպքում չէ կարող գտնուել Կովկասեան լեռնաշղթայի պահպանների մէկի կամ միւսի մօտ ¹⁾, այլ գտնուում էր առանց երկբարութեան Կուրից հարաւ (աջ ափին), վրաց, հայոց և աղւանդի սահմանամիջում, Թ Ֆ Փ Ղ Ր Ս Ր և Գ ա ն ձ ա կ ի մ ի ջ և:

Այս գրածքի ծրագրից զուրս է մենագրական բնաւորութիւն ունեցող ապացոյցներ բերել մեր այս կամ այն աստեթեանը վկայող: Հնարակերտի համար բաւական է չիչել Գւլինի «մղոնաչափութեանց» ցանկի վկայութիւնը, որ գնում է Հնարակերտը Տիզլիսի և Պարտուսի միջև: Տըփղիսից մինչև Հնարակերտ՝ 70 մղոն, Հնարակերտից (կամ Հունարակերտ) մինչև Պարտուս (ալթմեան Բարդա) 100 մղոն (մղոնը հազար քալ) ²⁾:

10. Նոյնպէս թիւրիմացութիւն է կարծել, թէ Խորենացու «ալիտակափառ» սարը Արագածն է (Եր. 10): Ճիշդ կերպով խօսելով հայոց լեռներից միայն և միմիայն Մեծ Մասիսն է, որ չաւերժական ձիւներով ծածկւած է, և ամառը՝ երբ շրջապատի բոլոր գաղաթները մերկանում են ձնից՝ նա մնում է ս ս ի տ ա կ ա փ ա ու: Միւս գաղաթները 10—12 հազար ոտնաչափ բարձրութեամբ, ինչպէս նաև Արագածը (13,436 ոտ.) բոլորովին լերկանում են ամառը, տեղ-տեղ միայն իրենց հիւսիսային լանջերի խ ո ո ռ չ ն եր ու մ պահելով ձիւնի դանգաւածներ:

Վերջապէս Խորենացու հատուածն էլ շատ պարզ է և առանց որ և է խրթնաբանութեան: Թիւրիմացութիւնը կարող է ծագել միմիայն երկրի տեղագրութեանը անձանօթ լինելուց: Խորենացին իրեն միայն չատուկ վարպետ գրչով նկարագրելով արարատեան դաշտը՝ որոշում է երկու լեռն՝ Հիւսիսային (==Արագածը) և Հարաւային (==Մասիսը):—«Ի թիկունս Հ Ր Ը Ս Ր Ս Ո չ լ Եր ի ն ն, որ անուանեցաւ Արագած»՝ իսկ ահա թէ ինչպէս է

¹⁾ Այդ պահակներն են ալթմեան Դարիալի անցքը Վրաստանում, և Դարբանդը՝ Աղւանքում:

²⁾ «Վասն գիտութեան մղոնաչափաց» փոքրիկ և շատ հետաքրքրական գրութիւնը, որ առնելով Գւլինի իբրև կեդրոն՝ տալիս է զանազան ուղղութեամբ նշանաւոր քաղաքների հեռաւորութիւնը մղոններով՝ հրատարակւած է սխալաշատ Աղուէսագրքերում, Խորեն. Աշխարհագրութեանը անմիջապէս կից (1683 և 1698 թւերին), այլ և մեծ մասամբ առաջ է բերւած Ալիշանի Արարատում, մի երկու անգամ ընդ բացատրութեամբ (Եր. 413): Գրութեան թւականը ամենայն հաւանականութեամբ արաբական առաջին արչաւանքներից չետու է, բայց չամենայն դէպս չ է ու շ փրկչական 971 թւականից, որովհետև գտնուեց ալթմ ալդ թիւն գրւած մի երկաթագիր ձեռագրում (Էջմիածնի հնագոյն ձեռագիրը, թուղթ): Պատրաստել եմ նոր հրատարակութիւն: Հնարակերտի մասին տես և Խորեն, Բ, Ը:

Նկարագրում Հ ա ր ա լ ա չ ի ն լեռը. «Այլ Հարաւալին արեգակնաճեմ լեռոն՝ սպիտակափառ ունելով գագաթն, ուղղորդ ի վերկրէ բուսեալ, երեքօրէիւ՝ որպէս ասաց ոմն ի մերոց ¹⁾ քաջագօտու առն չրջապատեալ ճանապարհաւ, և առ փոքր փոքր ի շեշտումն անկեալ, ծեր ոմն արգարև լեռոն ի մէջ երիտասարդացեալ լերանց» (Ա, Ժբ.):

Այս նկարագրութիւնը ամենալաջող կերպով համարատարտիանելով Մասիսին՝ բնաւ չէ չարմարում Արագածին, որ մի լաչնանխոտ, փռւա ծ սար է, գրեթէ առանց գագաթի, որի փոխարէն ընդարձակ սարահարթ մարգագետիններ, և բուն գագաթի տեղը հազիւ մի քանի հերձուած ժառեր, որոնք հեռուից աւելի նման են քարակարկառի և ամառը շատ չուտով լերկանում են ձնից: Թիւրիմացութիւնը ծագում է վերի նկարագրութեան անմիջապէս կից պարբերութիւնից, ուր փշուում է Արագածը: Այդ պարբերութեան մի քանի բառերի վրայ լաւ ուշադրութիւն չեն դարձրել, որով միայն կայելի էր ըմբռնել ուղիղ խմատը:—«Յալսմ խորութեան դաշտի (==Արարատեան դաշտում) բնակեալ Արմենակի, չինէ զմասն ինչ ի հ ի լ ա ի ս ո ղ կ ո զ մ ա ն է դ ա շ ա ի ն (ուշադրութիւն), և զտան լերինն ի նոցն կողմանէ (==այսինքն դաշտի հիւսիսային կողմում և ոչ հարաւում) և զլեռունն (==ի նոցն կողմանէ) անուանէ չիւր անուն Արագած, և զկալուածան՝ Ռոն Արագածու» (Ա, Ժբ.): Ակներև է, որ այս պարբերութեան մէջ խօսքը Հարաւալին լերան մասին չէ: Իսկ հարաւալին սպիտակափառ լեռը է Մեծ Մասիսը, վեհափառ գծադրութեամբ, աննման գեղեցկութեամբ, 16916 ոտնաչափ բարձր ծովի մակերևութից և չաւերժական ձիւներով ծածկւած:

11. Աւելի մեծ թիւրիմացութիւն է, մեծ իւր հետևանքներով, նույնացնել Կորդուք, Խաղտիք, լոյների Քաղզէացիք և նոր Քուրդ անունները (եր. 11, 14, 70 կալին):

Թէ վերջինները, աչն է՝ քուրդերը, հին կորդուացիների սերունդն են, և իբրև արիացիներ, մտովի ազգական են մարերին և պարսերին՝ դրա դէմ ոչինչ չունինք ասելու. բայց այլ է Հալաստանի Խաղդերի (Խաղտիքի բնակիչ) և բոլորովին այլ քաղզէացիների խնդիրը: Յոջները մեր Խաղտեաց բնակիչների և Բաբելոնի քաղզէացիների համար նոցն անունն են գործածել, որից և ահագին թիւրիմացութիւն, որ հազիւ վերջերս նկատւեց: Քաղզէացիները սեմականներ են և ոչինչ ընդհանուր չունին ոչ լեզուով և ոչ ցեղակցութեամբ Հալաստանի խաղդերի հետ, որոնց հանդիպեց Քսենոփոն Կորդուաց աշխարհից Հալաստան մտնելիս, և մասնաւորապէս

¹⁾ Յայտնի չէ թէ այս «ոմն ի մերոցը» ո՞ր հալ գրողն է, որին ակնարկում է Խորենացին. գոնէ մինչև այժմս ինձ չէ չաջողել այդ իմանալ կամ դանել:

Արարինից հիւսիս մեր աշխարհագիրներն իսաղափքում, Գիսուսթեան մէջ մեծ չփոթութեան տեղիք էր տեւել ալլ երկու բալորովին տարբեր ցեղերի անունների պատահական նմանութիւնը և զանազան վարկածների առիթ դարձել: Մինչև արտօր էլ սովորական է ամենաւրջ արեւելագէտների գրածքներում հանդիպել հիւսիսի քաղղէացիներին (1?): Կան և ենթադրութիւններ թէ ինչպէս իբր թէ հիւսիսից հարաւ կամ հակադարձաբար գաղթել են ալլ ենթադրեալ քաղղէացիները, ալն է՝ իսաղքերը մեր իսաղափքի բնակիչները: ¹⁾

Առաջին անգամ պերմանացի գիտնականները ուշադրութիւն դարձրին հպի. բեռնադրութեանց մէջ շատ լաճախ լիշւած իսաղքի գլխաւոր աստուածութեան և իսաղքի անւան նմանութեան վրայ: Յետոյ նորից ուշադրութիւն դարձեց Քսենոփոնի Հալաստանում տեսած իսաղքերի վրայ: Այժմն արդէն մի ամբողջ վարդապետութիւն կալ, որով բեռնագրերի իսաղքին՝ ալլ խալդ ժողովրդեան մեծ աստուածութիւնն է, միանգամաճ և վիպանունը, ինչպէս որ Աստուրը Ասորեստանցիների աստուածն է և վիպանունը, հաւանականաբար Հալլը՝ Հալերինը: Այս վարդապետութեամբ որոշում է նախահայերի աղգութիւնը: Նախահայերը խալդեր էին, որոնց լեզուն, սեպագիր արձանագրութեանց մէջ մեզ հասած՝ ինչպէս ասացինք, ոչ սեմական է և ոչ հնդկարոպական ²⁾:

Ուրեմն ոչինչ ընդհանուր չկալ ալս խալդերի և սեմական քաղղէացիների միջև ³⁾:

Քսենոփոնը խալդերին հանդիպեց նախահայերի թագաւորութիւնը կործանելուց մերձաւորապէս երկու դար չտուց, և նրանք (նախահայեր— խալդերը) դեռ չէին ձուլւած իրենց չրջապատող հպերի հետ: Գովում է նրանց քաջութիւնը և ազատութեան սէրը (առաջ բերած մասսութքնս. պատմ. եր. 71):

Հալ և բիւզանդացի զրոգները շատ տեղեկութիւններ են մեզ հա-

¹⁾ Այս խնդրի մասին տես Լեմանի և Բիւքի բազմաթիւ լօղւածները մասնաւորապէս «Ein neuer Herrscher von Chaldia եր. 83, ծան. 1. ուր ցոյց է տրւած ալս խնդրի վերաբերեալ բոլոր մատենագրութիւնը: Տես և Carl Niebuhr: Geschichte des Ebräischen Zeitalters (գերմ. թարգ.) Berlin, 1884. Bd. I, § 44.

²⁾ Հաւանականաբար պատկանում է կովկասեան լեզուների խմբին. տես մեր ենթադրութիւնը ուտէարէնի մասին «Ուրարտ. արձ. լեզուն»:

³⁾ Տես ալս մասին նաև Լեմանի մի ուրիշ գրածքում. Das vorarmenische Reich von Van: Deutsche Rundschau 1894, դեկտ. եր. 417. Այս լօղւածի մի թարգմանութիւնը, խոշոր սխալներով, լուս տեսաւ և «Արձագանքում», ուր թարգմանիչը, ճիշտ հակառակ Լեմանի վարդապետութեան, խալդերին անւանում է քաղղէացի Պէտք է գործ ածել բնագիրը, թիւրիմացութեան մէջ չընկնելու համար:

զորդել Խաղտիքի մասին: Այդ տեղեկութիւնները առանձին խնամքով հաւաքեցին Լեւոն և Բեկք, որով խնդիրն աւելի լուսարանեց: Բայց անուամենայնիւ մնում էր անորոշ, թէ ալդ երկիրը, որ կրում է Խաղտիք անունը, ունէր իսկապէս մի ինքնուրոյն ժողովուրդ, սե պհական լեզուով, տարբեր շրջապատի աղգերից: Մի անսպասելի լուս ձգեց այն խնդրի վրայ Անդրէասի ժամանակագրութիւնը, որի հնագոյն օրինակը՝ ¹⁾ Ախալցխալի Կարապետ արքեպիսկոպոսի գրքերից՝ բաղդի բերմամբ անցաւ ձեռքս: ²⁾ Այս ժամանակագրութեան մէջ լիչուում են Խաղտիք ոչ միայն իբրև առանձին աշխարհ, այլ իբրև առանձին ազգ և իբրև առանձին—սե պհական լեզու սահեցող ազգ, տարբեր հալոց, վրաց, եգերացիների լեզուներից: Գնենք երկու փոքր հատած ալդ կարևոր լիչատակարանից: Յափեթից սերած ազգերի թւում դնում է. «Մարք, Ադուանք, Լփինք, Ադանք, Ամազոնք, ձիղքք, Մասիութք, Հալք, Վիրք, Եգերացիք (Մինգրեւներ), Խաղտիք, Գամիրք և այլն»:

Ինքնուրոյն լեզու ունեցող ազգերի թւում դնում է. «Ալ ազգք, որոց ընտրին ի միմեանց լեզուք՝ են այսոքիկ. Եբրայեցիք, Ասորեստանեալք, Քաղդէացիք, Պարսք, Մարք... Կասք, Ադուանք... Գամիրք; Հալք, Եգերացիք, Վիրք, Սկիւթացիք, Կողքեցիք, Խաղտիք, Բոսպորացիք և այլն»:

Անդրէասից մեծ քաղածքներ ունին լիտագալ պատմիչները, Մովսէս Կաղանկատուացին, Սամուէլ Անեցին և ուրիշները: Ոչ գրական աղբիւրներից ժողոված տեղեկութեանցս համեմատ կալ և ալժմս մի փոքրիկ մնացորդ ժողովրդի՝ խալտ կոչւած, Բալբերդի կողմերը: Դրանք բոշաների նման մի առանձին ցեղ են, արտաքուստ մահմետական, իբրև թէ ունին իրենց առանձին բարբառը և պարապում են գլխաւորապէս մուրացկանութեամբ, հմայութեամբ, փալ բանալով, բաղդ գուշակելով: Տեղեկանում եմ նոյնպէս, որ ալդ խալտ բառը, իբրև անարգական անուն,

¹⁾ Կարծեմ և միակը. վեներտիկցիները պէտք է այս օրինակի պատճէնն ունենան:

²⁾ Այդ նշանաւոր ձեռագրի մասին (որի մէջ ի թիւս ալլոց գտնւում է և Անդրէասի ժամանակագրութիւնը) և նրա լիչատակարանը տես Յ. Տաշեանի Մանր ուսումնասիրութիւնք էր. 201, 202, ալ և լատելածում իմ զիտադութիւնը, որով որոշուում է ձեռագրի բուն թւականը (971 թ.): Վեներտիկցիք, Զարբանալեան, Սարգիսեան, լաճախ ակնարկում են այդ «Խորենացու և Անդրէասալ» ժամանակագրութեանը: Յամենայն դէպս, այն ձևով ինչ ձևով որ հասել է մեզ՝ ալդ ժամանակագրութիւնը չէ կարող լինել 641 թւից առաջ, որովհետև բիւղանդական կալսիրների ցանկը վերջանում է Հերակլով, — «Յրակղիս ամս Լ», — ոչ էլ կարող է ուշ լինել 971 թւից, որ է, ըստ իմ որոշման, ձեռագրի գրչութեան թւականը: Այդ ձև աղբից պատրաստել եմ շատ հատուածներ հրատարակութեան համար, սպասելով պատեհ առթի և հնարաւորութեան:

ինչպէս բոշալ, մինչև սլոմս էլ գործածական է Տրապիզոնում ¹⁾:

Այսպէս երկար կանգնեցանք խաղիւնների վրայ, աչքի առաջ ունե նալով այս խնդրի առագ կարեորութիւնը Հայաստանի նախնական պատմութեան՝ նրա նորութիւնը մեր զարգացած դասի մեծամասնութեան համար:

Այսուամենայնիւ թերևս դեռ վաղատամ է նախահայերին առանց այլ և այլութեան անլանել խաղ, և նրանց երկիրը—Խաղիա, ինչպէս այդ անում են գերմանացի գիտուն բարեկամներս, սակաւն արդէն անպալման անճիշդ պէտք է համարել՝ խաղերին, որ խաղտիքի բնակիչներին (հաւանականաբար նախահայերին) ըստ վաղեմի և անհիմն սովորութեան նուցեցել քաղղէացիների հետ ²⁾:

12. Քննական Պատմութեան այս Բ. գլխում, ինչպէս և շտույ, շատ անգամ նորից լեզուելում են նոյն շփոթ կարծիքները հին Արարատեան թագաւորութեան մասին, որ հեղինակի կարծիքով հպարտան էր. նմանապէս՝ անճիշդ և հնացած տեղեկութիւններ Հայաստանի բնեւագրութեանց վերաբերութեամբ: Սխալ պէտք է համարել շատ անգամ կրկնած այն կարծիքը, որ իբր Վանեան բնեւագրերը աւելի հին են քան Ասորեստանի կամ Բաբելոնի սեպագրերը. (եր. 16, 21, 23 և այլն ³⁾:

Գարագաչեանի ասորեստանեան արձանագրութիւններից առաջ բերած հատուածներն էլ կարօտ են սրբագրութեան նոր գիւտերի և ընթերցւածների համեմատ, բաւց դրանցով զբաղելը մեզ շատ հեռուն կը տանէր:

13. Վ. գլուխը (եր. 23—87) նւիրւած է նախնական շրջանի ժա-

¹⁾ Այս բոլոր տեղեկութիւնները աչքի առաջ կ'ուսենաւ Ֆրիտովի նախաձեռնութեամբ պատրաստուող գերմանական գիտական արշաւախումբը որի նպատակն է մասնաւորապէս Հայաստանի բնեւագրերի բաղմակողմանի նոր ուսումնասիրութիւնը: Տրապիզոնի զարգացած հայերը մեծ ծառայութիւն արած կը լինէին գիտութեանը եթէ ճշտէին այս իմ ձեռք բերած տեղեկութիւնները. և եթէ կան իսկապէս խաղտեր, նմուշներ ուղարկէին ինձ դրանց բարբառից: Այս մասին ամեն մի տեղեկութիւն, որչափ և աննշան լինի, կ'ընդունուի մեծ շնորհակալութեամբ և հաղորդող անունով կը տեղեկագրուի գիտնական աշխարհին:

²⁾ Տես և „Chaldäische Nova“ Aus den Verhand. der Berlin. Anthropol. Gesellschaft, Sitz. vom 22 April, 1893.

— Հալ լեզուն առանց շփոթելու պահել է քաղղէական (և քաղղեալ) և խաղտիք բառերը, ինչպէս և պէտք էր սպասել: Միայն շատ ուշ է սկսում այդ շփոթութիւնը թարգմանութեանց մէջ:

Հետաքրքրական են այս տեսութեան համար «խաղտալեզու», «խաղտալուր» (վատ ընթերցւած՝ «խախտալուր») բառերը: Տես Հակ. բառգիրք:

³⁾ Այս սխալ կարծիքին էր և Ք. Պատկանեան, երբ իւր վերջին տարիները սկսեց մեծ աշխուժով հետեւել բնեւագրութեան: Տես Вавск. надписи.

մանակակից ազգերի պատմութեանը ասորեստանցիներին, մար և պարսիկներին, մակեդոնացիներին:

Մենք լիովին հաւատում ենք պ. Գ.ի բռնած ընթացքին,—մեթոդին, որով նախապէս դնում է ժամանակակից տիրող ազգերի համառօտ պատմութիւնը, չետոյ միայն հաչերէնը: Այս ձևով թէև փոքր ինչ ճապարում է պատմածքը, սակայն ընթերցողը հնարաւորութիւն է ունենում լաւ ըմբռնելու կարողացածը, հաչերի պատմութեան կախեալ, երկրորդական գրութիւնը, և իրերի իսկական վիճակի մասին աւելի ճիշդ գաղափար է ստանում:

Սակայն մեր առաջարկածի համեմատ նախնական ժամանակը բաժանելով երկու որոշ շրջանի՝ նախահաչերի և հաչերի՝ անհրաժեշտ է նկատել, որ ասորեստանցիները ժամանակակից են նախահաչերին, ուստի և այս շրջանում ինչ որ ասուում է Արալատեան թագաւորութեան մասին ²⁾ պէտք է հասկանալ նախահաչերի վերաբերութեամբ: Իսկ բուն հաչերը, հնդեւրոպացի հաչերը, երևան են գալիս պատմութեան ասպարիզում պարսերի և մարերի հետ միաժամանակ:

Գարեհ Աշտասպեանի օրով Արմենեան դառնում է պարսից նահանգ, ուստի և Գարագաչ աչտեղ է դնում իւր «Արարատեան թագաւորութեան» վախճանը: Մինչդեռ բուն արարատեան—նախահաչերի թագաւորութիւնը արդէն վաղուց կործանւած էր հաչերի արշաւանքներով, և Տիգրան առաջին թագաւորութիւնը բուն հաչիական թագաւորութիւն էր: Աղէքսանդր Մակեդոնացու չաջորդների ժամանակ, երբ զօրանում են Հռովմէացիք, հաչերն անցնում են Հռովմէացոց կողմը ընդդէմ սելեկեանների: Արտաքսիան (Արտաշէս) և Չարիադրիս (Չարեհ) թագաւորում են Հալաստանի գանազան մասերում: Այս Արտաշէսի ցեղից Տիգրան մեծը (Բ) ոչ միայն միացնում է բաժանւած երկրները իւր գահխոնի տակ, այլ դառնում է հալ մեծագոյն աշխարհակալը: Այս թագաւորներով հիմնւում է Արշակունիների հարստութիւնը, որ պ. Գարագաչեան համարում է բուն հալ հարստութիւն և ոչ պարթևական, ինչպէս պնդում է Խորենացին, կամ լաւ եւ՝ նրա աղբիւրը:

(Նարունակելի)

¹⁾ Օրինակ՝ ինչպէս վիշիթինք արդէն, Սենքերիւմ հալաստացան որդիների փախուստը Հալաստան:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳՍՑՈՒՄԸ

(Յօղած չորրորդ)

Մի քաղաքական խնդրի ծանրակշիռ լինելը ունենում է այս հեռանկարը, որ նա երկար ժամանակ մնում է քաղաքական հորիզոնի վրայ, և ժամանակի ընթացքում ոչ թէ կորցնում է իւր հեռաքրքրութիւնը, այլ դեռ աւելի ևս բորբոքում է հասարակաց կարծիքը և վերջինը իրան հետ բեւեռած է պահում: Ներկայ դէպքում ծանրակշիռ քաղաքական խնդիրը ոչ միայն Սասունի կոտորածն է, այլ և այն դիրքը որ բռնեց Անգլիան հայկական խնդրում՝ Սասունի կոտորածի պատճառով: Առանց Անգլիայի բուռն միջամտութեան՝ Սասունի կոտորածը չէր ստեղծիլ այն քաղաքական խնդիրը, որը արդէն շատ մօտեցել է արևելեան խնդիր դառնալու վախճանին: Իսկ արևելեան խնդիրը, որը առաջ բերեց Ղրիմի պատերազմը՝ Պարիզի դաշնագրութեան վախճանով 1856-ին, ռուստաճկակէսն պատերազմը՝ Բերլինի դաշնագրութեան վախճանով, 1878-ին, այդ արևելեան կոչող խնդիրը՝ համաեւրոպական խնդիր է. նա կայանում է մի կողմից նորանում, թէ ինչպէս բաժանել քաղաքակրթութեան պահանջներին բաւարարութիւն չաւող Թիւրքիան այնպէս, որ այդ բաժանումից մի կամ միւս մեծ պետութիւնը կամ ամենեւին չօգուի կամ չօգուի միակողմանի կերպով, և միւս կողմից, ինչպէս վարել այդ նոյն Թիւրքիայի հետ, որ սա՛ ստիպւած լինի բարենորոգումներ մտցնել երկրի կառավարութեան մէջ դոնէ քրիստոնեայ նահանգներում՝ այդ երկրի բաժանումը եթէ ոչ իսպառ աւելորդ դարձնելու, գոնէ այն յետաձգելու համար: Հայկական խնդիրը կարողացել է արդէն հասունացնել այդ վերջին

գրութիւնը, որի անբաւարար լուծումը անխուսափելի կերպով առաջ կը բերի արևելեան մի նոր պատերազմ. որովհետև անհնարին է երևակայել որ Անգլիան, գործակից ունենալով Ռուսիան և Ֆրանսիան, նոյն իսկ ներկայ մինիստրական փոփոխութիւններից յետոյ ¹⁾, կարողանայ ետ կանգնել իւր այդ քայլերից, որովհետև այլապէս նա ստիպւած պիտի լինի առանց ձայն հանելու թոյլ տալ Տաճկա-Հայաստանի գրաւումը Ռուսիայից, և այն ժամանակ ոչ միայն Տաճկա-Հայաստանի, այլ և Սև ծովի այն ամբողջ ափի գրաւումը, որը զուգահեռական է Տաճկա-Հայկական նահանգներին, և որի վրայ են Տրապիզոնի, Կերասունի, Սամսունի և նոյն իսկ Սինոպի նաւահանգիստները, ուրեմն ռուսական ծովափնեայ սահմանից շուրջ հինգհարիւր վերստ տարածութիւն: Իսկ այն ժամանակ թէ Սև Ծովը է երկուերրորդականով դառնում ռուսական, և թէ մեծապէս փոխում է Ռուսիայի օգտին սորա քաղաքական ազդեցութիւնը ամբողջ Առաջաւոր Ասիայում և անուղղակի կերպով թէ Կ. Պոլսի վրայ և թէ Միջերկրական ծովի վրայ: Սև-ծովը, այդպիսով դառնալով գրեթէ մի ներքին ռուսական ծով՝ ոչ թի զօրութեամբ այլ ևս չի կարելի լինիլ փակել Դարդանելը, և Միջերկրական ծովի վրայ ռուսական ազդեցութիւնը կը դառնայ արդէն ահա ազդելու չափ զօրաւոր: Իսկ դորա հետ արդէն կապւած են համաշխարհային շահեր:

Սասունի կոտորածը եկաւ բարձրագոյ վիայելու Թիւրքիայի կառավարութեան կատարեալ անկայունութիւնը այն նահանգներում, որոնց մասին այն հարցը թէ ում ձեռքին են նոքա լինելու, այնքան մեծ քաղաքական կարևորութիւն ունին մասնաւորապէս Անգլիայի համար:

Սև ահա յատկապէս այդ նոյն Անգլիայումն է, ուր հայկական խնդիրը սնուցեց հասարակական կարծիքի զրգմամբ, հասարակաց կարծիք, որը անկարող էր անգլիական քաղաքական շահերը հաշտեցնել թրքական անհնարին կառավարութեան անլուր յանցագոր-

¹⁾ Մինչդեռ մենք գրում ենք այս տողերը, հեռագիրը 12/25 լոնիս հաղորդեց թէ լորդ Ռոզբերիի (լիրերալ) մինիստրութիւնը հրաժարական տւեց և որ նոր մինիստրութիւն կազմելը թագուհին չանձնարարեց պահպանողական լորդ Սոլսբըրիին:

Տուժիւնների և ընդհանրապէս անպիտան, վատ, տմարդի, հակամարդկային ու բացարձակապէս հակաքրիստոնէական ներքին քաղաքականութեան հետ, որ Քիւրքիան երևան հանեց Սասունի կոտորածի առիթով, ցոյց տալով մահմեդականութեան և բռնակալութեան միացած ոյժերի շնորհքները...

Ամեն անգամ մեր տեսութեան շարունակութիւնը ձեռնարկելիս՝ մենք կարևոր ենք համարել առանձին շեշտել այն հանգամանքի վրայ, որ հայկական խնդրի հետաքրքրականութիւնը վաղանցուկ չեղաւ և որ ամսնէամիս նա աւելի ու աւելի մեծ ուժգնութիւն ստացաւ, մանաւանդ և յատկապէս Անդլիայում: Այդ նոյնը մենք պիտի վկայենք նաև այս վերջին երկու ամիսների մասին. որքան և հարուստ էին մեր ընթերցողներին ներկայացնելիք դէպքերը մեր անցեալ (մարտ-ապրիլի) տեսութեան համար, աւելի ևս հարուստ են նիւթերը յաջորդ երկու ամիսների տեսութեան համար, որի մէջ պիտի գցենք դէպքեր մասամբ նաև նախորդ ամիսներից, որոնց մասին յիշատակութիւնը մեր վերջին յօդածի մէջ չկարողացաւ տեղ գտնել: Այս շրջանի վերջը, որպէս արդիւնք Սասունի կոտորածով յառաջացրած քաղաքական միջամտութեան, եղաւ երեք մեծ պետութիւնների՝ Անգլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի՝ 4. Պոլսի ներկայացուցիչների մշակած ծրագիրը, որ հաղորդեց սուլթանին և նորա կառավարութեանը՝ նոր տոմարով մայիսի 11-ին (հին տոմարով ապրիլի 29-ին): Ղորա ենթադրական բովանդակութեանը մենք ծանօթացրինք մեր ընթերցողներին մեր անցեալ ամսաց («Մուրճ» № 5) ժամանակակից տեսութեան մէջ, իսկ այժմ լիակատար թարգմանութեամբ մեր ընթերցողները կը գտնեն «Մուրճ»-ի ներկայ համարում:

Մրազիրը այնպէս, ինչպէս նա ներկայացուցեց տաճկական կառավարութեանը նոր տոմարով մայիսի 11-ին—սուլթանը չընդունեց, գտնելով նորա մէջ կէտեր, որոնք շօշափում են սուլթանի բացարձակ իրաւունքներին: Երեք պետութիւնները համաձայնեցին վերաքննել ծրագրի այդ կէտերը. և ներկայ բուպէին դործը այդ տեղումն է:

Մրազիրը չի տալիս ինքնավարութիւն Տաճկա-Հայաստանին, այլ ձգտում է վարչական և դատաստանական սեփորմներ մտցնելու: Պարզ եզրակացութիւն, որ անգլիական ազգի և կառա-

վարութեան հսկայական ջանքերը կարողացան գործը հասցնել միայն որոշ ռեֆորմներ մտցնելու պահանջին մի այնպիսի երկրում, ուր ռեֆորմները առհասարակ չեն յաջողում, քանի որ նա պէտք է կատարել սուլթանի կառավարութեան ձեռքով. Եւրոպայի հաւանութիւն տալու պայմանը բարձրագոյն կոմիսար և նահանգապետներ նշանակելու միջոցին՝ մենք գտնում ենք անիրական, նոյն իսկ եթէ սուլթանը համաձայնի այդ պայմանին. այդ մասին խօսքը կը լինի իւր տեղում, և արդէն իսկ մեր կարծիքը այդ մասին մասամբ յայտնել ենք ամսագրիս մայիսի համարում: Մեզ մնում է դեռ շարունակել թերթիս էջերում այն գործողութիւնները պատկերացնել, որոնցով վառ պահեց հասարակական կարծիքը հայկական խնդրի վերաբերմամբ և որոնք խնդիրը հասցրին ռեֆորմների ներկայացրած ծրագրին: Հասարակաց կարծիքը այս վերջին երկու ամիսներում, բացի ռեֆորմների ծրագրի խնդրից՝ շարունակեց յուզել Տաճկա-Հայաստանից համող նորանոր լուրերով թիւրք կառավարութեան գործողութիւնների մասին մի կողմից և երկրի ու ազգաբնակչութեան կեցութեան մասին՝ միւս կողմից. Սասունի կոտորածի մասին աւելի ևս մեծ լոյս սփռեց. աւելի լիուլի տեղեկութիւններ ստացեցին Քննիչ Յանձնաժողովի գործունէութեան մասին, որը ներկայումս արդէն վերջացած կարելի է համարել. Անգլիայում, որպէս նաև Ամերիկայում շարունակեցին միտինգները, որոնցից ամենագլխաւորի մասին—Սէն Ջէյմս Հալլի միտինգը—մասամբ յայտնի է արդէն մեր ընթերցողներին. հրատարակեցին նշանաւոր թղթակցութիւններ Տաճկա-Հայաստանից, հրատարակեցին յիշատակագիրներ, գրքեր, բրոշիւրներ և այլն. զբաղեց խնդրով անգլիական պարլամէնտը, որպէս և առաջ. արտայայտեցին իրանց կարծիքները անգլիական կուսակցութիւնների ներկայացուցիչները. Անգլիայում կազմակերպեց հանգանակութեան գործ՝ հայ թշւառ կանանց օգնելու. համար. և այլն և այլն:

Այս ամենը մի յայտնի կարգով ներկայացնելու համար, մենք այդ նիւթերը կ'ամփոփենք առանձին գլուխներում, մեր սովորութեան համաձայն: Աւելի մեծ յարմարութեան համար, այն առարկաները, որոնք իրար աւրնշակից են՝ կը զսասուորենք իրար մօտ, ընդհանուր վերնագիրների ներքոյ:

ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Շաքիր փաշայի նախագիծը հայերին բնաջինջ անելու: Ներսէս եպ. Խարախանեանի նշանաւոր զեկուցագիրը:

Կոտորածի վկաների ցուցմունքներ: Ռութլի էֆէնդին. Ղշման աղա քիւրդ իշխանի ցուցմունքները: Հայի ոգին վկայութիւնների մէջ: Վկայութիւններ Թաւոնի, Աւագի, Ռեհանի, Սասունի վեց գիւղերի պատգամաւորութեան պատմածը: Ինչ հայեր ուրացել են կոտորածը: Սուրբ Կարապետի վանքի միաբանութիւնը:

Թիւրք կառավարութեան վարմունքը վկաների նկատմամբ: Սալի աղա և Թալիբ էֆէնդի կաշառող պաշտօնեաները: Աւագի դէպքը: Աղփիքի գիւղացոց դէպքը: Քիւրդ իշխանները և սպաները իբր վկաներ: Թալիբ էֆ. և շնորհակալութեան հանրագրեր: Բանտարկութիւնները: Տանջանքներ բանտերում: Այդ հարցը անգլիական պարլամէնտում: Կտուց անապատի միաբանութեան զեկուցագրից քաղածներ բանտերի վերաբերեալ: Համբարձում Բոյաճեան—Մուրադի վկայութիւնը:

Դեռ ևս ապրիլի ամսի 1-ին, Լոնդոն Գէյլի Տելիգրաֆին Կարսի վրայով հեռագիր տրեց Մուշից, որի մէջ ասուած էր. «Հայ, քիւրդ և թիւրք վկաների ցուցումների հետեանքը այլ ևս ծածկել անկարելի է. սպաւորութիւնը մեծ է, և հէնց որ եղանակը մեղմանայ, Քննիչ Յանձնաժողովը կ'երթայ Սասուն, աչքի անցնելու աւերած գիւղերն ու փոսերը, որոնք ամեն կենդանի վկաներից ճարտար կը պատկերացնեն թէ ինչ անասելի ոճիրներ է գործել թիւրք զօրքը Սասունում»:

Եւ ապա՝

«Այլ ևս անհնարին է ոչ ուրանալ կոտորածը, ոչ էլ հաստատել թէ դորա հեղինակը քրդերն են եղել, որոնք թէև անգութ և արիւննախանձ մարդիկ են, բայց և այնպէս հաճոյք չեն զգում իրանց զոհերի չարչարանքը խաղալով երկարել: Վկաները լիովին հաստատեցին, թէ քիւրդերը շատանում էին հայերի զուլը թռցնելով ու նոցա գոյքը կողոպտելով, և երբեմն հրաժարում մորթել կանանց ու մանկանց, երբեմն էլ փրկում մի քանի մարդ»:

Արդէն նկարագրւած գազանութիւնները կատարել են կանոնաւոր գնդերի ձեռքով, որոնց շատ անգամ սպաները սելիների ծայրով մղելիս են եղել դէպի առաջ: Այդ սպաները փորձում են արդարանալ վերեւից եկած հրամանով, և դեռ միակ անորոշ խնդիրն այժմ այս է, թէ ումից էր եկած հրամանը: Անյարմար է դեռ անւանել այն երկու բարձր սպաներին, որոնցից մէկն արդէն շատ յատ համբաւ է ստացել. այժմ նոքա, իմ զիտցածին նայելով, պատրաստում են մէկ մէկու վրայ զցել յանցանքը, և հաւանական է, որ ոչ մէկն էլ իւր ազատ կամքով գործ տեսած չլինի. հիմք կար կարծելու, թէ օգոստոս ամսին ստացւած մի կարևոր հեռագիր, որ կարող էր լիովին պարզել խնդիրը, անհետացել է. սակայն որովհետև նորա գոյութիւնը շատերին յայտնի էր, ուստի դուցէ դեռ կարելի լինի նորա բովանդակութիւնն ստուգել ու հաստատել:

Սասունի կոտորածի քննութիւնը լուսաւոր աշխարհի առաջ պարզեց մի դիւական նախագիծ, որ կազմած է եղել տաճիկ կառավարութիւնը: Այդ նախագիծի հանգամանքները այն աստիճանի հրէշաւոր են, որ մի առժամանակ երկրորդ գծի վրայ է թողնում նոյն իսկ Սասունի կոտորածը, որովհետև այդ կոտորածը կազմում է եղել դեռ միմիայն տեսարաններից մէկը մի ահուելի պատմական դրամայի, որի առաջին գործողութիւնը կատարւած է եղել դեռ դորանից առաջ, իսկ վերջին գործողութիւնները պիտի կատարէին ամենամօտ ապագայում: Ահա սարսափելի ճշմարտութիւնը:

Սասունի կոտորածը հայերին բնաջինջ անելու մտքով մշակւած մի լայն ծրագրի միայն մի մասն էր: Բազմաթիւ վկաների ցուցմունքներին նայելով, ոչ մի կասկած չէ կարող լինել այդ կէտի մտքին, որ սակայն կարծես թէ արգելւած էր նւիրականերին քննելու: Մի չորս տարի առաջ օսմանեան պետութիւնը պաշտպանելու նպատակով Շաքիր փաշայի մշակած ծրագիրն երկու պայման էր բովանդակում—առաջին՝ կաղմել համիդիէ կռւած մի անկանոն քիւրդական հեծելազօր, որի սլոշօսը պիտի լինէր պաշտպանել արևելեան սահմանի նահանգները, երկրորդ՝ հեռացնել այդ սահմանամերձ նահանգներից բոլոր քրիստոնեաներին: Այս երկու միջոցն էլ մէկը միւսին յարնչական են: Եւ այդ ժամանակից ի վեր դոքա սկսան գործ դրւել կենդրոնական վարչութեան զիտութեամբ և

հաւանութեամբ, և այն հետեանքը առաջ բերին որ Ալաշ-կերտի նահանգն իրօք մաքրուեց հայերից, որոնք, կառավարութեան միջոցով մի քանի անգամ իրանց տներից ու դիւղերից վռնուելով գէպի Ռուսաստան քշուեցին: Այս րուպէիս հարեան Ռուսաստանը պատուպարել է որքան յայտնի է 17.000 տարագիր, վռնուած հէնց այդ եղանակով և այդ դիտաւորութեամբ: Միևնոյն կերպով վարեցան և ուրիշ նահանգների հայերի հետ, և դերագոյն ատեաններն ու պաշտօնները ոչ միայն զլացան հատուցումն տալ նոցա, այլ և պատժեցին զանգատաւորներին իբրև քրէական յանցաւորների, և Կ. Պոլսի կենտրոնական վարչութիւնը միշտ խուլ մնաց հեռագրով իրան ուղղուած բազմաթիւ բողոքների դէմ:

Այս դիւական ծրագրի հանգամանքները և Սասունի կոտորածի ծագման իսկական պատճառները բացանողը, ինչպէս երևում է եղած է Մուշի առաջնորդ Ներսէս Խարախանեանը, որը ինչպէս կը ատենէ ընթերցողը, զլիսաւոր հեղինակն է եղած մի նշանաւոր զեկուցագրի, ուղարկած Երզրումի բրիտանական փոխ-հիւպատոսին: Թէ ինչ յայտնութիւններ կան արևած նորանում, այդ կարելի է զուշակել Դէյլի Տելեգրաֆի գործակալի ուղարկած 12-դ պոստային նամակից ¹⁾, որը իւր ամբողջ ընդարձակութեամբ տեղ

¹⁾ Դէյլի Տելեգրաֆի թղթակցութիւնները, որպէս և եւրոպական այլ թերթերի կարևոր լուրերը և հեռագիրները մեր տեղական հալ մամուլի մէջ արդէն թարգմանուած գտնելով, մենք, որպէս և լայտնել ենք «Մուրճ» № 1-ում, օգտուում ենք այդ թարգմանութիւններից ենթարկելով նոցա մեր լուրերի ծրագրին, լաճախ միևնոյն թղթակցութեան զանազան մասերը զետեղելով մեր լուրերի զանազան էջերում, նալած թէ որքան նոքա կապ ունեն մեր առաջադրած խնդիրների հետ: Թէ և մենք, եղած թարգմանութիւններից օգտուելու համար մտադրուած չենք եղել գերադասութիւն տալ թերթերից մէկին՝ միւսի վրալ, բալց բարոյական պարտք ենք համարում լայտնելու, որ մանաւանդ ինչ վերաբերում է Դէյլի Տելեգրաֆի թղթակցութիւններին, որոնց վիճակեց առանձին դեր կատարել հալական խնդրում և որոնք, բնականօրէն, ամենից շատ նիւթ պիտի տալին նաև մեր սիստեմական լուրերիցին, զոքա ամենից շատ լիակատարութեամբ թարգմանուած գտանք «Արձագանք»-ի մէջ: Ակնարկուած 12-երորդ նամակի թարգմանութիւնը տես ալ թերթի № 59 և 60:

կը գտնէ մեր «Նիւթերի» մէջ, իսկ այստեղ թող տեղ գտնէ միայն նորա հակիրճ բովանդակութիւնը, որ մենք ամփոփեալ ենք գրտնում թղթակցի պարիլի մէկից ուղարկած հեռագրի մէջ: Այնարկեալ զիւական ծրագրի հեղինակը Շաքիր-փաշան է, այն Շաքիր-փաշան, որին Սուլթանը այժմ, որպէս տեղեկանում ենք այս տողերը գրելու ժամանակ, կամենում է իբր թէ եւրոպացոց առաջարկած ռեֆորմների ծրագիրը իրագործելու համար՝ նշանակել ընդհանուր նահանգապետ Տաճկա-Հայաստանում! Ինչ զիւական հեղնութիւն ամբողջ եւրոպայի վրայ! Սակայն անցնենք: Վերը յիշած հեռագրով հաստատում է որ հէնց այդ քաղաքականութիւնն էր որ գործ դրեց նաև Սասունում, ուր ժողովուրդն ապրում էր տուր և առի սկզբունքով իւր աւատական տէրերի, այն է հաստատաբնակ քիւրդերի հետ, և այս պատճառով պաշտպանութիւն էին գտնում պետութիւնից թափառական քիւրդերի դէմ: Բայց վերոյիշեալ երկմասն ծրագիրն ընդունելուց յետոյ՝ թիւրք պաշտօնեաներն սկսան զրգռել նստակեաց քիւրդերին, որ նոքա կողպտեն, գրփեն, սպանեն հայերին, և ոչ միայն չէին ամնձում թափառական քիւրդերին, այլ դեռ խրախուսում էին Սասունի ներսերը մտնելու: Երբ որ 1893 թ. Տալուրիկի զիւղացիք փախուստի աւին այդ շրջմովի քիւրդերին, քիւրդ իշխանները Բիթլիս հրաւիրեցին խորհրդի համար, որի հետեանքն այն եղաւ որ քիւրդերը, 1894 թ. միասին հաւաքելով, Սասունի դէմ գնացին և սկսան մի կռիւ, որի մէջ կանոնաւոր թիւրք գնդերը նախ ծպտեալ, իսկ յետոյ բացայայտ կերպով օգնեցին նոցա, և այդ կռիւն արդէն յայտնի կոտորածով վերջացաւ: Քիւրդերից շատերը, որոնք հրաժարել էին Սասունի դէմ արշաւել, բանտարկեցին, ոմանք էլ, որոնք նախճիրներից առաջ էին բռնեալ, արձակեցին այն պայմանով, որ կը մասնակցեն պատերազմին: Այդ քիւրդ իշխաններից մէկն էր Հուսէյին փաշան, որին արձակել էին 4. Պոլսից, ինչպէս որ պատմել է նոյն իսկ նորա մարդկանցից մէկը՝ մի հայդերանլի քիւրդ զինուոր: Բացի այդ՝ զիւղացիք կանխաւ լսել էին այդ յոռի դիտաւորութեան մասին իրանց աւատական տէր քիւրդերից, որոնք շատ անգամ օգնել են նոցա: Հաստատ է այժմ, որ զիւղացիք երկու անգամ բռնել են քիւրդ Մահմուդ շէյխին բարձրաստիճան թիւրքերի գրած նամակները,

որոնցով չորդորում էին նորան ոտքի հանել քիւրդ ցեղերը հայերին
բնաջինջ անելու համար:

Այս Փակտերը, ասում է թղթակիցը, որ միայն օրինակի
համար եմ առաջ բերում, բաւական հիմք են տալիս կարծելու, թէ
վերջիշեալ չար միտքն չղացողը և մասամբ իրագործողը ոչ թէ
մի անպատասխանատու պաշտօնակատար էր, այլ նոյն ինքն Օսմա-
նեան կառավարութիւնը»:

Վերին աստիճանի ցանկալի է, որ այժմ Բիթլիսի բանտում
նստած Մուշի առաջնորդ Նեբուէս Խարախանեանը Մուշ
կանչի և նւիրալիների հարցաքննութեանն ենթարկելի նա է գլխա-
ւոր հեղինակը Բրիտանեան փոխ հիւպատոսին ուղարկած այն նշա-
նաւոր զեկուցագրի, որի ընդարձակ պատճէնն ես ձեզ արդէն հասց-
րել եմ և որ շատ առատ լոյս է սփռում այս նախադիտուած կո-
տորածի ծագման և նպատակի վրայ: Շատ փափագելի է, որ Կոմ-
միսիան լսէ և մի ուրիշ մարդու ցուցմունք. դա է Մուրադ էֆէնդի
անունով շաշանի դոկտոր Համբարձում Բոյաջեանը, որ այժմ նստած
է Բիթլիսի բանտում՝ մահւան վճռի ենթարկւած: Եթէ Կոմմի-
սիան շուտով նորան չկանչէ, այդ վճիռն անշուշտ գործ կը դրւի:
Նա լաւ է ճանաչում Սասունը, որովհետեւ եղած է այնտեղ 1892 թ.
մինչև 1894 թ.՝ ապրելով գիւղացոց շրջանումն:

Այլ եզրակացութեան չի կարելի դալ, երբ մենք կը ծանօթանանք մի
քանի վկաների պատմածների հետ, որ և առաջ ենք բերում այստեղ:

Ահա յայտնի եղած վկաների ցուցմունքները:

Դէչլի Տելեդրաշի մի այլ երկար հեռագրից, թւադրած Մուշ մար-
տի 26 և ուղարկւած Կարսի վրայով, բերում ենք հետևեալ կտորը.

«Մի ուրիշ շատ հետաքրքրելի դէպք էլ լսեցի, որ շարաշուք սուկր
է ձգում թուրք պաշտօնեաների գաղանթեան վրայ Անցեալ աշնան
սկզբին, Բիթլիսի վելայէթի Մողեկանի գաւառապետ Ռութղի էֆէնդին
մարդ է ուղարկում Տարնո անունով քիւրդ իշխանի մօտ, որ Սուլդի որ-
դին է, և չպտնում նրան՝ «Այս զինւորներով Բիթլիս եմ ուղարկում գա-
ւառիս մեծատուն հայերին: Շուտով հաւաքելի մի քանի քիւրդ, հազկական
չորեր հազցուր նոցա: Յարձակելի գնացողների վրայ այս ինչ տեղում և
կոտորիլ հայերին»: Քիւրդը հրաժարւում է սպէ հրամանը կատարել, որով-
հետև հալի աղ ու հաց է կերած եղել:

Հետեւեալ վկայութիւնը, որ գալիս է մի քրդական նշանաւոր պետ Ղշման աղայի բերանից, իսկ որ նշանաւոր պիտի համարել, թէև նորա յետովայ խոստովանութիւնները եկան հակառակելու այդ առաջին վկայութեանը. իւր սկզբի վկայութիւնը նա արել է ինքնաբերաբար, Դէյլի Տելեգրաֆի թղթակցին, բունտում եղած միջոցին թղթակցութիւնը թւագրած է Մուշ, ապրիլի 2 և հեռագրած է Կարսի վրայով: Ղշման աղան այդտեղ պատմում է թէ ինչպէս նա՝ Տալուրիկի 14 զիւղերի աւատական պետը՝ զարնանը 1894 թ. հրաման ստացաւ հայերին կոտորելու և թէ ինչ դիրք բռնեց նա Սասունի կոտորածի ժամանակ: Ղշման աղան՝ Ղարզանլի կոչւած քիւրդերի պետն է, տորը, ասում է թղթակիցը, անւանի է իբրև ամենաքաջը բոլոր քիւրդերից և սակայն ոչ արիւնլուռուշտ է, ոչ էլ անզութա: Նա այդ պատմութիւնն արել է, խնդրելով Դէյլի Տելեգրաֆի թղթակցին՝ հրատարակել այն և իւր ձայնը հասցնել եւրոպացոց: Այդ պատմութիւնը այսպէս է հեռագրել չիշեալ թերթի նշանաւոր թղթակիցը.

Անցեալ տարւալ զարնան, Մուշի թիւրք պաշտօնեաները մարդ են ուղարկում Ղշմանի մօտ չափոնելու նրան, թէ հալ խռովարարները շփոթութիւն են գցում Տալուրիկի ժողովրդի մէջ, և թէ կենդրոնական վարչութիւնը չտամ է, որ նա, իբրև Տալուրիկի տասնուչորս զիւղերի աւատական պետ, կը բռնէ աղմկիչներին և դատարանի ձեռքը կը մատնէ: Այդ ամբողջ գաւառի կաֆիւրի կոչւած հարկ ստացող քիւրդ իշխանը, որ լաւ չարարեութիւններ ունէր հայերի հետ, լսածութիւն է տալիս և Հարթք գիւղը գնալով՝ իջնում է ամբողջ Տալուրիկի աւագ Գասպար աղայի տանը: Մի քանի օր հիւր է մնում Գասպարի մօտ և ապա ասում նրան. «Թիւրք պաշտօնեաները պնդում են, թէ դուք այստեղ վրդովիչներ ունիք, որոնք ձեզ մօտ են պատուարւած և մտադիր են աղմկել ժողովրդեան խկոջն և եթ վաճառեցէք ճոցա, և ամեն բան կը դրստուի»: Սակայն Գասպարն և զիւղացիք հերքում են որ և է աղմկարարի ներկայութիւնը: Այդ լսելով Ղշմանը մեկնում է գիւղից և զեկուցում տալիս իշխանութեան, թէ զիւղացիք օրինապահ են և հաւատարիմ: Այդպիսի զեկուցման համար պաշտօնեաները մեղադրում են նրան, թէ նա ինքն էլ դաւակից է խառնակիչներին, և սպառնում: Այդ բանից չիտոյ նա քաշւում է իւր գիւղը Մովսաարի վրայ, ուր և մնում է մինչև կոտորածի սկիզբը: Այդ միջոցին նա, միւս քիւրդական պետերի հետ գնում է Մերգեմուղանի զօրքի բանակը: Երբ որ քիւրդերին հրաման են տալիս՝ գնալ և կոտորել Սասունի զիւղերը, Ղշմանն ասում է. «Ես Տալուրիկի զիւղերի տէրն եմ և ոչ ոքի

Թող չեմ տալ ասպատակել զոցա: Նոյնն ասում է Շաքիր աղան՝ իրան ենթակալ Ղասորու, Կորթեր և Արծւիկ գիւղերի մասին: Եւ Ղիշմանն իրօք հովանաւորում է Տալուրիկը մինչև այն րոպէն, երբ Անդոկ փախածները կոտորուում են և կալսերական գնդերը բռնութեամբ տիրանում են ամբողջ գաւառին: Ղիշմանն աղան տեսնելով որ ոչինչ չէ կարող անել սուլթանի զինուորների դէմ, հեռացնում է գիւղացոյց տաւարն ու իրաչները իւր Ծովասարի գիւղը և ինքն էլ այնտեղ քաշուում, տանելով իւր հետ երեք հարիւր հալ:

Տալուրիկն ալրելուց և բնակիչներին սրի մատնելուց չետոյ՝ Թիւրք սպաները լսում են թէ Ղիշմանը պատսպարել է մի քանի հարիւր հալ, որոնք, նոցա ասելով, պիտի կոտորէին միւսների նման: Եւ հրամայում են նորան չետ ուղարկել այդ հալերին: Քիւրդ իշխանը, վախենալով կառավարութեան դէմ գնալ, վերադարձնում է հալերի կէս Թիւր, իսկ մնացածներին պահում է Ծովասարում:

Նրբ կուլի աղմուկը հանդարտուում է, դաւաճաններից ոմանք մատնում են իշխանութեան, թէ Ղիշմանը չի արձակել բոլոր փախստական հալերին. զորա համար նա խկոյն ձեռքակալուում է և ձգուում Մուշի բանտը, ուր և նստած է մինչև այժմ շղթալակապ: Ազդեղ նորա հետ շատ վատ են վրում, և նա փափագում է ասել ինձ, թէ արդէն իւր բանտարկելին բաւական ապացոյց է, որ կալսերական Թիւրք գնդերն են արիւնհեղութեան և սարսափների լանցաւորը: Նա շատ փափագում է որ նորան վկայ կանչեն Կոմմիսիայի առջև և որ Նւիրակները մի բան անեն իւր չարչարանքին որ և է վախճան տալու համար: Նա արդէն հնար գտաւ հասցնելու Նւիրակներին մի աղերսագիր, ուր առաջ է բերում իմ արած պատմութիւնը և ամբատտանում է Զիլանլի Մահմուդ չէլիսին, որ սրբազան պատերազմ է քարոզել հալերի դէմ Բիթլիսի նահանգապետ (Պահսիմ փաշայի) պատուէրով:

Ղիշմանը չի ուրանում որ քիւրդերն ընդհանրապէս կատարեցին ասպատակելու և կողոպտելու հրամանը. սակայն պնդում է, թէ նոքա չեն կոտորել անպաշտպան մարդկանց: «Ես ինքս էլ, աւելացնում է նա, շատ աւար եմ չափշտակել հալերից, բայց պատրաստ եմ վերադարձնել: Սակայն արդարութիւն չէ Թիւրքերի կողմից, որ նոքա բանտարկել են ինձ ու չարչարում հալ փախստականներին հովանաւորելու համար, այն հալերին, որոնց անձամբ ձանաչելով կամեցել եմ վրկել թէ Թիւրքերի և թէ քիւրդերի սրից»:

Մենք ասացինք որ Ղիշմանն աղան չետոյ հակառակ ցուցումներ արաւ չօգուտ տաճիկ կառավարութեան. նա այդ արաւ այն չարչարանքների ազլեցութեան ներքոյ; որ նա կրեց բանտում:

Այդ մասին Դէյլի Տելեգրաֆի թղթակիցը հեռագրեց ապրիլի 20-ին Կարսի վրայով հետևեալը.

Ղիշման անունով քիւրդ իշխանը, որի ինձ ուշ հասած զեկուցումն ես անցեալ շաբաթ հեռագրել էի ձեզ, վերջապէս բերեց Մուշ և քննութեան ենթարկեց Կոմմիսիայի առջև: Զարմանալին այս է, որ նա կանչուել է իբրև թիւրք վկայ, և բանտում կրած չարչարանքի ազդեցութիւնն այն աստիճան մեծ է եղել, որ նա այժմ թիւրք կառավարութեան նպաստաւոր ցուցմունք տաւ չարաչար հակասելով հանրածանօթ ֆակտերին: Սակաչն նրա տաճ պատասխանները եւրոպական նւիրակների առաջարկած հարցումներին այնքան պատեպատ և իրար ժխտող էին, որ իւր բոլոր վկայութեան վարկը կոտրեցին: Յառաջ եկան և մի քանի ուրիշ քիւրդեր, ուղարկած Սալի աղայի և Թալիբ էֆէնդիի ձեռքով, — թիւրքերի դատին ոչ տող ցուցմունք անելու համար. բայց հարց ու փորձի ժամանակ, որ արին մանաւանդ բրիտանական և ռուսաց նւիրակները, բացառաւ կերպով երևաց որ այդ քիւրդերի վկայութիւնը ծալրէ ի ծալր շինծու է ¹⁾:

Մեր ընթերցողներին յայտնի է արդէն, որ թուրքերը ուրանում էին որ և է կոտորած: Թիւրք կառավարութեան և պաշտօնեաների այդ ընթացքը յարատեւեց մինչև վերջ: Ի՞նչ կը լինէր հայոց դատը եթէ թրքական քննիչ ջանձնաժողովի մէջ ներկայ չլինէին եւրոպական երեք պետութիւնների ներկայացուցիչները? Հայ վկաներին, որոնք թիւրք կառավարութեան աննպաստ ցուցումներ կ'անէին — անկասկած ամենքին կը խեղդէին, առանց որ նոցա մասին տեղեկութիւն հասնէր Եւրոպային: Իսկ քիւրդ և թիւրք վկաները կամ իսպառ կը լռէին և կամ անամօթաբար կը ստէին, ինչպէս որ մեծ մասամբ արեցին: Սոսկալի վիճակ է, երբ մարդ մտածում է թէ որքան սարսափելի խաւար և բռնութիւն է տիրում մի երկրում, ուր ամեն ինչ խեղդւում է, ոչինչ չի դուրս գալիս դէպի լոյսը, առանց ազդու միջամտութեան Եւրոպայի: Թողնենք զեռ ևս ոչ-քրիստոնէաներին, որոնք գիտակցութեան չեն հա-

1) Յիշած Սալի աղան և Թալիբ էֆէնդին տաճիկ կառավարութեան մարդիկ են, որոնց գործն է եղել, գուցէ և այժմ էլ է, կաշառքով, սպառնալիքներով ստիպել կարևոր վկաներին՝ վկայութիւններ տալ լռուտ տաճիկ կառավարութիւն: Նոցա մասին ներքևում դեռ խօսք կը լինի:

սել թէ ինչ սոսկալի բռնութեան ներքոյ և խաւարի մէջ են ապարում նոյն իսկ իրանք, որոնք քրիստոնեաների հետ համեմատած՝ արտօնւած են համարւում, վայելելով այն ամեն իրաւունքները, որ կարող է ունենալ որ և է ազգ թրքական դեսպոտութեան և մահմեդական կրօնամոլութեան միացած իշխանութիւնների ներքոյ: Իսկ հայը խօսմ քաղաքականապէս իրաւագործ է Թիւրքիայում. նա արհամարւած է, նա ճնշւած է, նա դիրք ունի այնքանով, որքանով կարողացել է թրքական ոգի կրել իւր մէջ. և այդքանով նա, իբր հայ, դեռ ևս կարող է մի կերպ ապահով զգալ իրան իւր բուն հայրենիքում: Հրաշալի է տեսնել որ այդպիսի ռեժիմի տակ հարիւրաւոր տարիներ հեծծած մի ազգ՝ դեռ ևս կարողացել է այնքան հայկական ոգի պահպանել իւր մէջ, որ գոնէ դէպքերից մի-մի օգտուել է կարողանում իւր բողոքը աշխարհին յայտնելու համար: Սակայն տեսնենք, թէ ինչպէս թիւրք կառավարութիւնը խեղդել է ջանում ամեն մի հակառակ ձայն: Ահա, օրինակ Ղորխմազեանի դէպքը, որի մասին Դէյլի Տելեգրաֆին հետևեալը հեռագրեցին Բիթլիսից՝ Կարսի վրայով:

Եւրոպական պետութեանց անչապաղ միջամտութեան կարօտ բաղմաթիւ դէպքերից մէկն է հետևեալը: Բիթլիսի վերջին նահանգապետ Փահսին վաշտն վճռել էր պատժել այն հայերին, որոնք կը համարձակէին այցելութիւն անել բրիտանական հիւպատոս միստր Հոլուարդին, երբ որ նա ալտեղ էր: Ականաւոր հայերից շատերը կը ցանկային տեսնել նրան, բայց չտեսած միացին: Բայց և այնպէս թոմաս անուշով մի վատթար մարդ հրահանգ էր ստացել մի մատնութեան գիր գրելու նշանաւոր հայ քաղաքացոյ դէմ, և նա գրեց թղթի տակ Մովր Ղորխմազեանի անունը, որ սակայն ամենևին բան չգրեց ալ մասին: Թոմասի շարադրած գիրն ամբաստանում էր մի շարք նշանաւոր քաղաքացոյ պետական դաւաճանութեան լանցանքի մէջ, որի պատիժը ոչ ալ ինչ է, բայց թէ մահ: Քաղաքալին խորհրդի նախագահ Քահալիլ էֆէնդին ճաշի է հրաւիրում Ղորխմազեանին և հանելով հայերէն անպարզ գրած մի ձեռագիր, ասում է. «Ծնդրեմ դա էլ ստորագրիր»: Ղորխմազեանը հրաժարւում է: Այն ժամանակ նախագահը կարդում է թղթի թիւրքերէն թարգմանութիւնը. իսկ Ղորխմազեանը վեր է կենում ու հեռանում: Շատ չանցած նրան կանչում են ոստիկանի մօտ և ցուց են տալիս իւր կեղծած ստորագրութիւնը կրող մատնութեան գիրն և պահանջում՝ երդում անել, թէ ինքն է ստորագրել: Նա դարձեալ մերժում է: Թէ ինչ է պատահում այնուհետև, ալ դ պատմում

է հետեւեալ կերպով նոյն ինքն Ղորխմազեանը, որ ալժմ բանտարկեաժ է Բիթլիսում:

«Նոքա ինձ բանտարկութիւն և խոչտանգանք սպառնացին: Պաշտպանութիւն գտնելու համար ես մի բողոք գրեցի Պոլիս, բոլոր անցքը պատմելով: Այդ միջոցին անդադար հսկում էին իմ ետեից, և ես սպանիչ ճերի ձեռից միաջն նրանով ազատեցաչ, որ տանից չէի դուրս գալիս: Երբ որ Թահսին փաշային պաշտօնանկ արին, ես խնդիր մատուցի ալժմեան նահանգապետին: Նա ասաց, թէ գրութիւնը շատ երկար է, և պահանջեց բերանացի պատմել իմ դէպքը, որ և արի: Երեք օրից չետոյ իմացաչ, որ ես դատապարտեաժ եմ: Նս քանիցս անգամ հեռագրեցի Կ. Պոլիս. բայց զուր եղաւ: Ինձ բանտ ձգեցին: Նթէ Աստուծուս ուրանալով աջն թուղթն ստորագրէի, բոլոր աջն անմեղ մարդիկ պիտի կախւէին, և ես ազատութիւն պիտի ստանալի՝ հանդերձ հինգ հարիւր ոսկու վարձատրութեամբ և դատական ատեանի անդամ նշանակելու խոստումով: Աակաջն ես չեմ կարող մատնիչի դեր լանձն առնել»:

Այդ նամակը Ղորխմազեանը գրել է Բիթլիսի բանտում մարտի 4-ին: Նամակի բնագիրն իմ սեպհականութիւնն է, և ես վկաներ ունիմ, որոնք երդմամբ կը հաստատեն նրա գրածի ճշմարտութիւնը, և զրանցից մէկն է մի մեծարդոյ մարդ, որ անձամբ տեսել է, թէ ինչպէս էր կեղծել Թոմաս էֆէնդին աջն մատնութեան զիրը: Նս ունիմ ստացած նոյնօրինակ աղերսագրեր և ուրիշ քաղաքներում բանտարկեաժ հաչերից, որոնց դէպքը հաւասար ողբալի է: Քստմնելի կեղեքմունք, անիրաւ բռնահարութիւն, վալրենի տմարդութիւն և զիւալին անդթութիւն, — անա դոքա են ալժմ Հաչատանում տիրող թիւրք իշխանութեան լատկանիչները, որոնց նման բան աչխարհիս ոչ մի դարում կամ թէ մասում չէք գտնիլ:

Շատ կարևոր է Թաւոն անունով հաչի վկայութիւնը, որը Սէմալ գիւղի տանուտէրն էր կոտորածի ժամանակ. նորա մասին Ռէյլի Տելեգրաֆին տւաժ հեռագիրը թւագրեաժ է Մուչ, մարտի 26 և ուղարկաժ Կարսի վրայով: Թղթակցի ասելով՝ Թաւոն իւր այդ վկայութիւնը արել է նաև Քննիչ Յանձնաժողովի առաջ:

«Մենք հինգ եղբայր էինք. մէկը մեռաւ Մուչի բանդում. միւսները իրանց գերդաստանի ուրիշ շատ անդամների հետ սպանեցան կոտորածում: Նախ քիւրդերը լարձակեցան մեզ վրաչ. բայց չկարողացան շատ վնաս հասցնել, որովհետև մենք լաւ դիրք էինք բռնաժ: Բայց երբոր անաղին թւով զինուորներ եկան, մենք ստիպեցանք փախչել: Շատերը մեզից քիւրդ գիւղերի մէջ պատսպարեցան և աչնտեղ լաւ ընդունելութիւն և հովանաւորութիւն գտան. սակաչն կաչսերական պաշտօնեաները

սաստիկ լանդիմանեցին մեր բարեկամ քիւրդերին, շատերին էլ չարաչար պատժեցին: Այն ժամանակ քիւրդերը զղջացան և ասացին մերոնց որ հեռանան չես գնան:

Ահա Սեմալցի Աւագի ցուցմունքը Քենիչ Մասնաժողովի առաջ:

Իմ անունն Աւագ է: Ես Սեմալցի եմ: Իմ հօր տանը վեց հօգի էինք: Դոցանից հալրս, եղբայրներս և եղբորս որդին իմ աչքի առջև սևիններով սպանեցին: Միւս եղբայրս և ես փախուստ տւինք, բայց երկուսս էլ ծանր-ծանր վերքեր ունէինք: Վերջապէս անձնատուր եղանք, որովհետեւ մեզ զթուրիւն էին խոստանում, և մեր տէր-Օհաննէս քահանայի հետ երեք հարիւր հօգի միասին Անդոկ սարից վայր իջանք: Ես վերքեր ստացաւ ուրիշների պէս և ընկաւ, շատերը սպանւած ընկան իմ վրայ: Երկար ժամանակ ես ուշաթափ պառկած էի դիակների տակ: Ուշքի գալուց չետոյ ես ձիգ թափեցի աջ ու ձախ հրել վրաս ընկած մարմինները և դուրս պրծաւ: Մեծ դժարութեամբ և անասելի ցաւ կրելով հազիւ հասաւ թփերին և աչնտեղ թաղնւած մնացի երեք օր, տերևներ, արմատներ և խէժ ուտելով: Յուսիկ անուշուշով եղբորորդիս աչք տեղովն անցնելիս տեսաւ ինձ և օգնեց մինչև մօտաւոր քարայրը հասնելու: Քարայրում մնացի երեք օր, եղբորս որդին ծածուկ բերում էր ինձ փոքր ինչ հաց և ջուր: Ման գալուհնար ստանացուց չետոյ ես կաղալով գնացի Շուշուամերկ գիւղը, ուր գտաւ հօրեղբորս: Աչդտեղ նոքա ինձ նոր մորթած ոչխարի կաշով պատեցին: Երբ որ որ փոքր ինչ ոչժ առի, ինձ տարան գիւղից դուրս գտնւած խոտանոցը, աչնտեղ մի ամիս մնալուց չետոյ՝ վերադարձաւ Սեմալ, ուր հօրս գերդաստանի կենդանի մնացող անդամներն սկսել էին վերաշինել մի քանի տներ, օրոնք աչրւած էին զինուորների ձեռքով: Նահանդապետն էր վերաշինել:

Այդ Աւագը սևիններով տրւած քսաներկու վերքերի սպիներ ունի մէջքի վրայ և մօտ տասնուչորս սպի գլխի վրայ: Աստուածատուր անուշով մի ուրիշ սեմալցի վկայ Աւագի ցուցման գըլխաւոր Ֆակտերը հաստատող պատմութիւնն արաւ Քենիչ Յանձնաժողովի առաջ:

Ռէհան անուշով մի տալուրիկցի կին հետեւեալն է պատմել.

«Մեր ընտանիքը տասներկու հօգի ունէր, հինգը սպանւեցան: Մարդս սարսափելի վերք ստացաւ, աչժմ ճա սուրբ Ագբերիկ վանքումն է: Նորա եղբայրն ու եղբորորդին կտոր-կտոր եղան, եղբորս կինը աչքերիս առջև սպանւեց: Մի զինուոր վերցրեց մի ծանր քար և աչնպէս սաստիկ խփեց նորա գլխին, որ ուղեղը դուրս ցնդւեց: Աչք և ուրիշ անոսելի բաներ տեսնելիս՝ ես չարաչար լաց էի լինում և գլուխս կոծում:

Սասունի վեց զիւղերի (Կոփ, Տափէք, Աւզերմ, Գեղաշէն, Շուշնամերկ, և Երիցվանք) բնակիչները մի քանի ժամանակ առաջ բռնադատուել էին ստորագրել մի հանրագիր, յայտնելով թէ կոտորած անողները ոչ թէ թիւրք գնդերն են եղել, այլ քիւրդ ցեղերը, և թէ հայերը լիովին երջանիկ են տաճկական վարչութեան ներքոյ: Ապրիլին այդ վեց զիւղերի նշանաւոր ներկայացուցիչներից բաղկացած մի պատգամաւորութիւն եկաւ Մուշ, որ մտադիր էր մի բոլորովին տարբեր ցուցմունք տալ եւրոպական նւիրակներին, սակայն չէր կարողանում զլուխ բերել իւր փափագը՝ Պատգամաւորները վճռեցին հանդիպել նւիրակներին սոցա Սասուն գնալու միջոցին և յանձնել մի աղերսագիր, որից առաջ ենք բերեց հետևեալ կտորը.

«Մենք՝ Սասունի Շատախ գաւառակի հայերս համարձակութիւն ենք առնում առաջ բերելու կոտորածի մասին հետեւեալ ֆակտերը, որոնք էապէս տարբեր են այն հանրագրում փշաձններից, որ ստիպւած էինք ստորագրել փոքր ինչ առաջ: Մեր զիւղերը միայն երկու ժամ հեռու են կոտորածի վայրից, և մենք սոսկալի արհաւիրքների ակախատես ենք եղած: Կապերական բանակը նոտած էր Մերգէմուզանի դաշտավայրում՝ Շէնիկի մօտերքը: Մենք ամեն օր զնում էինք բանակը, որովհետև մեզ հրամայւած էր ուստիւ պաշար հասցնել զինւորներին՝ միա, իւր, պանիր—բոլորը ձրի: Մեզ ասել էին, թէ գնդերն եկած են հալերին քիւրդ աւազակների ղեմ պաշտպանելու համար, և մենք հաւատացինք այդ բանին, երբ տեսանք մանաւանդ քիւրդ իշխանների գալը, որոնք չալտնի էին իրանց արիւնահեղ գործերով: Մենք լիովին վստահ էինք վեհախառ սուլթանի զօրքի վրայ և հաստատ չուց ունէինք, թէ նոքա խաղաղութիւն կը բերեն մեզ: Յանկարծ մի առաւօտ թնդանօթների որոտ հասաւ մեր ականջին, և շատ չանցած իմացանք, որ պալթիւնները գալիս են Շէնիկից և Սեմալից: Այն ժամանակ Հզուի դաւառապետն եկաւ մեզ մօտ բազմաթիւ զապթիւններով և արգելեց մեզ տանից հեռանալ և կամ թէ պատուպարել սր և է փախտական գիւղացի, և մահ սպառնաց ըմբոստներին: Շէնիկ տանող բոլոր ճանապարհները բռնւած էին քիւրդ և թիւրք զինւորներով:

«Հետզհետէ թնդիւնները սաստկացան, և մենք տեսանք, որ Շէնիկն ու Սէմալը բռնկւած են: Յետոյ քիւրդերը չարձակեցան Գէլիէ-Գուղանի վրայ և պաշարեցին Անդոկ սարը փախածներին: Մենք պատահած անցքերի մասին տեղեկութիւն չունէինք. գիտէինք միայն, որ այդ երեք զիւղերը հրդեհւած են և մեծ բազմութեան զլիմաղրելու հնար չունե-

ցող բնակիչներն անպատճառ սրակոտոր կը լինեն: Շարունակ գալիս էին թարմ-թարմ գնդեր, պարշարեղէնով հանդերձ, գալիս էին թնդանօթներ: Մենք շանթահար էինք եղել՝ առանց իմանալու, թէ արդեօք ինչ չանցանք արած կը լինին մեր ազգակիցները, որ աչդպիսի պատուհաս գալ նոցա գլխին: Պարզ էր, որ թիւրքերն ուզում են բնաջլինջ անել բոլոր հայերին: Մի օր մենք նշմարեցինք Անդոկ սարից իջնող մի հալ բազմութիւն, որ գնում էր դէպի Գէլիէ-Գուզան՝ գնդերի բանակած տեղը: Ի՞նչ պատահեց նրանց,—չտեսանք, բաց լուսադէմին մի քանի թշուառ փախստականներ, վիրալից և զարհուրած, շնչասպառ ներս ընկան մեր զիւղերը, ապաստան խնդրելով: Գաւառապետը հրամայեց բոլորին էլ ձերբակալել և միասին հաւաքել մի տեղ՝ զիւղի մօտերքում: Յետոյ նահանգապետի հրամանով նոքա բոլորն սպանւեցան: Մեր աչքով տեսանք թէ ինչպէս մեր եղբայրներն աշխատում են փախուստ տալ անգութ գաղանձների սրից: Լսեցինք նոցա աղիողորմ ձիչն ու լացը. բաց ինչ կարող էինք անել:

Կոտորածից չետոյ գնացինք աչքի անցնելու Գէլիէ-Գուզանը և տեսանք զիւղադէզ դիակներ, և չոչաւած անդամներ՝ ցիր ու ցան ժպուերի մէջ և ձորերում և ամին տեղ: Տալուրիկի կոտորածի մասին մենք միայն ի լրոջ գիտենք: Գնդերը, զիւղերում իրանց անելիքը վերջացնելուց չետոյ, Շատախի դաշտը շրջապատեցին: Մենք հաւաստի եղանք, որ աչժմ մեր կոտորուելու հերթն է հասել, և զարհուրելի խուճապ տիրեց սրտներին: Ասնաչք և երեսաչք, մեծ ու փոքր, սկսան փախչել՝ իրանք էլ չգիտէին՝ դէպի ո՞ւր, կանաչք երբեմն մոռանալով իրանց մանկանց, տղամարդիկ լքանալով իրանց կանանց, ամենքն էլ խառն ի խառն դէպի սարերը վազելով թփերի մէջ թաքնուելու համար: Արեք զինուոր մեզ հետամուտ եղան և հրամայեցին անմիջապէս վերադառնալ, սպառնալով, որ իսկոյն կը սպանեն մեզ, եթէ չլսենք: Ոմանք վերադարձան, միւսներն անտառ փախան: Վերադարձողներին տարան հրամանատար սպալի մօտ, որ պատւիրեց նրանց մի թուղթ ստորագրել, որ նոքո երբէք չէին կարգացել: Ի՞նչ անէին նոքա: Ստորագրեցին աչն թուղթը: Աչս բանի համար մենք եկել ենք բողոքելու աշխարհի առջև և չպտնելու, թէ ինչ հանգամանքների մէջ ձեռք դրին աչն թղթի տակ:

Յիշւած թուղթը այնքան նշանաւոր բան է, որ Գէլի Տելեգրաֆի գործակալը անհրաժեշտ համարեց առաջ բերել դրան ստորագրող անձերի անունները՝ մինչև անգամ, ասում էր թղթակիցը, բանտարկութեան կամ տանջանքի վտանգի ենթարկելով նոցա: Կով զիւղից ստորագրել են՝ Տէր-Գարեգին քահանայ, տանուտէր Յարօ Խեչոյեան, զիւղալիք Յարէ Պետոյեան և Ակոր Մոսոյեան. Ազգերմ՝ զիւղից՝ տանուտէր Գաւօ Օսմանեան:

Տափէք զիւղից՝ տանուտէր Շամօ Կիրակոսեան, Օվանէս Շարոյեան և Համբարձում Թումոյեան. Երիցվանքի զիւղից՝ տանուտէր Գրիգոր Կալարեան և Սարգիս Սահակեան. Գեղաշէն զիւղից՝ գիւղացիք Աւէտ Շարոյեան, Սարգիս Մկրեան և Մանուկ. վերջապէս Շնորհամերկ զիւղից՝ տանուտէր Առաքել Գրգոյեան, Գորգէյ թաղական և Եգոր թաղական:

Զպէտք է արդեօք հիանալ այս հանգամանքից, որ, ըստ վկայութեան Դէյլի Տելեգրաֆի թղթակից Դիլոնի, «մինչև այժմ՝ 1) ոչ մի սասունցի կոտորածի վերաբերմամբ թիւրքերի մեկնութեան նպատաւոր ցուցմունք չի արել: Եղել են հայերից ևս վկաներ թիւրքերին նպատաւոր, ուրեմն կոտորածը հերքող, հետեւապէս ստախոսներ և վախկոտներ. սակայն ովքեր?

...«մի քանի ուրիշ տեղացի հայեր, որոնց վարկը շատ խախտած է, աւել են այդպիսի ցուցմունք: Գոցա թուումն են վեց վարդապետներ Սուրբ Կարապետ վաճիցի և թիւրք աստիճանաւորների ձեռքով կաշառած մի քանի սակաւաթիւ հայեր, որոնցից և ոչ մէկը, սակայն, սասունցի չէ և կոտորածին ականատես չի եղել»:

Այդ հանգամանքը, որ հայերին չի պակասել սպառնալիքների և ակներև վտանգի առաջ ետ չկանգնելու անվեհերութիւնը՝ ուղիղ ցուցմունքներ անելու թէև եւրոպական նւիրակների ներկայութեամբ, բայց և այնպէս Մուշի մէջ, թիւրք կոմիսիայի առաջ, — այդ ցոյց է տալիս թէ ինչ բարոյական ոյժեր են թագնւած այն ժողովրդի մէջ, որի ճակատագիրը այժմ ամբողջ լուսաւոր աշխարհին հետաքրքրում է: Թիւրք իշխանութիւնը, յիրաւի, բոլոր ունեցած միջոցները գործ է դրել ամեն ճիշդ վկայութիւն խեղդելու համար: Բայց էլի լիապէս չկարողացաւ նպատակին հասնել: Մենք ստորև առաջ կը բերենք այն տեղեկութիւնները որ յայտնւել են յատկապէս այդ կէտի վերաբերեալ, այն է թէ ինչպէս թիւրք իշխանութիւնը ջանացել է ճիշդ վկայութիւնները խեղդել:

1) Այս խօսքերը վերցրած են նորա հեռագրից, որ թւագրած է Մուշ ապրիլի 2.

Սալի աղա անունով թիւրքը, որի պաշտօնն է սուտ վկաներ բերել կամ կաշառել վկաներին, 250 լիրա էր խոստացել վերը չիշած Թաւոնին որ սա սուտ վկայութիւն տայ: Թաւոնը պատասխանել է, — առաջ դու իմ եղբայրներին յետ տուր:

Այն Աւագ անունով սեմալցին, որի վկայութիւնը վերը առաջ բերինք, որպէս զի միայն քննիչ յանձնաժողովին հասնել կարողանայ, ստիպւած է եղել անասելի դժւարութիւններ կրելուց զատ՝ կանացի զգեստով Մուշ գալ:

Երբ որ լսեցի, ասում է նա, որ մի օտարազգի կոմիսիա սկսել է քննութիւն անել, եկա՛ց Պերթագ գիւղը և աջտեղ տասն օր թագնւած մնացի: Թիւրքերը, լսելով որ ես գիւղումն եմ, որոնում էին ինձ, բաց ես կնոջ շորեր հագա՛յ և աչդպէս ծպտելով խոյս տւի նոցա հսկողութիւնից:

Ահա մի դէպք, որ հեռագրած է Դէյլի Տելեգրաֆին Բիթլիսից մարտի 21-ին Կարսի վրայով և որը ցոյց է տալիս թէ ինչպիսի ջանքեր են անում թիւրք պաշտօնեաները Սասունի կոտորածին վերաբերեալ ամեն մի կարևոր ցուցմունք խեղդելու համար:

Մարտի 15-ին չորս բանտարկեալներ—երեք աչր մարդ և մի տղա— բերում են Մուշից Բիթլիս, նոքա բոլորն էլ սասունցիք են՝ Աղլիք գիւղից: Նոքա միասին գնանալիս են եղել դէպի Մուշ ցուցմունք տալու և մի աղերսագիր մատուցանելու քննիչ յանձնաժողովին: Նոցա բռնում են, չորրորդը, սասունցու պէս հագնւած չլինելով, փախչում է: Աղերսագիրը նորա մօտ է լինում, և նա մեծ դժւարութեամբ հասցնում և տալիս է թուղթը երոպացի նւիրակներին: Սակաջն նորան էլ չետոյ բռնում են և 16 օր պահում Մուշի բանտում: Աջուհետև նորան իւր ընկերների հետ բերում են Բիթլիս, աչտեղից չորսին էլ միասին հեռացնում են զինւորներով դէպի հարաւ:

Եւ յետոյ.

«Սպասւած վկաներից շատերն սպառնալիք են ստացել: Ես լսել եմ, որ քիւրդ իշխաններն և սպաները պատրաստ են ներկայացնել Քննիչ Յանձնաժողովին կառավարութիւնից ստացած հրամանագրեր, որոնց զօրութեամբ նոքա մասնակցել էին Սասունի կոտորածին, եթէ միաջն հիւպատոսներն երաշխաւոր լինեն նոցա ապագայ ապահովութեան: Սակաջն, սասաններին նաչելով, աչդպիսի երաշխաւորութիւն չի կարելի տալ:

Բրիտանական հիւպատոս միստր Հոլուարդի հետ հազորդակցութիւն ունենալուն համար բռնւած ականաւոր հաչերը դեռ բանտումն են: Մարտի

17-ին մի պատգամաւորութիւն գնաց Նահանգապետի մօտ ¹⁾ խնդրելու, որ նա միջնորդէ նոցա արձակելու համար: Նա չանձն չառաւ, ասելով թէ նախկին նահանգապետ Թահսին փաշան թէն պաշտօնանկ է, բայց զեռ շատ զօրեղ է կ: Պոլսում: Սակայն նա խոստացաւ, որ եթէ դատարանը դատապարտէ կալանաւորներին, նա կ'աշխատէ կայսերական ներուան ձեռք բերել:

Եւ այդ ականատես շեղաճներին թիւրք քննիչ կոմիսիան զբաւում է եղել իւր մօտ կաշառող մարդկանց միջոցով, որոնց մէջ յայտնի են Թաւրիք էֆէնդին և Սալի աղան, որոնք քննութեան ամիսներում զբաղւած են սուտ վկաներ բերելով Յանձնաժողովի առաջ, զոհու- նակութեան հանրագրեր կազմել տալով և այլն: Մուշի բանտարկւած առաջնորդ Ներսէս եպ: Խարախանեանը նոցա յիշում է իւր, մեղնից վերը արդէն յիշւած, նշանաւոր զեկուցադրի մէջ, որից երևի առատօրէն օգուել էր Դէյլի Տելեգրաֆի գործակալը, երբ սա հե- տևեալն էր հեռագրում ապրիլի 2-ին:

Հազորդում եմ մի քանի մասնաւոր գիտելիքներ, թէ ինչպէս է կատարում թիւրքաց պաշտօնական քննութիւնը, որոնք կը նպաստեն հասարակութեան մի որոշ գաղափար կազմելու այսօր պաշարի առարկայ դարձած գլխաւոր հարցի մասին:

Մուշի թիւրք պաշտօնեաները տեսնելով որ հալ վկաները խումբ- խումբ գալիս են քաղաք ներխափներին ներկայանալու համար և կարողա- նում են չաջողութեամբ ի դերև հանել չըջակալ ճանապարհների վրայ պահապան զբւած ժանդարմների հսկողութիւնը, որոշում են զինւորներ ուղարկել Սասուն՝ վախեցնելու և կամ հեռացնելու համար սպասող վկա- ներին: Այդ զինւորների վրայ մեծաւոր են նշանակում Թաւրիք էֆէնդի և Սալի աղա անունով թիւրքերին: Առաջինն աչն մարդն է, որ երեք տարի առաջ պատրաստութիւն է չալտնել կառավարութեան անունով զբոսել քիւրդերին՝ աւերելու Սասունի գիւղերը և ի չիք դարձնել բնակիչներին: Այս ֆակտը շեշտելով վիշում է Ներսէս Խարախանեանը Բրիտանեան հիւ- պատոսի համար յօրինած տեղեկագրում: Սալի էֆէնդին Մուշի քաղաքային վարչութեան անդամն է: Հէնց այդ Թաւրիք էֆէնդին մի քանի շաբաթ առաջ գնում է Սասունի գիւղերը և վտահ-վտահ պատւիրում է, որ իւրաքանչիւր Սասունցի կառավարութեան շնորհակալութիւն չալտնող մի:

¹⁾ Օմէր բէլ, որ փոխարինեց Սասունի կոտորածի կարգադրող տըխ- րահուչակ Թահսին փաշային: Օմէր բէլ հաստատակամ մարդ է և կարգա- պահութեան խիստ միջոցներ գործ դրեց, ճառ խօսեց մղկիթում, հրաւի- րելով մահմեդականներին զգուշանալ խռովութիւններ գրգռելուց:

հանրագիր ստորագրէ. դրանով նա ուզում էր առաջուց ուժաբեկ անել այն վկայութիւնը, որ նոքա չեսող կը մատուցանէին կոմմիսիային: Գիւղացիք միաբերան մերժեցին ստորագրել մի ալդպիսի թուղթ: Այն ժամանակ թալիք էֆէնդին սկսաւ ծեծել գեղջուկներին և շատերին զանազան մարմնական պատիժներով ենթարկեց: Այդ բոլորը պատահել է Խիանքի գիւղերում:

Թալիք էֆէնդին գտնում է Տալուրիկում, ի միջի ալոց, Տէր-Ստեփան անունով մի մարդ, որի ցուցմունքը իւր կարծիքով կարող էր իրան օգտակար լինել: Այդ Տէր Ստեփանն առաջ մի հաջ քահանայ էր և մի քանի տարի առաջ դարձել էր մահմեդական: Թալիք էֆէնդին հազցնում է նրան քահանայական ղգեստ և ուղարկում է Մուշ՝ ներկայանալու կոմմիսիային: Այստեղ սուտ քահանան ցուցմունք է տալիս, թէ Սասունի աղմուկները չարուցել են հաջ աստամբների և չատկապէս երեք վրդովիչների ձեռքով, այն է՝ Գրգովի, Գամաղեանի և Մուրաղի: Թէ այդ խառնակիչների թելադրութեամբ է, որ գիւղացիք գրգուել են չարձակելու քիւրդերի վրայ, որոնք և փոխարէնը հատուցանելով՝ պաշարել են հալերին, և թէ ալդպէս է առաջ եկել փոխադարձ արիւնալեղ կոտորածը, որին վերջ են դնում կալսերական զօրքերը և խաղաղութիւն հաստատում: Այս վկայութեան համար ուրացող քահանան ստանում է ճիշդ երեք տաճկական ոսկի, որ և վճարում է նրան Սալի աղալի որդի Իդոն:

Նւիրակներն այդ վկայութեան լուռ ահանջ դնելուց չեսող հարցնում են նրան. «Գու ներկայ էիր կոտորածին»:— «Ոչ»:

«Հապա ձրտեղ էիր» — «Խիանքի Հարդիք գիւղում»:

«Գա քիւրդի գիւղ է»: — «Այո»:

«Որքան է Հարդքի հեռավորութիւնը Տալուրիկից»: — «Միայն երեք ժամ»:

«Գու չափել ես այդ տարածութիւնը»: — «Ո՛չ»:

«Հապա ձրտեղից գիտես, թէ միայն երեք ժամ հեռու է Տալուրիկից»: — «Ալդպէս ասացին»:

«Ո՞վ ասաց»: — «Թալիք էֆէնդին»:

Այս հարց ու պատասխանից չեսող, կանչւում են մի քանի Տալուրիկցիք, և հարցնում են նոցա, թէ արդեօք ճանաչում են տէր-Ստեփանին: Նոքա հաստատ ասում են՝ այո, և աւելացնում. «Նա մի ուխտանենդ ուրացող է և մի քանի ժամանակից ի վեր ոչ տէրտէր է, ոչ էլ հաջ»: Այդ գիւղացիք վկայութիւն տալուց չեսող, ձերբակալւում են, և մինչև այսօր տառապում են Մուշի բանտում: Գոքա են Պօղոսն ու Կարապետը: Այդ երկուսը և Աւագ Սրգէլեան կոչւած Սեմալցի վկան և Զորոյեան Օհան Շէնիկցին, որոնք կոտորածի ժամանակ բազմաթիւ վէրքեր են ստացել, պահւում են շղթապակապ Մուշի բերդի Թաշխանէ կոչւած ամենալուրի զնդանում:

Նւիրակները բողոք չալանեցին այդ վարմունքի դէմ, և աջնուհետև վարչութիւնը կարգադրեց բանախ մի ուրիշ մասը տեղափոխել ու կալանաւորել: Այդ բանտում կան և երկու Սասունցի կանաչք, որոնք նմանապէս բռնաձեռն են ցուցմունքներ տալու համար:

Թալիբ էֆէնդին և Սալի աղան գնում են լետու Խիանքի Բաղեկանլի քիւրդ ցեղի մօտ չորրորելու պետերին, որ նոքա վկայեն, թէ Սասունի կոտորածը չառաջ էր եկել քիւրդերի և հալոց միջև բողած մի կռիւց, որ խաղաղացնում են կալսերական զնդերը: Քիւրդ իշխաններից շատերը հրաժարում են մի աչդպիսի վկայութիւն տալ, ասելով, թէ «Մենք տաննհինգ տարաւ ընտարկութեան ենթակա կը լինենք, եթէ զէթ մի մարդ սպանած լինինք: Խնչ կը լինի մեր պատուհասը, եթէ ասենք, թէ մենք ենք եղել հաղարների սպանելուն պատճառը»: Բայց և աջնպէս Գերելի աղա անունով մի քիւրդ չանձն է առնում վկայութիւն տալ: Դա է աջն մարդը, որ բռնել էր Գամատեանին: Գերելի աղաին ընկերանում է Մեհէ Չաուշ կոչւած մի ուրիշ քիւրդ: Դոքա գալիս են Կոմմիսիալի առջև և տալիս են մի ցուցմունք, որի էութիւնը հետեւեալն է. «Գարնան դէմ մենք լսեցինք թէ հալքը մեծ պատրաստութիւն են տեսնում մեր վրայ չարձակելու և բոլորիս կոտորելու համար: Այդ լուրը զարացրեց մեզ, և մենք որոշեցինք նոցա չարձակման առաջն առնել: Մենք գրոհ տւինք նոցա գիւղերի վրայ և կրակ ձգեցինք տների մէջ: Աջն ժամանակ նոքա փախան Անդոկ սարը, ուր մենք նոցա հետամուտ եղանք: Մնացինք Տալուրիկում ընդամենը մօտ քառասուն օր: Գիւղացիներից շատերին սպանեցինք, և սուն հեռացանք միայն աջն ժամանակ, երբ տեսանք, որ այլ ևս ոչ մի վտանգ չի կարելի սպասել նոցանից»:

Այդ լսելուց լետու Նւիրակները հարցրին. «Ձեր աները հեռու են Սասունից».—«Տասն կամ տասներկու ժամ հեռու»:

«Գիւղերը հրդեհելուց լետու ձրտեղ դիշերեցիք».—«Բանակում»:

«Որ բանակում».—«Կալսերական զնդերի բանակում, որ նստած էր Շատախի գաշտի վերայ»:

«Մուտ ես ասում, գոչեց Կոմմիսիալի թիւրք անդամը: Կոտորածի միջոցին կալսերական զօրքն աջնտեղ չէր»:

Նւիրակներից մէկը, ինչպէս պատմում են, այդ լուրէին ասում է. «Նա է բռն ստախօսը, որ թելադրութիւն է արել այս վկայներին»:

Վկաներին սարսափի տակ պահելը աջն սխտեմն է, որով տաճիկ կառավարութիւնը աշխատում էր ասպարիզից հեռացնել և կամ սուտ վկայութիւններ նոցանից դուրս կորզել: Իսկ սարսափը տարածւում էր բանտարկութիւններիով, եթէ չէր օգնում կաշառքը: Եւ ոչ միայն բանտարկութիւնը, այլ, ինչպէս երևում է, նոյն իսկ

րանտ տանելու միջոցին խեղդամահ անելը—գործադրող միջոցներին է պատկանում վկաններին մէջ տեղից հեռացնելու համար: Ահա, օրինակ, տողեր այն գրութիւնից, որը ուղարկւած է Վուրճա-ի խմբագրութեանը իբր պատճէն մի գրութեան, որ նշանակւած էր Քենիչ Յանձնաժողովի եւրոպական նւիրակների համար, գրւած 15-ն փետրւարի Հ. արեղայցի ձեռքով այժմարութեամբ Կոուց անապատի միաբանութեան»:

Եթէ Աստուծոյ օգնութեամբ նախկին տեղեկագիրս և այս խորհրդածութիւնք թշնամեաց ձեռք չանցնին և ինձ մատնութեամբ դեռ բանտ չտարած, կառավարութեան առջև չհանած, շատերու նման ճանապարհին կամ իսկ դամահ չընեն, կամ չըշտեն, այն ատեն խնդրեմ Ձեզ հասած այդ գրութիւններս ձեր տեղեկագրութեան հետ հաղորդել քրիստոնեայ աշխարհին և ալլն»:

Մի այլ կտոր նոյն ձեռագրից.

«Իսկ Քենիչ Յանձնաժողովը, Մուշի մէջ նստած... օրական քանի մը քիւրդեր ու թիւրք, կամ նախապատրաստւած մատնիչներու և կաշառւած վկաներու հարցաքննելով ժամանակ կը վատըկէ, որպէս զի այդ ամենայն կենդանի փաստեր տաճկաց կառավարութիւն հնար ու ժամանակ ունենայ ծածկելու և անպտացնելու և ով կ'երաշխաւորէ թէ չանպտացուցին: Եթէ մէկ քանի քննիչներու անհնար է կտորածին տեղ դնալ եղանակի պատճառաւ ¹⁾ և այլ պատճառաբանութեամբ, ինչպէս հարիւրաւոր տաճիկ պաշտօնեաներ և զօրքեր եղեռնագործութեանց հետքեր կորսնցնելու ջանք ըրին և գոլութիւնն մինչև ցալժմ անհետացուցին, եթէ շինծու շնորհակալեաց և ցուցմանց թղթեր ստորագրել տալը հնարաւորէ...»:

«Իսկ գալով բանտերում կատարող բարբարոսութիւններին, ուր վերջին մշակէն սկսած մինչև բարձրատիճան հոգեորականը անասելի չարչարանքի մէջ կը տառապին: Թող հնար գտնեն անոնց տեսնելու, հարցաքննելու, այդ անմեղ զոհերուն ազատելու այն դժոխային տանջանքներէն, ուր բարբարոսութիւնը այն աստիճանի է հասել, որ շատ անգամ եղել են դէպքեր, երբ, չղթաներ պակասած ատեն, բանտարկեալի սրունքն են կտորել ²⁾, ուր շատ համարելով թաց գետինը՝ անոնց տակ ջուր կը կապեն, վզերու թոկերն ու շղթաներ անդադար կը գնցեն, որ չկարողանան աչքերն անգամ բոսլէ մը գոցել. շատերուն մերկացնելով՝ ձմեռ ատեն ձիւնի և սառուցի վրայ կը թողնին, եռացեալ ջուր կը լեցնեն վրանին, ոմանց զլիսու կաշին տեղ-տեղ կտրելով՝ որդեր կը դնեն մէջ և ալ և ալ սատանալական անասելի չարչարանքներով չարչարելով կը ստի-

¹⁾ Կոմիսիան չիտոյ ալցելից Սասուն: ²⁾ Ձեռագրում գրւած է «կտորել»:

պեն անոնց որ իրենց մատնացուց ըրած հարուստներուն կամ ալ նշանաւոր անձանց կամ երեսակալական ուժերու ընկերակցողներու անունը տան: Երբ իրենց լոյսերը ի դերն կ'ելնէ, կը սկսեն զանազան միջոցներով թունաւորելով, քաղցած թողնելով, դանակոծելով և խեղդելով սպաննել և մահացնել»:

Եւ ապա՝

«Շատերուն աքսորի կամ տեղափոխութեան պատրուակով բանտերէն դուրս հանելով՝ խմբերով ճանապարհին կը սպաննեն կամ ծովը կը նետեն և անհետ կը կորսնցնեն և ո՞վ կարող է հաշիւ և տեղեկութիւն պահանջել տաճկաց կառավարութենէն... Ո՞ր աշխարհի, ո՞ր կառավարութեան մէջ տեսնւած է, որ բանտարկեալներուն արտաքնոց անգամ չտանին. քրիստոնեայ բանտարկեալները շաբաթներով և ամիսներով դատապարտւած են իրենց մէջի և գարշահոտ արտաթորութեանց վերաջ պառկիլ և այդ գարշելի և նեխուցիչ օդը չնչնէ. աներեսակալի է: Ասոնց շատերին ես ինքս սկանատես եմ եղած և իմ անձի վրա կ'ըրած»:

Եւ մի ալ տեղ՝

«...Տաճիկ կառավարութիւն քննիչ չանձնաժողովներ կը նշանակէ ճշմարտութիւնները չեղաշրջելու համար և իւր չործած եղեռնագործութիւնք անմեղներու վրայ ձգելու համար: Ատոր համար է որ ամեն ճշմարիտ եղելութիւն իւր դեսպաններու ձեռքով անամօթաբար կը հերքէ, լրագիրներ կը կաշառէ, ընծաներ կ'ողողակէ, քննիչներուն առաջ Սասունի կենդանի մնացած վկայներուն կը հեռացնէ երկրէն. եղեռնագործութեանց հետքերն ծածկեց ու ծածկելու է, լռոտուած և ալլանդակւած կանանց, տղաւոց, աղջկանց և ամեն հասակի զոհերու տեսկները իրենց փոսերէն հաննց և անլպտացուց, շինծու շնորհակալաց թղթեր բռնութեամբ ստորագրել տւեց, և ամեն տեսակ սուտ վկաներ կաշառեց և պատրաստեց... Իսկ քրիստոնեայ ներկայացուցչաց առջև քրիստոնեայ գիւղերու վերայ պահապաններ է դրել, որ ոչ ոք չհամարձակի քննիչներու քովը երթալ, անոնց ներկայութեան երևելի վկաներուն բանտարկեց»:

Սառցղ աղբիւրներից եկած տեղեկութիւնները հաստատում են այդ բոլորը: Մենք արդէն վերը առաջ բերինք վկայութիւններ վերաբերեալ կաշառատութեան, սպաննալիքներին և այլն: Իսկ յատկապէս ինչ վերաբերում է տաճկաց բանտերում տիրող կարգերին, թէ ինչպէս են վարուում բանտարկւած վկաների հետ,—իբր ապացուց վերի ընդհանուր նկարագրի ճշգրտութեան, մենք նախ կը նկատենք, որ օրինակ, Բիթլիսի բանտում գործ դրւող տանջանքների մի ցուցակ հրատարակեց Լոնդոնի Ռէյլի Նիւս օրա-

խերթի մէջ, նորա համարում առ 14-ն մաշխի, որը պատճառ
 և զաւ մի հարցասնդման անգլիական համայնքների ժողովում, միտոր
 Զր. Ստիւենսոնի կողմից, ուղղած արտաքին գործերի մինիստրի օգ-
 նական սեօր Էդ. Գրէյին, որը այդ առիթով պատասխանեց թէ՛

«Դէյլի Նիւս-ի հրատարակած ղեկուցագիրը չի հաղորդւած
 Վեհափառ Թագուհու կառավարութեան: Վեհափառ Թագուհու
 Կ. Պոլսի դեսպանին դեռ անցեալ մարտ ամսին հրահանգ էր ու-
 գարկւած՝ հրաւիրել Բ. Դոան ուշադրութիւնը Փոքր-Ասիայի զանա-
 ղան կողմերից հասնող լուրերի վրայ, վերաբերմամբ այն վատ վար-
 մունքին, որին ենթարկւում են բանտարկւածները: Նորան հարց-
 մունք կ'ուղարկւի, թէ արդեօք որ և է պաշտօնական տեղեկու-
 թիւն ստացել է Բիթլիսի բանտում, ասածներին նայելով, գործ
 զբող տանջանքների մասին, և եթէ ստացած լինի՝ նա անմիջա-
 պէս կը պահանջէ թիւրք կառավարութիւնից անհրաժեշտ քննու-
 թիւն անելը:

Բայց ահա և ճշդութիւնը վաւերացրած մասնաւոր եղելու-
 թիւն: Խօսքը վերաբերում է Մուրադ կուլած պ. Համբարձում
 Բոյաճեանին, որին վիճակւած էր նշանաւոր դեր կատարել Սա-
 սունի մէջ՝ կոտորածից առաջ իբր հրահանգող, կոտորածի ժամա-
 նակ իբր կարգադրող և կուռղ և նոյն իսկ կոտորածից յետոյ՝ իբր
 անվեհեր վկայ իւր տեսածի: Հաղորդողը Դէյլի Տելեգրաֆի մի հե-
 ռագիրն է ապրիլ ամսից, գրւած Բիթլիսից և ուղարկւած Կարսի
 վրայով:

Աշտուղ բանտարկւած հալերից մէկն է հուշակաւոր Մուրադը, որ ներ-
 կայ է եղել Սասունում կոտորածներից առաջ և դոցա միջոցին: Մուրադը
 բժշկութեան զոկտոր է, և Դրա իսկական անունն է Համբարձում Բոյա-
 ճեան: Նա է, որ համոզել է Սասունի գիւղացոյ՝ դէմ դնել ամենքին,
 որոնք կը չանդգնին անարգել հալերին և նոցա կանանց ու աղջկերանց,
 և դադարել հարկ տալ քրտրներին և միևնույն ժամանակ տուրք վճարել
 թիւրքերին: Նա մի գոհնիկ չեղափոխական չէ, այլ կրթւած մարդ, որ
 այնպէս է վարել, ինչպէս որ կը վարէր և ամեն մի եւրոպացի համանման
 պայմաններում: Նորան վերջերս դատապարտւած են մահւան Բիթլիսում
 իւր ընկերների հետ միասին, որոնք բռնւած էին Տաւուրիկի կոտորածի
 ժամանակ: Ես շատ փորձեցի տեսնել Մուրադին և հետը խօսել, բայց
 ջանքերս զուր անցան: Սակայն լաջողեցաւ բանակցել նորա հետ, և նա
 փափաղ չալտնեց, որ հետեւեալը հրատարակեմ:

«Իմ դէմ մահւան դատավճիռ զնկուց առաջ ինձ պահում էին շղթա-
վակապ մի մուկ, խոնաւ և սառ խցիկում: Առողջութիւնս սաստիկ վնաս-
ւում էր: Կենդանի մնալու ամենևին չուէի: Վերջապէս ինձ տարան
վալիի և քաղաքային խորհրդարանի առաջ: Այս պատահեց նախքան մահ-
ւան դատավճիռը, Վալիին տւաւ ինձ ստորագրելու համար մի աղերսագիր,
որի բուն իմաստն այս է.—Այսու ես զղջանք եմ չալտնում, որ խաբւած
եմ եղել օտարազգի գործակալներից, և մանաւանդ Բրիտանական կառա-
վարութեան գործակալներից, որոնց ձեռքում ակամաջ գործիք էի դար-
ձել: Նորա ուղարկեցին ինձ Հաչատան՝ քրիստոնեաներին դէպի ապս-
տամբութիւն գրողելու համար, խոստանալով դրամ և դէնք և նիւթական
ու բարոյական օգնութիւն: Այն ժամանակ ինձ չալտնի չէր, որ իմ ան-
բաղդ հայրենակիցներիս արիւնը պիտի թափւի բացառապէս նպատակու
համար Անգլիային իւր մասնաւոր նպատակներին հասնելու Արեւելքում, և
ես չիմարաբար զժգոճութիւն սերմանեցի ժողովրդի մէջ, որ առաջ հաշտ
ապրում էր Սուլթանի բարեգութ իշխանութեան տակ»:

Այդ ուղերձից զատ՝ եղել է մի շինծու թուղթ՝ Փրանսերէն գրւած, որով
Բրիտանական իբր թէ կառավարութեան գործակալները դրամ և բարոյա-
կան նպաստ են խոստանալիս եղել Մուրադին ի դէպս մի հպիակաւն ապս-
տամբութեան: Այդ թղթի տակ գրւած անուններն անընթեռնելի են եղել:
Արդ, Մուրադից պահանջել են խոստովանել, թէ նա ստացել է այդ թուղ-
թը, և ստորագրութեամբ հաստատել այդ: Սրբ նա մերժում է, նրան կար-
գում են Սուլթանի իրագէն, որով հրամաււում է կախել նորան քանչորս
ժամաւ ընթացքում: Մուրադը չի ընկճւում, և այն ժամանակ սկսում են
ամեն կերպ տանջել նորան: Կալանաւորը վերջապէս ուշաթափ է դառ-
նում: Աջնուհետեւ հանդիսաւոր կարգում են նորա մահւան դատավճիռը և
տանում են բանտի ամենալաւ սենեակը, ուր այժմ համեմատաբար աւելի
մեղմ են վարում իւր հետ:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

(Շարունակելի)

ՀԱՅՎԱԿԱՆ ՈՒՓՍՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՈՐ ՆՆԵՐԿԱՑԱՑՐԱԾ ԵՆ ՍՈՒՂՔԱՆԻՆ

Կ. Պոլսում, մայիսի 11-ին, Մեծ-Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի լիազոր դեսպանները:

(Լիակատար Քարգմանութիւն)

Մ Ե Մ Ո Ր Ա Ն Դ Ո Ւ Մ

Մարտ-ապրիլ, 1895 թ.

Սորան կցած ծրագիրը պարունակում է գլխաւոր հիմունքները այն բարեփոխութիւնների, որ անհրաժեշտ է մտցնել ներքեւ յիշեալ վիլայէթների վարչական, ֆինանսական և դատաստանական կազմակերպութեան մէջ: Օգտակար դատուեց մի առանձին մեմորանդումով ցոյց տալ վարչական բարեփոխութեան այն որոշ միջոցները, որոնք կազմում են գլխաւոր հիմունքը երկրի սահմանադրութեան և որոնց ընդունելը Բ. Դրան կողմից՝ ունի առաջնակարգ կարևորութիւն:

Այդ որոշ միջոցները հետևեալներն են.

- 1) Վիլայէթների թւի պակասեցնելը, հարկաւոր դէպքում:
- 2) Վալիների ընտրութեան երաշխաւորութիւնը:
- 3) Ներումն բանտարկեալ կամ քաղաքական յանցանքով դատապարտեալ հայերի:
- 4) Հայ տարագնացների և աքսորականների վերադարձը:
- 5) Առկախ մնացած սովորական քրէական դատաստանական գործերի վերջնական կարգաւորումն:
- 6) Բանտերի վերահսկողութիւնը և բանտարկեալների վիճակի քննութիւնը:
- 7) Նահանգներում մտցնելիք ռեֆորմների գործադրութեան վրայ հսկելու համար՝ մի բարձր յանձնաժողովի նշանակումը:

- 8) Կ. Պոլսում մի մնացուն հսկող կոմիտեոի հաստատումը:
- 9) Վարձատրութիւն Սասունի, Տաւրիկի և այլ տեղերի ղէպքերի ժամանակ հայերի ունեցած զոհերի և կրած վնասների:
- 10) Կրօնական հաւատափոխութեան հետ կապւած զործերի կանոնաւորումն:
- 11) Հայերի վաչելած իրաւունքների և առանձնաշնորհումների պահպանութիւնը և ճիշդ գործադրութիւնը:
- 12) Ասիական Թիւրքիայի միւս նահանգների հայերի վիճակի բարւոյրումն:

I

ՎԻԼԱՅԷԹՆԵՐԻ ԹԻԻ ՊԱԿՍԵՑՆԵԼԸ

Քանի որ ուեֆորմները պէտք է մտցնեն Երզրումի, Բիթլիսի, Վանի, Սիւասի, Մամուրէթ-Իւլ-Ազիզի և Դիարբէքիւրի վեց նահանգներում, անհրաժեշտ է քննել այդ վիլայէթների թիւր պակասեցնելու խնդիրը: Այդպէս անելով կարելի է առաջ բերել վարչական ընդհանուր ծախքերի որոշ ինայողութիւն և, քչացնելով վալիների թիւը, թերևս դիւրացնել նոցա ընտրութիւնը. միևնոյն ժամանակ բարձրացնել նոցա հեղինակութիւնը՝ լաւացնելով նոցա նիւթական վիճակը: Այդ բոլորը պէտք է կատարել այնպիսի եղանակով, որ ազգաբնակութեան բաժանումն վերածւի այնպիսի ազգագրական խմբերի, որոնք ամեն մի նահանգի վարչական ստորաբաժանումների մէջ ըստ կարելոյն համացեղ լինեն:

Մանօթութիւն.—1875 թւից 10 տարի առաջ, Երզրումի էլալէթը (չրջան) բազկացած էր հետևեալ գաւառներից,—Չըլզըր, Կարս, Երզրում (ալթման վիլայէթը), նոյնպէս Վան, որ բովանդակում էր իւր մէջ Հէքքեարը, Բիթլիսը և Մուշը: Այդ էլալէթը, 1877—78 թ. պատերազմից չետու, հետզհետէ բաժանւեց հինգ վիլայէթի և երկրի այն մասը, որ մնաց Թիւրքիայի իշխանութեան ներքոյ, բաժանւեց հետևեալ վիլայէթների՝ Երզրումի, Վանի, Հէքքեարի և Մուշի: Այնուհետև Հէքքեարի գաւառը նորից միացուեց Վանի վիլայէթին, իսկ Մուշի գաւառը՝ նոր կազմած Բիթլիսի վիլայէթին: Դրանից չետու էր, որ Մամուրէթ-Իւլ-Ազիզ սանջակը դարձաւ վիլայէթ, որի հետ միացուեցին մի քանի հարևան հողեր: Այն ինչ, Դէրսիմի վիլայէթը կրկին սանջակի վերածւեց:

II

ՎԱԼԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեծ պետութիւնները, կարևոր նշանակութիւն տալով վալի-ների ընտրութեանը, որոնցից էապէս կախած է Բերլինի դաշնա-գրով նախատեսուած ռեֆորմների յաջողութիւնը, որոշել են առա-ջադրութիւններ անել Բարձրագոյն Գուանը իւրաքանչիւր ղեպքում, երբ վալիի պաշտօնի համար կ'ընտրուի մի անյարմար անձն: Արպէս զի այս կէտի վերաբերութեամբ օսմանեան կայսերական կառավա-րութիւնը աղատ լինի անհաճոյ թիւրիմացութիւններից, մեծ պե-տութիւնների ներկայացուցիչները անհրաժեշտ են համարում, որ վաղօրոք, կիսապաշտօնական ձևով, իրանց յայտնելի այն անձի անունը, որի վրայ ընկնելու է ընտրութիւնը:

III

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՈՒՄՆ (ԱՄՆԻՍՏԻ)

Նորին Կայսերական Մեծութիւն Սուլթանը կատարեալ ներումն պէտք է շնորհի այն բոլոր հայերին, որոնք մեղադրուած են կամ դատապարտուած են քաղաքական յանցանքների համար, և որոնց վերաբերութեամբ ապացուցուած չէ, թէ նոքա անմիջապէս մաս-նակից են ընդհանուր քրէական յանցանքներին:

IV

ՀԱՅ ՏԱՐԱԳՆԱՑՆԵՐԻ ԵՒ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Բոլոր հայերը, ինչ կրօնի էլ պատկանում լինեն, որոնք առանց դատաստանի աքսորուած են Օսմանեան պետութեան սահմաններից կամ իրանց բնակած գաւառներից դուրս, կամ որոնք ստիպուած են եղել պանդխտել՝ աղքատութեան կամ ուրիշ հանգամանքների շնորհիւ, առանց մասնակցած լինելու որ և է քրէական գործում, թույլտուութիւն պէտք է ստանան ազատ կերպով վերադառնալ թիւր-քիա կամ այն գաւառները, ուր նոքա առաջ ապրում էին, առանց որ և է ճնշումների տեղական իշխանութիւնների կողմից: Նոքա նորից պէտք է ստանան այն սեփականութիւնները, որ նոքա ու-նէին երկիրը թողնելուց առաջ:

V

ԴԱՏԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼՊԻԾՈՒԾՆ

Այն քրէական յանցանքների և ոճիրների գործերը, որոնք նախատեսնւած են ընդհանուր օրէնքով և ներկայումս դատաստանական քննութեան տակ են, պէտք է լուծուին ստանան, առանց յետաձգութեան: Սորա համար Կ. Պոլսից պէտք է ուղարկեն վիլայէթները դատաստանական յատուկ յանձնաժողովներ, որոնք իւրաքանչիւր սանջակի գլխաւոր քաղաքում պէտք է շտապեն քննել չվճուած գործերը: Նոցա վճիռները անբողոքելի են: Այդ յանձնաժողովները պէտք է բաղկացած լինեն մէկ նախագահից և երկու անդամից, մէկը մահմէդական, միւսը քրիստոնեայ: Դոցա պէտք է ընկերանայ մի դատաստանական քննիչ և մէկ դատախազ: Վերջին պաշտօնեաներից մէկը պէտք է քրիստոնեայ լինի:

VI

ԲԱՆՏԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԻՈՔՈՒԾԸ

Կ. Պոլսից պէտք է ուղարկեն բարձրատիճան պաշտօնեաներ՝ քննելու բանտերը իւրաքանչիւր վիլայէթում և ուսումնասիրելու նոցա նիւթական պայմանները, բանտարկեալների վիճակը և այն՝ թէ ինչպէս են նոցա պահուած: Նոքա պէտք է քննեն նոյնպէս և բանտապետների ու պահապանների վարմունքները, և կարող են առաջադրել, որ անմիջապէս արձակեն և դատաստանի ենթարկեն այնպիսիները, որոնք չեն կատարել այն կանոնները, որ սահմանւած են բանտային օրէնքներով:

Այդ բարձրատիճան պաշտօնեաներից իւրաքանչիւրը պիտի ունենայ մի օգնական, որ պէտք է քրիստոնեայ լինի, եթէ առաջինը մահմէդական է, և հակառակը: Նոքա պարտաւոր են, ոչ աւելի քան չորս ամսւայ ընթացքում, պատրաստել մի զեկուցագիր, որը պէտք է պարունակի նոցանկատողութիւնները իրանց պաշտօնավարութեան արդիւնքների մասին, և ցոյց տալ այն բարեփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են բանտերի վիճակը և շոցա պաշտօնեաների գործունէութիւնը լաւացնելու համար:

VII

ՌԵՖԵՐԱՏԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀՍԿՈՂ ԲԱՐՁՐ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Նոր վայրները, նշանակելուն պէս, պէտք է դնան վիլայէթի զլխաւոր քաղաքը՝ կազմակերպելու նահանգական վարչութիւնը, համաձայն նոր ծրագրի հիմունքներին:

Նոքա պէտք է յանձնեն պաշտօնը կառավարութիւնից նշանակած մութեսարիֆներին և գալմաղամներին, և իւրաքանչիւր կազալում բաժանեն նահիաների հողերը: Նոքա պէտք է կազմեն ընտրողական ցուցակներ, և պէտք է կառարել տան նահիաների խորհուրդների և միւղիրների ընտրութիւնը: Նոքա պէտք է հետևեն, որ հարկեր հաւաքողները ընարեն առանց յետաձգման, որ նահանգի բիւջէի որոշումը և տուրքերի բաշխումը վարչական մասերում կատարւի, որքան կարելի է շուտ:

Այս սեփորմների շուտ և ճիշդ կատարումը պէտք է դրւի մի Բարձրագոյն Կոմիսարի վրայ, որը յատկապէս պէտք է ուղարկւի Նորին Մեծութիւն Սուլթանից, և որի ընտրութիւնը պիտի կատարւի պետութիւնների հաւանութեամբ: Իւր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում, նա պէտք է ունենայ լիակատար իշխանութիւն վալիների վրայ, որոնք պարտաւոր են զեկուցանել նրան այն բոլոր միջոցների մասին, որոնց ձեռնարկելու են՝ նոր կանոնները գործարկելու համար: (Ասիւմ փաշայի 1889 թ. հոկտ. 8-ի ծանուցագիր «Բարենորոգումներ Հայաստանում», յօդ. 1, մասն Ա.):

Կալսերական Բարձրագոյն Կոմիսարը կ'ընդունի խնդիրներ և ծանուցումներ բնակիչների կողմից, և պէտք է վարւի նոցա հետ նոր օրէնքների սահմաններում: Նա իւր յանձնարարութիւնը պէտք է կնքի մի ընդհանուր քննութիւն կատարելով բոլոր վիլայէթներում, և պէտք է ունենայ իշխանութիւն բարեփոխել այն կարգերը, որոնք համաձայն չեն նոր կանոնադրութեան:

Կալսերական Բարձր. Կոմիսարին, նորա պաշտօնավարութեան միջոցին, պէտք է ուղեկցի մի օգնական, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ Կոմիսարը մահմեդական է, և ընդհակառակը:

VIII

ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄՆԱՅՈՒՆ ԿՈՄԻՏԷ

Բարձրագոյն Դրան մէջ պէտք է հաստատուի մի վերահսկող մնայուն կոմիտէ, որը պէտք է հսկէ ռեֆորմների ճիշդ գործադրութեան վրայ: Այդ կոմիտէի նախագահը կը լինի Կայսրութեան քաղաքացիական կամ զինւորական բարձր պաշտօնեաներից մէկը: Կոմիտէն պէտք է կազմւած լինի վեց անդամներից, որոնք պէտք է ընտրւեն պետութեան քաղաքացիական բարձր պաշտօնեաների միջից, հմուտ՝ վարչական, իրաւաբանական և ֆինանսական գործերում, երեքը մահմեդական և երեքը քրիստոնեայ:

Այդ կոմիտէն պէտք է նիստ ունենայ Բ. Դրան մէջ, առնւազն ամիսը մի անգամ:

Կոմիտէի պաշտօնը պիտի լինի հսկել օրէնքների և կանոնների ճիշդ գործադրութեան վրայ, հասցնել Բ. Դրան զխտութեան այն անկանոնութիւնների մասին, որոնք կը նկատւեն վարչութեան մէջ, և մատնանիշ անել այն պաշտօնեաների վրայ, որոնք լիովին չեն կատարում իրանց պարտաւորութիւնները. ընդունել խնդրագիրներ, քննել ազգաբնակչութեան կողմից եղած խնդիրքները և դանդառները. նոյնպէս և այն զեկուցումները, որոնք կը հասնեն կոմիտէին համայնքների ներկայացուցիչների կողմից:

Այդ կոմիտէտին պէտք է ուղղեն ղեսպանները, իրանց թարգմանների միջոցով, այն բոլոր հաղորդագրութիւնները և տեղեկութիւնները, որ նոքա անհրաժեշտ կը համարեն:

Կոմիտէն կարող է պահանջել վախներից ղեկուցադրեր՝ այն հարցերի մասին, որ ինքն կարևոր կը համարի քննել և սոցա քննութեան համար նոքա կարող են նաևանձամբ կանչւել: Տարին երկու անգամ ընդհանուր նահանգապետները պէտք է ուղարկեն կոմիտէին մանրամասն յայտագիր՝ բանտերի վիճակի և բանտարկեալների դրութեան մասին:

Կոմիտէն, երբ յարմար կը համարի, կարող է ուղարկել իւր անդամներից մէկին կամ մի քանիսին՝ վիլայէթներում շրջելու՝ քննութիւն կատարելու համար:

Կոմիտէն պէտք է ներկայացնի Բարձրագոյն Դրանը ղեկու-

ցագրեր այդ բոլոր հարցերի մասին, և իրաւունք պէտք է ունենայ անմիջական յարաբերութիւնների մէջ մտնել վալիների և մինիստրական ձեռնհաս դէպարտամենտների հետ:

IX

ՎՆԱՍԻԱԾՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Սասունի, Տալուրիկի և այլ տեղերի դէպքերի միջոցին թէ իրանց անձով և թէ իրանց գոյքով վնասաւած հայերը պէտք է ստանան իրանց պատշաճաւոր հատուցումն և վարձատրութիւնը:

Կայսերական բարձրագոյն Կոմիսարին պէտք է յանձնել ուսումնասիրել այդ դործը և ձեռք առնել նպատակաչարմար միջոցներ:

X

ԿՐՕՆԱԿԱՆ ՀՍԻԱՏԱՓՈՒՈՒԹԻՒՆ

Բ. Դուռը պէտք է հսկէ, որ կրօնական հաւատափոխութիւնները կատարեն այն ապահովող սկզբունքներով որ որոշած է 1856 թւականի Հատուի-Հիւմայիւնը (յօդ. 10, 11, 12) և որոնք, յաճախ, իրականութեան մէջ մնում են առանց գործադրութեան:

Այն անձերը, որոնք կը կամենան կրօնափոխ լինել, պէտք է լինեն չափահաս. բացի դրանից իրաւունք կ'ունենան կրօնափոխ լինել միայն մի շաբաթ անցած այն օրից, երբ տեւել են յայտարարութիւն իրանց դիտաւորութեան մասին, և այդ շաբթուայ ընթացքում նոքա պէտք է գտնեն իրանց դաւանութեան պետի հսկողութեան տակ:

XI

ՀԱՅԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՈՒՄՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Բ. Դուռը պէտք է ճիշդ հրահանգներ տայ իշխանութիւններին արգելելու համար, որ չխախտեն հայոց հոգևորականութեան և հայ համայնքների այն առանձնաշնորհումները և իրաւունքները, որոնք յատկացրած են նոցա 1863 թւի սահմանադրութեամբ

(Հայերի Օրգանական Սահմանադրութիւն) և սուլթանների շնորհած բէրաթներով:

XII

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅԻ ՄԻԻՍ ԵԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Փոքր-Ասիայի այն վիլայէթներում, որտեղ հայ ազգաբնակիւթիւնը յայտնի սանջակներում կազմում է ընդհանուր ազգաբնակիւթեան մի նշանաւոր մասը, այնտեղ վալիի մօտ պէտք է լինի մի յատուկ քրիստոնեայ պաշտօնեայ, որին պէտք է յանձնելի հայերի պաշտպանութիւնը: Այդ պաշտօնեան պէտք է ընդունի հայ ազգաբնակիւթեան բողոքագրերը և խնդրագրերը և հասցնի նոցա ի գիտութիւն վալիի, որը քրիստոնեայ պաշտօնեայի համաձայնութեամբ ընթացք կը տայ նոցա, համեմատ դոցա բովանդակութեան:

Այդ պաշտօնեաները, բացի զրանից, պէտք է կանոնաւորապէս զեկուցազրեր ներկայացնեն Կ. Պոլսի վերահսկող մնայուն կոմիտէին: Այն վիլայէթներում, ուր կան որոշ տեղեր (ինչպէս Հաջինը՝ Ադանի վիլայէթում և Չէլթունը՝ Հալէպի վիլայէթում), որտեղ հայերը կազմում են ազգաբնակիւթեան մեծամասնութիւն, այժմեան վարչական կազմակերպութիւնը պէտք է բարեփոխուի և նահիաների կազմութեան վերաբերեալ ռեֆորմների ծրագրի պահանջները պէտք է գործադրեն այն տեղերում, որոնցից նախապէս կը կազմեն վարչական միութիւններ:

(Վերջ միմորանդումը)

Ծ Ր Ա Գ Ի Ր

Վ ա ը չ ա կ ա ն ու ճ զ ո ը մ ն ե ը ի

որոնք պէտք է մտցնեն Փոքր-Ասիայի արեւելեան նահանգներում, ալթմեան էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սիւասի, Մամուրէթ-Իւլ-Ազիզի և Դիարբեքիրի վիլայէթներում:

I

Վ Ա Լ Ի Ն Ե Ր

Յօդ. 1. Վալիները պէտք է ընտրւին պետութեան բարձրաստիճանի պաշտօնեաներից, առանց խարութեան կրօնի, որոնք լաւագոյն երաշխաւորութիւններ տւած կը լինեն իրանց խելքի, ընդունակութիւնների և շիտակութեան համար: Ուստի և չի թոյլատրոււմ նշանակուիլ այն անձերի, որոնք վատ համբաւ ունեն և կամ հասարակական և քաղաքական նկատումներով՝ անյարմար կը լինեն:

Բ. Դուռը, հետևելով այն համոզման, որ ըեֆորմների և միջոցների իրական գործադրութիւնը էականապէս կախած է այն անձերի բարձր յատկութիւններից, որոնք վիլայէթների կառավարութեան գլուխ ենանցած, — պիտի հսկէ որ և ջանաջորա նշանակելիք այդ պաշտօնեաները ունենան պահանջւած յատկութիւնները:

Յօդ. 2.—Այդ եղանակով նշանակւած վալիները չեն կարող յետ կանչել կամ փոխել, բացի այն դէպքերից, երբ նոքա, օրինական քննութիւնից յետոյ, յանցաւոր կը ճանաչուեն հակաօրինակին գործերի մէջ:

Վալիները նշանակոււմ են հինգ տարով. նոցա լիազօրութիւնները կարող են նորոգել:

Յօդ. 3.—Վալիները կ'ունենան պատգամաւոր օգնականներ (մուախն), որոնք պէտք է լինեն քրիստոնեաներ, եթէ վալին ինքն մահմեդական է, և մահմեդականներ, եթէ վալին քրիստոնեայ է: Մուախնները, վալիների նման, նշանակոււմ են նորին կայսերական մեծութիւն սուլթանից: Նոքա յատկապէս դրանոււմ են վալիի մօտ վիլայէթի բնակիչներից խնդրագիրներ ընդունելու, յօտիկանութեան և բանտերի վրայ հսկելու և հարկերի հաւաքելու վրայ

հակոզութիւն անելու համար: Նոցա վրայ է բարձուում վիլայէթների կառավարութիւնը վալիների բացակայութեան ժամանակ:

Ամեն ի վալիի մօտ կազմուելու է նահանգական ընդհանուր խորհուրդ, որի ընտրութեան պայմանները կ'որոշեն ստորև: Խորհրդի պարտաւորութիւնը պէտք է լինի քննել հասարակաց շահերի վերաբերեալ խնդիրները, ինչպէս են՝ հաղորդակցութեան ճանապարհներ շինելը, երկրագործական վարկի զրամագլուխ կազմակերպելը, երկրագործութեան, առևտրի և արդիւնաբերութեան զարգացումը և հանրային կրթութեան ծաւալումը:

II

Մ Ի Ի Թ Ե Ս Ա Ր Ի Ֆ Ն Ե Ր

Յօդ. 4.—Միւթեսարիֆները, որոնք պիտի սանջակների գլուխ անցնեն, կը նշանակեն նորին կայսերական մեծութիւն սուլթանից: Ամեն մի վիլայէթում որոշ թւով միւթեսարիֆներ պէտք է քրիստոնեաներ լինեն: Քրիստոնեայ միւթեսարիֆները պէտք է նշանակեն այն սանջակներում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում: Այն վիլայէթներում, որտեղ միայն մի միւթեսարիֆ կը լինի, նա պէտք է անպայման քրիստոնեայ լիլի, եթէ վալին մահմեդական է: Միւթեսարիֆը օգնական կ'ունենայ մուալին, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ միւթեսարիֆը մահմեդական է, և ընդհակառակը: Միւթեսարիֆի բացակայութեան ժամանակ նորա տեղը կը բռնի մուալինը:

III

Գ Ս Յ Մ Ա Գ Ա Մ Ն Ե Ր

Յօդ. 5.—Փայմապամները պէտք է նշանակեն նորին կայսերական մեծութիւն սուլթանից, վալիի առաջարկութեամբ: Նոքա ընտրուում են վալիի ձեռքով այնպիսի անձերի միջից, որոնք վայելում են ազգաբնակչութեան վստահութիւնը և համապատասխանում են այն պայմաններին, որոնք պահանջուում են ներկայ կանոնադրութիւնով: Իւրաքանչիւր սանջակում զայմապամների պաշտօնների որոշ թիւը պէտք է յատկացրած լինի քրիստոնեաներին:

Քրիստոնեաց գալմագամներ պէտք է նշանակեն այն կազաներում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում:

Յօդ. 6.—Իւրաքանչիւր նահանգում քրիստոնեաց միութեսարիֆների և գալմագամների թիւը, յամենայն զէպոս, պակաս չպէտք է լինի վիլայէթի գալմագամների և միութեսարիֆների ընդհանուր թւի մէկ երրորդից:

Գալմագամը, միութեսարիֆի նման, պէտք է օգնական ունենայ մի մոաւին, որը պէտք է լինի քրիստոնեաց, եթէ գալմագամը մահմեդական է, և հակառակը:

Միութեսարիֆներին և գալմագամներին կից պէտք է լինի մի խորհուրդ, նման ընդհանուր նահանգական խորհուրդին:

Կազայի խորհուրդը ընտրուում է նահիաների խորհուրդների կողմից: Նահանգական ընդհանուր խորհուրդը ընտրուում է սանջակների խորհուրդերի կողմից:

Ոչ մի պաշտոնեաց չի կարող այդ խորհուրդների անդամ լինել: Խորհուրդներին պէտք է նախագահեն վալիները, միութեսարիֆները և գալմագամները, ըստ պատկանելոյն: Խորհուրդները պէտք է բաղկացած լինեն չորս անդամներից, չհաշւելով նախագահին. անդամներից երկուսը պէտք է մահմեդական լինեն, երկուսը քրիստոնեաց:

IV

Ն Ա Հ Ի Ա Ն Ե Ր Ը

Յօդ. 7.—Իւրաքանչիւր կազա բաժանուում է որոշ թւով նահիանների (համայնք):

Նահիան մի հողային միաւոր է, որ պարունակում է իւր մէջ մի քանի գիւղեր՝ իրանց անշարժ կալւածներով, հողերով, արօտատեղերով և հողաբաժիններով: Նահիայի ամենաբազմամարդ տեղը համարուում է նորա գլխաւոր կենդրոն:

Իւրաքանչիւր նահիայի սահմանների որոշումը, ըստ կարելոյն, պէտք է կատարւի այնպէս, որ մի զաւանուութեան պատկանող գիւղերը մտնեն մի նահիայի մէջ: Ընդհանրապէս պէտք է ուշադրութեան առնեն տեղագրական և ազգագրական պայմանները, նաև ազգաբնակչութեան չարմարութիւնները:

Նահիան պէտք է պարունակի իւր մէջ ամենաքիչը 2000 բնակիչ, ամենաշատը 10,000 բնակիչ: Գիւղերի իւրաքանչիւր մի խումբ, որ կազմում է նահիայի մի մասը և որի բնակիչները 1000-ից պակաս չեն, կարող է պահանջել, որ իրանից առանձին մի նահիա կազմւի այն պայմանով, որ չանձն կ'առնի նոր վարչութեան ծախքերը:

Յօդ. 8.—Իւրաքանչիւր նահիա պէտք է կառավարւի մէկ միւղիւրի ձեռքով, որին կից պիտի լինի բնակիչներից ընտրւած խորհուրդ, բաղկացած ամենաքիչը չորս և ամենաշատը՝ ութ անդամներից:

Այդ խորհուրդը ընտրում է իւր անդամների միջից միւղիւր և նորա օգնական: Միւղիւրը պէտք է պատկանի այն դաւանութեան, որին պատկանում է բնակիչների մեծամասնութիւնը, իսկ օգնականը՝ միւս դաւանութեան: Խորհուրդը պէտք է նոյնպէս ունենայ մի քարտուղար:

Յօդ. 9.—Եթէ նահիաների բնակիչները բոլորը պատկանում են մէկ դաւանութեան, խորհրդի անդամները պէտք է ընտրւեն այդ դաւանութեան պատկանող բնակիչներից: Եթէ համայնական շրջանի աղգաբնակութիւնը խառն է, փոքրամասնութիւնը պէտք է ունենայ իւր ներկայացուցիչը, համեմատ իւր թւական կարևորութեան, բայց այն պայմանով, որ 25 տնից պակաս չլինի:

Յօդ. 10.—Միւղիւրները պէտք է ստանան նահիայի բիւջէից պատշաճ ուժիկ: Նոյնպէս պէտք է ուժիկ տրւի խորհրդի քարտուղարին:

Առանձին շինութիւն պէտք է չտակացւի նահիայի խորհրդի և վարչութեան ատեանի համար:

Յօդ. 11.—Նահիայի խորհրդի անդամները պէտք է լինեն օսմանեան հպատակ, պէտք է շահ ունենան նահիայում և լինեն ոչ պակաս քան 30 տարեկան. նոքա ընտրւում են այն անձերի միջից, որոնք վճարում են պետութեանը տարեկան 100 պիաստր հարկ և գատաստանի չեն ենթարկւած:

Յօդ. 12.—Հէնց որ խորհուրդը իւր միջից կ'ընտրի միւղիւրին, նորա անունը պէտք է հաղորդւի վալիին, որը պաշտօնապէս կը հաստատի նորան, նախապէս հաւաստիանալով որ օրինական պահանջները կատարւած են:

Յօդ. 13.—Իմամները, քահանաները, դպրոցական ուսուցիչները և ուրիշ անձեր, որոնք կառավարութեան մէջ պաշտօն ունին, չեն կարող միւղիւրի պաշտօն վարել:

Յօդ. 14.—Խորհուրդի անդամների կէտք պէտք է նորոգւի ամեն տարի. միւլդիրները մնում են պաշտօնում երկու տարի: Միւլդիրը և խորհրդի անդամները չեն կարող վերընտրուել յաջորդաբար միանգամից աւելի:

Յօդ. 15.—Միւլդիրի և խորհրդի անդամների պաշտօնները, ինչպէս և նոցա ընտրութեան և փոխարինման եղանակը, կ'որոշեն համաձայն Համայնքների Վարչական Կանոնադրութեան, յօդ. 14, 16, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26 և համաձայն Օրինագծի Եւրոպական Տաճկաստանի նահանգների մասին § 12:

Յօդ. 16.—Նահիւյցին պատկանող գեղերից իւրաքանչիւրը պիտի ունենայ մի մուխթար. եթէ գիւղը մի քանի թաղեր ունի կամ բնակիչները բաժանուած են զանազան դաւանութիւնների՝ ամեն մի թաղի և ամեն մի դաւանութեան համար մի մուխթար պէտք է լինի:

Յօդ. 17.—Ոչ մի գիւղ չի կարող պատկանել երկու համայնական շրջանի՝ ինչ և լինի նորա դիրքը և բնակիչների թիւը:

Յօդ. 18.—Ոստիկանութեան պաշտօնեաները նշանակուած են համայնական շրջանի խորհրդի ձեռքով, նահիւյցի ազգաբնակչութեան միջից, առանց կրօնի խտրութեան, և թւով այնքան պէտք է լինեն, որ կարողանան բաւարարութիւն տալ թէ տեղական պէտքերին և թէ վիլայէթի ժանդարմերի ծառայութեան:

Յօդ. 19.—Նահիւյցի ոստիկանական պաշտօնեաները պէտք է չրւեն միւլդիրի հրամանների տակ և պէտք է ունենան չառւշների կամ օնբաշիների պաշտօններին համապատասխանող գլխաւորներ:

Նոքա պէտք է զինուորած լինեն և ունենան մի համազգեստ որի ձեւը կ'որոշւի յետոյ: Նոքա ռոճիկը կը ստանան նահիէյի բիւջէից և, բացի իրանց ոստիկանական ծառայութիւնից, կարող են զբաղուել իրանց սովորական պարապմունքներով ևս: Նոքա կարող են լինել հեծեալ կամ ոչ, նայելով իրանց ծառայութեան պահանջներին:

Ոչ-մահմեդականները, որոնք ենթակայ են ռեզիդէնտի-էսէքէրիէ հարկին, և որոնք կարող են ոստիկանական ծառայութեան կոչուել, ազատ կը լինեն այդ հարկի վճարումից, քանի նոքա կը գտնեն ոստիկանական ծառայութեան մէջ:

Յօդ. 20.—Նահիւյցի ոստիկանութեան պաշտօնեաների առաջին պարտաւորութիւնը պէտք է լինի պահպանել կարգը և խաղաղու-

Թիւնը իրանց երկրի մէջ և նահիալի ճանապարհների վրայ: Բացի դրանից նոքա պէտք է լինեն միւլիրի հրամանի տակ և պոստին ուղեկցելու համար մարդիկ տան, այլ և օգնեն միւլիրին՝ ի կատար ածելու դատաստանական վճիռները և օրէնքի պահանջները:

V

Ժ Ա Ն Դ Ա Ր Մ Է Ր Ի

Յօդ. 21.—Ամեն մի նահանգում, չատուկ օրէնքի հիման վրայ, կը կազմակերպւի նահանգական ժանդարմերի, որի բարձր և ստորին պաշտօնեաները կ'ընտրուեն կայսերութեան հպատակները բոլոր դասակարգերի միջից, առանց կրօնի խտրութեան:

Ժանդարմերին պէտք է կազմակերպւի վիլայէթում, բոլոր բնակիչների միջից, առանց խտրութեան ցեղի կամ կրօնի: Ժանդարմերի երկու երրորդականը կը կազմւի նահիալի ոստիկանութեան պաշտօնեաների միջից, կէսը մահմեդական, կէսը քրիստոնեաց: Մնացած մի երրորդը բաղկացած պէտք է լինի շաուշներից և բաշաուշներից և պէտք է ընտրւի կանոնաւոր զօրքի ամենաընդունակ մարդկանց միջից:

Դիսցիպլինայի և զինավարժութեան կողմից, ժանդարմերին պէտք է գտնւի զինւորական մինիստրի իշխանութեան տակ: Նորա ծախքը պէտք է հոգացւի վիլայէթի հաշուով: Ժանդարմերի գնդի սպաների ռոճիկը պակաս պէտք է լինի, քան կանոնաւոր զօրքի համապատասխան աստիճանի սպաների ռոճիկը:

VI

Բ Ա Ն Տ Ե Ր Ը

Յօդ. 22.—Այն անձերը, որոնք նախնական բանտարգելութեան մէջ են պահուում, չպէտք է խառնուեն այն անձերի հետ, որոնք արդէն կրում են իրանց պատիժը՝ դատալնուից յետոյ: Բանտերը պէտք է չարմարեցրած լինին առողջապահական անհրաժեշտ պահանջներին. բանտարկեալները չպիտի ենթարկուեն վատ վարւողութեան: Վալին պիտի նշանակի բանտերի դիրեկտորներին և վերակացուներին, որոնց թւում մի մասը պէտք է նշանակի ի ոստիկանական պաշտօնեաների և ժանդարմերի միջից:

VII

ՍԿՁԲՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Յօդ. 23.—Վալիները պէտք է հաստատեն վիլայէթների և սանջակների զլխաւոր քաղաքներում սկզբնական քննիչ մասնաժողովներ(կոմիտէներ), բաղկացած նախագահից և երկու անդամներից, մահմեդական և ոչ մահմեդական: Այդ մասնաժողովները պէտք է քննեն ժանդարմների ձեռքով կատարւած ձերբակալութիւնների պատճառները և հրամայեն անմիջապէս հարցաքննութեան ենթարկելու կալանաւորւածներին, և բնտարկել տալ նոցա, եթէ այն յանցանքները, որոնց մէջ նոքա ամբաստանոււմ են, կրում են այնպիսի բնաւորութիւն, որ նոցա ենթակայ է անու՛մ օրէնքի սահմանած պատիժներին: Մասնաժողովները պէտք է նոյնպէս ազատ թողնեն անմիջապէս և զնեն ռստիկանութեան հսկողութեան տակ այն բնտարկեալներին, որոնց վարմունքը այլ ևս օրէնքի գործադրութիւն չի պահանջոււմ: Նոքա պիտի հսկեն նոյնպէս, որ ոչ մի անձն, առանց պատճառի և ապօրէն կերպով բանտ չզցուի: Այդ նպատակով նոքա պէտք է այցելեն բանտերը և բնտարկեալների պաշմանները քննեն: Մասնաժողովները պէտք է կազմեն զեկուցադրեր և ուղարկեն վալիներին, յիշատակելով նոցա մէջ ռստիկանութեան ձեռքով բնտարկւած այն անհատներին, որոնց հարկաւոր է ազատել, այլ և նոցա, որոնք պիտի մնան բանտերում:

VIII

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ ՔԻԻՐՎԵՐԻ ՎՐԱՅ

Յօդ. 24.—Թափառական քիւրդերին կառավարելու համար իւրաքանչիւր վիլայէթի վալին պէտք է ունենայ իւր ձեռքի տակ մէկ աշիրէթ-մէմուրի (պաշտօնեայ, որի գործը պէտք է լինի հսկել քիւրդ ցեղերի վրայ). այդ պաշտօնեան պէտք է իրաւունք ունենայ ձերբակալել աւաղակներին և ուրիշ չարագործներին ու պահանջել, որ նոցա ենթարկեն սովորական զատարաններին: Նա պէտք է ունենայ իւր ձեռքի տակ մի բաւարար պահակախումբ և կարող է, հարկաւոր դէպքում, պահանջել տեղական ռստիկանութեան աջակցութիւնը: Նորան ստորադրւած պաշտօնեաների մի որոշ թիւ

պէտք է ուզեկցի ամեն մի ցեղին (աշիրէթ)՝ նոցա տարեկան քոչի ժամանակ:

Նոքա պէտք է գործադրեն ոստիկանական իշխանութիւն, բանտարկեն բոլոր չարագործներին և յանձնեն նոցա սովորական դատարաններին: Թափառական ցեղերի արօտատեղերի և բանակատեղերի սահմանները պէտք է ճշգուծեամբ որոշուած լինեն: Այդ քոչերը չպէտք է պատճառ դռանան զրկանք հասցնելու այն գաւառների բնակիչներին, որտեղով անցնում են Թափառական ցեղերը և կամ ժամանակաւորապէս զբաւում: Եթէ նոքա որ և է չարագործութիւն անեն զիւզացիների սեփականութեան դէմ՝ կամ որ և է զրկանք հասցնեն զիւզացիներին, այդ օրից սկսած կարկարգելի նոցա որ և է տեղափոխութիւն կամ քոչ:

Այն կանոնները, որոնք գոյութիւն ունեն զէնք կրելու վերաբերմամբ, խստիւ պէտք է գործադրեն բոլոր քիւրդ ցեղերի մէջ, լինեն նոքա հաստատաբնակ, թէ Թափառական: Չանքեր պէտք է անւեն պատուաստել նստակեաց կեանքի սկզբունքները Թափառական ազգաբնակութեան, ընտելացնել նորան երկրագործութեան. և այդ նպատակով որոշ հողեր պէտք է յատկացնել նոցա այնպիսի տեղւորում, ուր նոցա հաստատուելը չի կարող որ և է վնաս հասցնել նստակեաց ազգաբնակութեան բարեկեցութեան և խաղաղութեան: Ընարողական և քաղաքացիական իրաւունքները չպէտք է պատկանեն այն անձերին, որոնք ոչ-նստակեաց ազգաբնակութեան մասն են կազմում, կամ որոնք հաստատուած չեն մշական և մնայուն կերպով մի որ և է նահիպի հողի վրայ:

IX

ՀԱՄԻԴԻԷ ՀԵՄԵԼԱԶՕՐԲԸ

Յօդ. 25.—Այն դէպքերում, երբ հարկաւոր համարւի գործ զնել Համիդիէ հեծելազօրքի գնդերը այժմ գոյութիւն ունեցող օրէնքներով սահմանուած զինավարժութեան ժամանակամիջոցներից զուրս՝ այդ գնդերը կարող են գործածուել և բանակել միայն կանոնաւոր զօրքի գնդերի հետ միասին, որի մի երրորդ մասից աւելի չպէտք է լինեն:

Սովորական ժամանակներում, երբ Համիլիէ հեծելագունը ծառայութեան մէջ չէ, չպէտք է կրի ոչ նշանազգեստ և ոչ էլ զէնք: Այդ պարագայում նոքա ենթարկուած են սովորական դատարաններին, ինչպէս արդէն այդ որոշած է Համիլիէյի Կանոնադրութեան մէջ (Օսմանեան Զինւորական Դատաստանագիրք, յօդ. 4):

X

ԿԱԼԻԱԾԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՐՅԸ

Յօդ. 26.—Մի յատուկ յանձնաժողով, որը բաղկացած պէտք է լինի մի նախագահից և չորս անդամներից,—երկուսը մահմէդական և երկուսը քրիստոնեայ,—պէտք է պաշտոն ունենայ քննելու սեփականութիւններին վերաբերեալ ապացուցագրերը, վերականգնելով իսխաւած իրաւունքները:

Մի յատուկ յանձնաժողով ապագայում պէտք է որոշի այն ամենալաւ եղանակը, որով կարելի լինի երաշխաւորել սեփականութեան իրաւունքները:

XI

ՏԱՍԱՆՈՐԴԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԺՈՂՈՎԵԼԸ

Յօդ. 27.—Բոլոր հարկերը, հաշւելով դոցա մէջ և տասանորդական տուրքերը, պէտք է հաւաքեն ուղղակի՝ նահիայի խորհուրդների կողմից ընտրւած և միւլիի իշխանութեան տակ գտնւող հարկահանների ձեռքով:

Նահիայի բոլոր բնակիչները փոխադարձաբար պատասխանատու են իրանց վրայ զբւած հարկերի լիակատար վճարման համար:

Յօդ. 28.—Վերացուած է տասանորդական տուրքերի կապւով տալը և ժողովրդին բռնի բանեցնելը (բեգեար): Եւրաքանչիւր վարչական շրջան, սկսած նահիայից, պէտք է իւր հաւաքած հարկերից վերցնի այն գումարը, որը հարկաւոր է իւր վարչութեան ծախքերի համար, համաձայն որոշած և կառավարութեան կողմից հաւանութիւն գտած բիւջէի: Նոյնպէս և վիլայէթի Ֆինանսական վարչութիւնը պէտք է վերցնի նահանգի հարկերի ամբողջ քանակութիւնից՝ վիլայէթի վարչութեան համար հարկաւոր գումարը, հաշ-

ւելով զորա մէջ հասարակական աշխատանքների և հանրային կըրթութեան ծախքերը:

Ազգաբնակութիւնը ոչ մի դէպքում պարտաւորաժ չպէտք է լինի ձրիաբար հայթայթել թէ զօրքի և թէ պաշտօնեաների բնակարան և նոցա ապրուստի համար հարկաւոր պաշարը:

Այն դէպքերում, երբ հարկերը չվճարելու համար էկզէկուցիա (կայքերի վաճառումն) է նշանակուում, խստիւ պատւիրուում է չզրկել բնակիչներին առաջին կարեւորութեան առարկաներից և աշխատանքի գործիքներից:

XII

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Յօդ. 29.—Նահիայի իւրաքանչիւր բաժնում հաստատուում է աւազների խորհուրդ, մուխթարի նախագահութեամբ: Նորա պարտականութիւնը պէտք է լինի ընտանեբար լուծել բնակիչների մէջ ծագած վէճերը:

Յօդ. 30.—Իւրաքանչիւր կազայում (դաւառակ), նահիաների թւի համեմատ, պէտք է լինեն բաւականաչափ թւով հաշտարար դատաւորներ, որոնց նշանակում է արդարադատութեան մինիստրը, վալիի առաջարկութեամբ: Այդ դատաւորներից մէկը անպատճառ պէտք է ապրի կազայի զլխաւոր քաղաքում: Հաշտարար դատաւորների մի երրորդ մասը իւրաքանչիւր կազայում պէտք է քրիստոնեաներից լինի: Քրիստոնեայ հաշտարար դատաւորները պէտք է բնակութիւն ունենան այն կենտրոններում, որտեղ քրիստոնեայ ազգաբնակութիւնը մեծամասնութիւն է կազմում:

Յօդ. 31.—Հաշտարար դատաւորը իրաւասութիւն պէտք է ունենայ դատելու՝

ա) Անբողոքելի կերպով այն քրէական վիրաւորանքները և օրէնքի դէմ գործւած զեղծումները, որոնք պատժւում են ոստիկանական սովորական միջոցներով, և— բողոքելու իրաւունքով— այնպիսի վիրաւորանքներ, որոնց համար նշանակուում է պատիժ 500 պիաստրից ոչ պակաս և երեք ամիս բանտարկութիւնից ոչ աւելի:

բ) Քաղաքացիական գործերում, առանց բողոքելու իրաւունքի, բոլոր անձնական գործերը, քաղաքացիական և առևտրական դա-

տերը, որոնց գումարը հազար պիաստրից չէ անցնում, և բողոքի իրաւունքով այնպիսի զանգատներ, որոնք հասնում են հինգ հազար պիաստրի:

Յօդ. 32.— Հաշտարար դատարանը կարող է կատարել նաև միջնորդ ատեանի դեր. նա կարող է, երկու կողմերի հաւանութեամբ, նշանակել միջնորդ դատաւորներ՝ լուծելու համար այնպիսի վէճեր, որոնց գումարը հինգ հազար պիաստրից չի անցնում: Միջնորդ դատաւորների կայացրած վճոյի դէմ դատաւորները իրաւունք չունեն բողոքելու:

Յօդ. 33.— Կազանների դատարանների տեղը բռնող հաշտարար դատաւորների վճիռների դէմ բողոք կարելի է տալ սանջակի դատարանին:

Յօդ. 34.— Բանտարկութեան վերաբերմամբ հաշտարար դատաւորների այն վճիռները, որոնք արւած են վերջին ինստանցիացում, պէտք է գործադրեն կազայի բանտում: Միւղիրները պարտաւոր են աջակցել հաշտարար դատաւորներին ի կատար ածելու ինչպէս քաղաքացիական, այնպէս էլ քրէական վճիռները:

Յօդ. 35.— Կազայի ատեանները ջնջւած լինելով, սանջակի դատարանները ձեռնահաս են դատելու այն քաղաքացիական վէճերը, որոնք հինգ հազար պիաստրից չեն անցնում. նոյնպէս և հաշտարար դատաւորների քաղաքացիական վճիռների դէմ տւած բողոքները: Սանջակի դատարանները պէտք է ունենան միայն քաղաքացիական ատեան, քանի որ քրէական ատեանի տեղը բռնում է շրջող նահանգական ատեանը (ասսիզ, assises):

Սանջակի ատեանները պէտք է բաղկացած լինեն մէկ դիւլոմաւոր նախագահող դատաւորից, որին նշանակում է արդարադատութեան մինիստրը և երկու անդամներից, որոնց ընտրում է վալին, սանջակների խորհուրդների ձեռքով կազմած ցուցակների միջից:

Յօդ. 36.— Սանջակի քրէական ատեանների բաժինները փոխարինւում են շրջիկ նահանգական ատեաններով: Նահանգական շրջիկ ատեանները բաղկացած են մէկ նախագահող դատաւորից, որը ընտրւում է վիլայէթի բարձրագոյն խորհրդի անդամների միջից. նորան պաշտօնակից են լինում երկու անդամներ, որոնք նշանակւում են բողոքի ատեանի կողմից սանջակի հաշտարար դատաւորների միջից,

մէկը մահմեդական, իսկ միւսը քրիստոնէայ: Հաշտարար դատաւորները պէտք է ստանան արոշ ոռճիկ, շրջիկ նահանգական ատեանների ամբողջ ակողմութեան ժամանակ:

Յօդ. 37.—Նահանգական շրջիկ ատեանը հերթով նիստեր է ունենում բոլոր կազմներում, հաշուելով և սանջակի գլխաւոր քաղաքը, ուր նորաներկայութիւնը հարկաւոր կարող է լինել: Նորա իրաւասութեանն են վերաբերում վիրաւորանքների վերաբերեալ հաշտարար դատաւորների վճիռների դէմ աւած բողոքները, այլ և աւանց բողոքելու իրաւունքի այն գործերը, որոնց պատիժը հինգ հազար պիաստր տուգանքից և երեք ամիս բանտարկութիւնից չի անցնում: Քրէական գործերի վերաբերութեամբ նահանգական դատարանների վճիռները բողոքելի են վճռաջինջ ատեանի առաջ:

Յօդ. 38.—Հասնելով կազան, նահանգական շրջիկ ատեանի նախագահը պէտք է պահանջէ քննիչ դատաւորից այն բոլոր գործերի ցուցակը, որ ուղղակի նորա ձեռքով են անցել, և մի ուրիշ ցուցակ այն գործերի, որոնք դեռ քննութեան ներքոյ են: Եթէ նա նկատի նոցա մէջ որ և է անկանոնութիւն կամ անտեղի վետաձգութիւն, նա անմիջապէս մի զեկուցագիր պէտք է ուղարկի արդարադատութեան մինիստրին:

Նահանգական շրջիկ ատեանը՝ հասնելով կազան կամ այնտեղից հեռանալիս՝ պէտք է այցելի բանտերը, քննի բանտարկեալների վիճակը և արձանագրութեանց մատեաններով ստուգի նոցա բանդ մտնելու օրերը:

Յօդ. 39.—Վիլայէթի բարձրագոյն ատեանը պէտք է բաղկացած լինի մի նախագահից և այնքան անդամներից, որ հնարաւորութիւն ունենան քննելու իրանց առաջարկած քաղաքացիական գործերը և մատակարարեն շրջիկ նահանգական ատեաններին նախագահներ:

Քաղաքացիական դատերում նորա իրաւասութիւնը նոյնն է, ինչ բողոքի ատեանինը, իսկ քրէական գործերում նոյնն է՝ ինչ մի նահանգական շրջիկ ատեանինը: Նորա նիստը կանոնաւոր կը համարւի ամեն անգամ, երբ ներկայ կը լինեն մի նախագահ և երկու անդամ: Բացի դրանից նա պէտք է ունենայ մի դատախազ և բաւական թւով սորա օգնականներ:

Յօդ. 40.—Հաշտարար դատարանների, ինչպէս և ամեն տեսակ դատարանների գործավարութիւնը լինում է թիւրքերէն լեզուով. բայց թիւրքական բնագրին պէտք է կցւի հայերէն թարգմանութիւնը՝ նայելով տեղին և դատուող կողմերին:

ՏԱՃԿԱ-ՋԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄՆ

«Մուրճ»-ի ընթերցողները կը գտնեն վերև Անգլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների կողմից կազմած յայտագիրը և ռեֆորմների ծրագիրը իւր ամբողջութեամբ, որ ներկայացուցեց նոր տոմարով մայիսի 11-ին նորին կայսերական մեծութիւն տաճկաց սուլթանին և Բ. Դուան: Գոկումէնտը ընդարձակ է. ներկայ յօդուածով մենք գալիս ենք մեր ընթերցողներին օգնելու՝ ներկայացնելով նոցա երկրի կառավարութեան այն դրութիւնը, որ մեծ տէրութիւնները կամենում են ստեղծել Տաճկա-Հայաստանում:

Մեր բացատրութիւնը կը վերաբերի ծրագրի միմիայն վարչական մասին:

Նշանակում է Բ. Դրան կից մի մշտական բարձր յանձնաժողով, որը վերին տեսչութիւն է կատարում Տաճկա-Հայաստանի ամբողջ կառավարութեան վրայ: Նշանակում է և մի ժամանակաւոր բարձրագոյն կոմիտար, որին կը նշանակի սուլթանը, պետութիւնների հաւանութեամբ՝ ռեֆորմները իրագործելու համար:

Ամենից առաջ որոշում է այն երկրի տարածութիւնը, որ պիտի ենթարկուի հայկական ռեֆորմներին: Այդ երկիրը ներկայումս բռնում են Վարինի (Երզրում), Բիթլիսի, Վանի, Սեբաստիայի (Սիւսա), Մամուրէթ-իւլ-Ազիզի և Տիգրանակերտի (Իիարբէքիր) նահանգները: Մեր մտաւորական հաշուով արևելքից մինչ արևմուտք իւր ամենակար տեղում այդ երկիրը ունի 700 վերստ, իսկ հիւսիսից հարաւ՝ 300 վերստ, իսկ ամբողջ տարածութիւնը պէտք է որ բռնում լինի մտաւորապէս 200.000 քառակուսի վերստ, ուրեմն որքան Անդրկովկասն է:

Այդ երկիրը բաժանուած կը լինի ոչ թէ վեց, ինչպէս այժմ է, այլ աւելի քիչ, երեւի 3 կամ 4, նահանգների, և կարելիին չափ

այնպէս, որ, այդ նահանգներում և նոցա ստորաբաժանումներում քրիստոնեաները և մուսուլմանները ջոկ-ջոկ համախմբուած լինեն:

Այդ երկիրը (որ մենք կ'անւանենք Տաճկա-Հայաստան) վարչական կողմից բաժանուած կը լինի՝

1. Նահանգների, որ կ'աչուում են վիլայէթներ:
2. Վիլայէթը բաժանուում է մի քանի սանջակների (գաւառ),
3. Սանջակը՝ մի քանի կազանների (գաւառակ),
4. Կազան բաղկացած կը լինի մի քանի դիւղական խմբերից,

որ կոչուում են նահիաներ (համայնքներ):

Այսպիսով նահիան ամենափոքրիկ վարչական ստորաբաժանումն է. նահիան պիտի ունենայ 2000 ից մինչ 10,000 բնակիչ, բացի եթէ աւելի պակաս ունեցող համայնքները իրանց վրայ կ'ուզենան աւնել նահիայի կառավարելու ծախքերը: Նահիան—այն է, ինչ Ռուսաստանում կոչուում է վոյուոյ, Ֆրանսիայում՝ կոմմուն:

Ամեն մի ստորաբաժանման գլուխ կանգնած է մի վարչական անձ.

1. Վիլայէթի (նահանգի) գլուխն է վալին, (որ համապատասխանում է Ֆրանսիացոց պրեֆէկտին, ռուսաց նահանգապետին):
2. Սանջակի (գաւառի) գլուխն է միւլթեսարիֆը (Ֆրանսիացոց սուպրեֆէկտ, ռուսաց գաւառապետ—ուեզդնի նաչալնիկ):
3. Կազայի (գաւառակի) գլուխն է գայմագամը—գաւառապետ Կազային համապատասխան վարչական ստորաբաժանում Կովկասում պրիստաուլթիւնն է, Ռուսաստանում օկրուգը, Ֆրանսիայում՝ առոնդիսման:

3. Նահիայի (համայնքի) գլուխն է միւղիրը (ռուսաց վոյստոնոյ ստարշինան, համայնքի տանուտէրը):

4. Գիւղը ունի զիւղապետ՝ որ կոչուում է մուխթար (ռուսաց ստարոստա) կամ մուխթարներ, եթէ զիւղի բնակչութիւնը տարբեր կրօնական տարրերից է բաղկացած:

Վալին, միւլթեսարիֆը, գայմագամը և միւղիրը պիտի ունենան մի-մի օգնական, որ կոչուում է մուալին: Բացի դոցանից ամեն մի ստորաբաժանում պիտի ունենայ իւր խորհուրդը այն է՝

- 1) Վիլայէթի (նահանգի) խորհուրդ, նախագահութեամբ վալիի.
- 2) Սանջակի (գաւառի) խորհուրդ, նախագահութեամբ միւլթեսարիֆի:

3) Կազայի խորհուրդ, նախագահութեամբ գայմագամի:

4) Նահիայի խորհուրդ, նախագահութեամբ միւղիրի:

Հարց. Ինչպէս պիտի նշանակին վերոյիշեալ պաշտօնեաները:

Պատասխան: 1) Վալիներին (նահանգապետներին) նշանակելու է սուլթանը՝ հինգ տարուլ հաւանութեամբ մեծ պետութիւններին: Նոքա կարող են վերընտրել:

2) Վալիների օգնականներին նշանակում է սուլթանը ուղղակի:

3) Գաւառապետներին (միւթեսարիֆներին) և սոցա օգնականներին, գայմագամներին ու նոցա օգնականներին նշանակում է սուլթանը վալիների առաջարկութեամբ:

4) Միւղիրներին և նոցա օգնականներին ընտրում են նահանգների խորհուրդները:

Հարց: Ինչ դաւանութեան պիտի պատկանեն յիշեալ պաշտօնեաները:

Պատասխան: Ամեն մի ստորաբաժանման գլուխը (վալի, միւթեսարիֆ, գայմագամ, միւղիր) պէտք է պատկանի այն դաւանութեանը, (քրիստոնեայ և մահմեդական) ինչ դաւանութեան պատկանում է բնակիչների մեծամասնութիւնը ամեն մէկի կառավարած շրջանում (վիլայէթում, սանջակում, կազայում, նահիայում):

Իսկ նոցա օգնականները պէտք է պատկանեն փոքրամասնութեան կրօնին:

Օրինակ. մի վիլայէթ ունի 300.000 մահմեդական, 200.000 քրիստոնեայ. վիլայէտի 3 գաւառներում մեծամասնութիւն կազմում են մահմեդականներ, 2 գաւառներում՝ քրիստոնեաներ: Այդ դէպքում վալին կը լինի մահմեդական, օգնականը՝ քրիստոնեայ. 3 սանջակներում գաւառապետները կը լինեն մահմեդականներ, նոցա օգնականները՝ քրիստոնեաներ. երկու միւս սանջակներում գաւառապետները կը լինեն քրիստոնեաներ, նոցա օգնականները՝ մահմեդականներ:

Դա ընդհանուր կանոն պիտի լինի: Բայց եթէ մի վիլայէթում քրիստոնեաները աւելի սակաւ լինեն, այնպէս որ այդ վիլայէթի բոլոր սանջակներում և կազաներում մահմեդականները մեծամասնութիւն կազմելու լինեն, այդ դէպքում պէտք է վարել յօ-

գուտ քրիստոնեայ փոքրամասնութեան այնպէս, որ քրիստոնեայ գաւառապետների (միւթեսարիֆների) և գայմազամների (գաւառակապետների) թիւը այդ վիլայէթի բոլոր գաւառապետների և գաւառակապետների թիւի մի երրորդից պակաս չլինի:

Գիւղապետը (մուխթար) այն դաւանութեանն է, ինչ դաւանութեան պատկանում է զի զական համայնքը. իսկ եթէ դաւանութեամբ բաժանուած են գիւղական համայնքի բնակիչները՝ ամեն մի մասը ընտրում է իւր մուխթարին:

Հարց: Ինչպէս են կազմւում նահանգական, գաւառական, գաւառակային և նահիանների խորհուրդները:

Պատասխան: Համայնքի ազգաբնակի թիւնը ընտրում է նահիայի խորհրդի անդամներին (4—8 անգամ). մի գաւառակի բոլոր նահիանների խորհուրդները ընտրում են գաւառակային խորհրդի անդամներին (4 անգամ). մի գաւառի բոլոր գաւառակների խորհուրդները ընտրում են գաւառի (սանջակի) խորհրդի անդամներին (4 հողի), բացի նախագահ գաւառապետից (միւթեսարիֆ) և վերջապէս վիլայէթի բոլոր գաւառական խորհուրդները ընտրում են նահանգական ընդհանուր խորհրդի անդամներին (4 անգամ, բացի նախագահ նահանգապետից — վալի):

Հարց: Ինչ դաւանութեան պէտք է պատկանեն խորհրդների անդամները:

Պատասխան: Նահիան երում խորհրդի անդամների մէջ քրիստոնեայ և մահմեդականների թիւը պիտի համապատասխանի իւրաքանչիւր դաւանութեան բնակիչների համեմատական թւին. չամենայն դէպս փոքրամասնութիւնը՝ եթէ 25 տնից պակաս չէ՝ պիտի մի ներկայացուցիչ (անգամ) ունենայ նահիայի խորհրդում:

Իսկ գաւառակային, գաւառական և նահանգական խորհրդների մէջ՝ ամեն չորս անդամների թւում երկուսը պիտի քրիստոնեայ լինեն, երկուսը՝ մահմեդական:

Ա. Ա.

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՕԶԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ)

ԱԼԷԳՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

Нѣтъ! лучше въ темную могилу
Унести безвременно съ собой
И сердца пылъ, и духа силу,
И грезъ безумныхъ, страстныхъ рой,
Чѣмъ промѣнять на сонъ отраднѣй
И честный трудъ, и честный бой,
И незамѣтно въ тивѣ смрадной,
Въ грязи увязнуть съ головой!

А. Плещеевъ.

Այսօր, երբ Վեոն վարդապետն ալ ես չկայ, երբ «իդէալիստ հաշ կրօնաւորն» իջել է ցուրտ դերեղման՝ իւր հետ տանելով աչնքան փշուած չուսեր, աչնքան անկատար խորհուրդներ ու ըղձեր,—այսօր իմ վիշողութեան մէջ զարթնում են «մի քանի անմոռանալի ժամեր», որ ես անցուցել եմ հանգուցեալի հետ: Ասում եմ, «անմոռանալի», որովհետեւ այդ մի քանի ժամերի ընթացքում իսօք ու զրոյց անելով Վեոն վարդապետ Խօջապետի հետ, իմ աչքին աչնքան չպարզեց նրա քարոզական սլաոկերը, որ այդ պատկերն անջնջելի տպաւորութիւն թողեց վրաս:

Վեոն վարդապետ Խօջապետին ես առաջին անգամ տեսայ և հետը ծանօթացայ մի քանի տարի սրանից առաջ Մոսկուայում, ուր նա եկել էր Էջմիածնից՝ ձեմարանի համար Քիղիքական կարմնէտին վերաբերեալ անհրաժեշտ գործիքներ դնելու: Աչն ժամանակ նա դեռ աշխարհական էր և մաթեմատիկալի դասատու էր ձեմարանում:

Հանգուցեալի հետ ինձ ծանօթացրեց նրա նախկին ընկերակիցներից մինը, որի հետ միասին սովորել էին թէ Վազարեան ձեմարանում և

թէ համալսարանում: Ահա ալ ընկերակցի սենեակում նստած՝ մի-մի բա-
ժակ թէլ առաջներխ, մենք ամբողջ 5 ժամ ասում-խօսում, վիճում էինք
ազգային և հասարակական զանազան խնդիրները մասին: Մեր խօսակ-
ցութեան նիւթն էր զլիսաւորապէս էջմիածինը, հաշ հոգեւորականութիւնը
և հաշոց դպրոցական կեանքը:

Մենք երկուսս — հանգուցեալի ընկերակիցը և ես — աշխատում էինք,
որքան կարելի է, քիչ խօսել. մենք միաջն զանազան հարցեր տալով և
խնդիրներ մէջ բերելով՝ իսկապէս խօսեցնում էինք Վեոնին, որն իբրև
Վովկասից, հաշկական կեանքի կենտրոնից նոր եկած մարդ, անտարակոյս,
չատ բանի հետ մօտից ծանօթ էր և շատ բան իւր սեփական աչքովն էր
տեսել: Մեր հետաքրքրութեան և ուշադրութեան կենդրոնն ալ ըստ էին,
ի հարկէ, Վեոնն էր: Եւ նա խօսում էր, խօսում էր համարեա առանց
չունչ քաշելու, խօսում էր աչնպիսի չափչտակութեամբ, աչնպիսի սիրով
ու եռանդով, որ, կարծես, իւր գրած ու անգիր արած մի բանաստեղծա-
կան գրածքն էր կարդում: Նա մերթ սաստիկ տաքանում ու զարա-
նում էր, մերթ բոլորովին հանդարտում ու մեղմանում. իսկ աչքերի մէջ
չարունակ վառվռում էր մի տեսակ հրապուրիչ կրակ — անկեղծութեան և
խորին համոզմունքի կրակ: Առանց հոգեբան լինելու կարելի էր հասկա-
նալ, որ քո առաջ նստած է իւր ամբողջ էութեամբ գաղափարին նւիրած
մի երիտասարդ, որի մէջ խօսում են սիրտն ու հոգին, խօսում է անհուն
սէրը դէպի ազգային-հասարակական գործը: Եւ որքան քաղցր չլսեր,
որքան ազնիւ խորհուրդներ ալ ըստ էին, ծովի պէս լուզում ու եռում
էին համալսարանը նոր աւարտած, ազգին, հաշքենիքին ծառայելու աս-
պարիզի վրալ նոր ոտք դրած Վեոնի մատաղ կրծքում...

Ես չեմ մոռանալ աչն կծու նախատինքը և անողք կշտամբանքը,
որ նա լանկարծ, հեղեղի նման, թափից իւր ընկերակցի գլխին, երբ վեր-
ջինս, վիճարանութեան ժամանակ, ի միջի ալոց, քմծիծաղ տալով ասաց,
որ հաշերի մէջ գործ կատարել չարժէ և չի էլ կարելի, մանաւանդ, էջ-
միածնի պէս տեղում, որ շուտով Վեոնն ինքն էլ ալ բանը կը զգալ և
կը խոստովանի, որ նա մի քանի տարից վետոյ կը հիասթափուի և աչն
ժամանակ կը սկսի ուրիշ երգ կրգել: Պէտք էր ալ ըստ էին տեսնել ոսկի
երազներով և վսեմ ձգտումներով ապրող Վեոնին: Երիտասարդ, համալսա-
րանական ընկերակցի ալ տարակուսանքը դէպի Վեոնի եռանդն ու անձ-
նւիրութիւնը, նրա կէս-պետիմիտական և կէս-գործնական հաշեցակէտը
հաշկական կեանքի մասին խոր խոցեցին Վեոն խօշակեանի սիրտը: Յի-
շում եմ, ինչպէս նա մի ակնթարթում կրակի պէս բռնկեց և դառնալով իւր
պաղարին և ամեն բան հեգնող ընկերին, համարեա բղաւցեց. — Դու ասում
ես, կը գալ ժամանակ, երբ ես ուրիշ երգ կ'երգեմ: Իմացած եղիք, որ ես
միաչն մի երգ ունիմ — անձնէր ծառայել հասարակաց շահերին, աչնիւ

սրտով և մաքուր զգացմունքերով անցնել կեանքի ճանապարհը: Եւ այդ երգը պիտի լինի մեր կեանքի խորհուրդը: Այդ երգը պիտի գիշեր ցերեկ երգէ գիտութեամբ զինւած հալ երիտասարդութիւնը, որ կեանքի մէջ է մտնում, որի վրայ աչնքան մեծ չուտեր ունի ազգը: Գու, բարեկամ, ինչպէս տեսնում եմ, շատ շուտով ես քո առաջալ գեղեցիկ իդէալները ծաւելի ու ջէբդ գրել: չէ որ մենք միաչն երէկ թողինք համալսարանը, ուսանողական ոգելից կեանքը: Միթէ մոռացել ես, թէ որքան և որպիսի համարձակ ծրագիրներ էինք կազմում մենք մեր ապագայ գործունէութեան համար ազգային ասպարիզի վրայ: Մենք ապրում էինք գաղափարական աշխարհում, ապրում էինք գաղափարական կեանքով: Միթէ մոռացել ես այն գիշերները, երբ մինչև լոյս պապիրոսի ծուխով լի փոքրիկ սենեակում վիճում, իրար բողաղ էինք պատում մեր կեանքի այս ու այն երեւութներին, այս ու այն խնդիրներին մասին: Իսկ այսօր... Այսօր դու կեանքի դպրոցի դեռ չէմք չկոխած, դեռ կեանքում չկուած, դեռ ժողովրդի հետ չչփեած, հեռու մեր «չարն ու բարիք», հեռու մեր կեանքի վարդ ու փշից, մալրաքաղաքում նստած՝ պեսիմիստ ես դառել և հեգնում ես ամեն բան: Ի՞նչ ես տաք-տաք նստել ալստեղ. արի կ'վկաս, արի Թիֆլիս, էջմիածին. տես ինչքան գործ կալ այնտեղ կատարելու. ինչքան հասարակական ցաւեր կան դարմանելու. ինչքան հող կալ թարմ, երիտասարդ մշակների կարօտ... Իդէալներ, ձգտումներ, ազնիւ խորհուրդներ ու նպատակներ ծաւել, ջէբը դնել և ծաղրելով գաղափարական գործունէութիւնը՝ մտածել անձնական բարեկեցութեան մասին—դա մի դժւար բան չէ: Դրա համար կարիք էլ չկար 10—15 տարի սովորել, համալսարանն աւարտել: Ամօթ է, եղբանց, ամօթ է: Մեր լճացած, մեր բորբոնած կեանքը կարօտ է թարմ ուժերի, մատաղ բազուկների: Լճու, լճու է հարկաւոր մեր անմխիթար, մեր խաւար կեանքին... Եւ իդէալիստ Լեոնը ոգևորած սկսեց խօսել ընդհանրապէս հայոց դպրոցական աննախանձելի կեանքի մասին և մասնաւորապէս ձեմարանում սիրող ոգով և ուղղութեան մասին. նկարագրեց էջմիածնի վիճակը, նրա տնտեսական դրութիւնը, շօշափեց վանքապատկան կալաւածիների խնդիրը. երկար կանգ առաւ նամանաւանդ էջմիածնի միաբանութեան մտաւոր և բարոյական կեանքի մասին... Չեմ կարող ասել, թէ Լեոն Խօջաւեանն օժտած էր ճարտարախօսական ձիրքով. բայց նա խօսում էր, ինչպէս ասում են, սրտի մէջից: Եւ այդ էր պատճառը, որ գրաւում, լարում էր ունկնդրի ուշադրութիւնը:

Երեկոյեան 6 ժամն էր, երբ մենք բաժանուցինք և աչնուհետև ես ալ ևս չտեսալ Լեոն Խօջաւեանցին: Կարծեմ երկրորդ թէ երրորդ օրը նա մեկնեց դէպի Կովկաս, դէպի էջմիածին, դէպի իւր սիրելի ձեմարանը... Նա գնաց դարձեալ գործելու, դարձեալ իւր մատաղ ուժերը, իւր սիրտն ու հոգին նւիրելու ազգային չառաջադիմութեան գործին: Եւ նա, ինչպէս

հեռուից լսում էինք, գործում էր նախ իբրև ուսուցիչ ճեմարանում, ուսուցիչ օրինակելի, ուսուցիչ՝ ներշնչւած հաշ մատաղ սերնդին դէպի գաղափարական կեանքն առաջնորդելու փալտուն ձգտումներով, ուսուցիչ՝ հետաքրքրուող աշակերտի դարդ ու ցաւով, չարգող աշակերտի մարդկաչին զգացմունքները. ուսուցիչ՝ ջերմ սիրող աշակերտին և ջերմ սիրւած աշակերտից: Յետոյ նա հագաւ սև փարաջաշ և մտաւ «աշխարհի վաչելչութիւններին» հեռացած կուսակրօն մշակները շարքը: Եւ գաղափարին նվիրւած Լեոնն սկսեց ալտեղ էլ բուռն եռանդով գործել, իբրև հոգևորական, հոգևորական՝ համալսարանական բարձր զարգացումով, տոգորւած ազատ, բարձր գաղափարներով, հոգևորական՝ ատող ստրկահոգութիւնն ու շողքորթութիւնը, պաշտող ժողովրդին, պաշտպանող ժողովրդի ձաջնն ու իրաւունքը, հոգևորական՝ լուս քարոզող և լուսի համար ապրող... Սակաչն աչն սև փարաջան, որ նա հագել էր աչնպիսի անձնուրաց սիրով և ոսկեշող չուսերով, աչն սև փարաջան և նրա հետ սերտ կապւած ստրկացնող, լետաղէմ կեանքն անողոք պատերազմ բացին նրա դէմ, փչրեցին նրա յոյսերը, շղթաչեցին նրա մտքի ու հոգու թռիչքները... Եւ ահա աչսօր հալոց եկեղեցու իղէալիստ սպասաւորը չաղթւած ալդ անհաւասար կուտւմ՝ ծաղիկ հասակում արդէն հողի բաժին է դառել... Բաչց թոող ալդ պարտութիւնը չվհատեցնէ մեզ: Յաղթուում, մեռնում է Լեոնները միաչն հողեղէնը. իսկ նրանց գաղափարները... Նրանց գաղափարներին է պատկանում լուսաղարդ ապագան...

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս Ե Ի Ե Ա Ն Ի

IV

Արտաշէս Սուքիասեան:—Կրկին թատրոնի ապագայի խնդիր:—Պ. Պետրոսեանի ներկայացումները:—Փատերասէրների մի ներկայացման առիթով:—«Գրականական քամէլէօն»:—Պր. Աբէլեանի վերադարձը:—Գերասանական ընկերութիւն 95—96 թ. համար:

Յունիսի սկզբներին Բագում, բոլորից մոռացած, համարեա անչափութեան մէջ վախճանւեց 60-ական թւականների հաջ թատրոնի աչքի ընկնող գործիչներից մէկը, դերասան Արտաշէս Սուքիասեան:

Հանգուցեալը, քանի տարիներ ամեն տեսակ գործից քաշւած, Բագում տառապում էր չօղացաւով: Թատրոնական անապատ ասպարիզում նա ժամանակին ելեաց իբրև մի օւաղիս, ոչ միայն հեռու անցեալում, ուր պակասում էին ոչժեր, այլ 1879—80—81 թւականի թիֆլիսի թատրոնական ամենափառաւոր տարիների ժամանակ դերասանական խմբում աչքի ընկնող տեղ էր բռնում: Սուքիասեան իբրև դերասան կատարում էր ֆատի դերեր՝ բաւականին չաջող. մենք առիթ չենք ունեցել նրան տեսնելու ուրիշ դերերում: Նա իւր դերերին լրջութեամբ վերաբերող դերասան էր. իւր ստեղծած տիպերը օրինակելի էին և բարեխղճօրէն ուսումնասիրւած:

Իբր հաստատ լուր կարող ենք հաղորդել, որ հանգուցեալը վերջին տարիներում զբաղւած է եղել իւր «Յիշատակարան»-ը գրելով, որ անշուշտ հետաքրքիր է և կարող է նոր լուս սփռել 60-ական թ. թատրոնի գործիչների գործունէութեան վերայ, և ցանկալի էր նրա ժամ առաջ հրատարակութիւնը:

Անցնում են օրերը, շատ մօտ ենք աշնան, և ներկալ 95—96 թա-
տերաշրջանի համար և ոչ մի նախաձեռնութիւն չէ եղած. մենք անցեալ
անգամ աչդ գործի վերայ մտածելը դրել էինք դերասանների վզին, բայց
Նրանք աւելի զբաղւած լինելով իրանց մանր-մուշոր անձնական հաշիւնե-
ներով և ամառալին գաւառական ներկալացումներով, բուն գործը, որի
մէջ և կալանում է իրանց թէ նիւթական շահը և թէ բարոյական գոր-
ծակցութիւնը, Թիֆլիսի թատրոնի խնդիրը բարձի թողի են արել իսպառ.
Այս ամսի սկզբում, որ համարեա բոլոր դերասանները հաւաքւած էին
Թիֆլիսում, ոչ մի անգամ չկարողացան կամ, աւելի ճիշտ է ասել, չկամե-
ցան միասին հաւաքւել և մտածել իրանց թատրոնի խնդրի մասին: Եւ
չենք զարմանալ, եթէ աչդ պարոններից մէկն ու մէկը դարձեալ վերկե-
նալ և, բոլոր լանցանքը հասարակութեան վերայ բառնալով, գուցէ թէ
«թատրոնի մասին ոչ ոք չէ մտածում...»: Մենք կրկնում ենք մեր անցեալ
անգամաւ աւսածը, եթէ՛ դերասանները աչժմ աչնպիսի ուժ են կազմում,
որ Նրանք միացած ազատօրէն կարող են մտածել թատրոնի խնդրով, իսկ
հասարակութիւնը միշտ օժանդակել է կ'օժանդակէ գործին:

Պ. Պետրոսեանը, երևի խրախուսւած երևանում գտած չաջողու-
թիւնից, (ուր ի միջի ալլոց խաղացել էր «Բարեգործութեան դիմակի
տակ» անունով անպէտք հռչակւած պիէսը) աչս անգամ բոլորովին
միաջնակ գնացել էր Ալէքսանդրապոլ ներկալացումներ տալու: Մենք որ-
քան չարդում ենք պարոնի անձնաւորութիւնը, աչնքան էլ սկզբունքով հա-
կառակ ենք միաջնակ մի դերասանի աչդպիսով կազմած ներկալացումներին,
ձեռնարկութեանը, որ իւր մէջ գեղարեւոտական ոչինչ չունենալով՝ կրում է
զուտ աւետրական կերպարանք. մանաւանդ ի նկատի ունենանք Նորա բե-
պէրտուարը, (Քին, Գաղաքական մահ, Օթէլլօ, Ուրիէլ Ակոստա) որ անպաշ-
ման յաւ անսամբլ է պահանջում: Մենք իրաւունք ունենք պահանջելու
արդէն «դերասան» կոչումը կրող պարոններից, որ, իրանց նիւթականի
մասին խորհելիս, բոլորովին անտես չառնեն և չհարստահարեն գեղար-
ւեստը:

Խօսելով դերասանների միաջնակ կազմած ներկալացումների մասին,
⁴ստիպւած ենք ակամալից վիշելու մեր անցեալ անգամաւ լօղւածում շօշա-
փած մի հարց, աչն է սիրողների ներկալացումների մասին, որոնք վեր-
ջերս պարբերական կերպարանք էին ստացել: Մենք առիթ ենք ունեցել
տեսնելու թէ եւրոպացի, թէ ռուս, և թէ մասամբ հալ թատերասէրներ,
որոնք իրանց խաղով ոչ միաչն զւարճութիւն են պատճառել հասարակու-

թեան, այլ չաճախ ամենանուրբ ճաշակի տէր մարդոց գեղարեստական մեծ բաւականութիւն են պատճառել: Բոլորովին հակառակն են անու՛մ հաջ սիրողները, մանաւանդ նրանք, որոնք զուրս եկան բեմ և չունիսի սկզբներին խաղացին երեք վողըւիլներ («Գիշերւան սաբըը խէր է»), «Փակ-ւած դրան մօտ», «Աշնանալին երեկոյ») չօգուտ Հայունեաց Բարեգործական ընկերութեան: Մեր ինտէլիգէնտ պարոնները և օրիորդները շատ վատ են անու՛մ մի որ և է բարի գործի օգնելու ասպարէզ և միջոց բազմաչարչար հաջ թատրոնը ընտրելով: Այսպէս միշտ առիթ ենք ունեցել մտածելու և այսպէս էլ մտածեցինք այդ երեկոցեան թատրոն գնալով և ատենելով հաջ թատրոնի, գեղարեստի անու՛նով հաւաքած, մի թատերասրահ ծալրէ ի ծալր լիքը հասարակութիւնով: Վատ է պիէսների ընտրութիւնը, թոյլ էին խաղում բարեգործ-թատերասէրները, և ինչ, զեռտեղերի գներն էլ թանգացրած... Այդ երեկոցեան հասարակութիւնից շատերը որ երկու-երեք տարին մի անգամ, աչն էլ հազիւ, գուցէ պատահմամբ տեսնում էին հաջոց թատրոնի երեսը, դժւար թէ այսուհետև համաձայնին իրենց անձը հաջ ներկայացման գնալու փորձութեան ենթարկել: Ո՛վ հաջ թատերասէրներ, աղաղակում ենք, խնայեցէք խեղճ հաջ թատրոնը, մի աշխատէք մի երկու փետուր ևս դուք պոկել նրա արդէն փետրաթուփ եղած մարմնից. հաւատացէք, համոզեցէք վերջապէս որ մի լաւ պիէսը, լաւ խաղացելով՝ հասարակութեան ընդ միշտ կը ձգէ գէպի հաջ թատրոն. խոյ աշնայիսի պիէսների ընտրութիւն և խաղ, որպիսին դուք էք կատարում՝ խեղճ թատրոնից կը հեռացնէ նրա մնացած, վերջին, հատ ու կտոր բարեկամներին: Այդպիսի ղէպքերում ղերասաններին տւած 150—200 ր. վարձատրութիւնը ամեն կերպ արդիւնաւոր կը լինի և թատրոնը կը մնայ լուր կոչման բարձրութեան վրայ:

«Մուրճ» ամսագրի աշխատակից պ. Նոն Մանուէլեանցի մօտ առիթ ունեցանք տեսնելու մի նոր պիէս «Գրականական քամէլէօն» վերնագրով, որ մեր երկտասարդ բանաստեղծի գրչին է պատկանում: Պիէսը ժամանակակից է, վերին աստիճանի հետաքրքիր և շատ որոշ գոյներով նկարւած են ներկայացնող տիպերը: Աջտեղ երևում են մեր գրականութեան ասպարիզի վերայ գործող բոլոր ծանօթ ղէպքերը իրանց տիւր-իրական պատկերներով: Մենք հաւատացած ենք և համոզւած պիէսի ունենալու չաջողութեան մասին, բայց մարգարէ պէտք չէ լինել գուշակելու համար նրա առաջ բերելու ցասումն ու ղալրուլթը աչն բոլորի կողմից՝ որոնք իրանց կենդանագիրները պիտի տեսնեն այդ պիէսում, և որոնք իրանց ձեռքում գրիչ ունենալը պիտի իրաւունք համարեն խալթելու աչն ձեռքը՝ որ ճըգնում է պատուել նրանց ղիմակը և բացարձակ, անաչառ, խիստ դատարանի ենթարկել նրանց քողարկւած գործունէութիւնը:

Ամսիս սկզբներին Թիֆլիս վերադարձան պ. Աբէլեան, օր. Արաշեան և տ. Փարանձէմ: Պր. Աբէլեանը իւր խմբով, որի մէջ գտնուում էին և տ. Զարէլ, պ. պ. Պարոն-Սարգսեան, Ստեփանեան և Արաքսեան (վերջինս, խմբի ղեկիւորը, բաժանուել է Ռոստովում, իւր բէնէֆիսը ստանալուց չետու) Բագրից անցել է Վլադիկազկապ, Նոր-Նախիջևան, Եկատէրինոպոլ և Ս. Պետերբուրգ: Խմբի բարուական և նիւթական վարձատրութիւնը եղել է բաւականաչափ արդիւնաւոր: Մեր կարծիքով լաւ կը լինէր որ այդ ճանապարհորդող խումբը ձմրան ամիսներին մնար Թիֆլիս և միւս զերասանների հետ միացած ուժերով շարունակէր Թիֆլիսի համար անհրաժեշտ ներկաւացումները, իսկ փետրուարից սկսէր իւր ճանապարհորդութիւնը:

Ամբողջ ձմեռուայ ընթացքում Թիֆլիսում միմեանց ետեից կրկնուող ոչ-կանոնաւոր կազմակերպութիւն ունեցող ներկաւացումները լաւ չաջողութիւն ունեցան:

Անչափ բերկրութեան առիթ է մեզ, «Մուրճ»-ի էջերում չաճախ պաշտպանուած մտքի իրագործումը տեսնելը: Ներկայումս Թիֆլիսում գտնուած զերասանները որ ոչ եւ են եկող 1895—96 թ. սէզոնին թատրոնական գործը տանել իրանց սեպհական ուժերով, ինքնօգնութեամբ, առանց զանազան «կոմիտէտների» որոնց տւած օգուտից աւելի անբաժան ընկեր է գործի մշտուելը: Գերասանները ինքնօգնութեան ղիմելով և իբրև ընկերներ համբարչի մնալով՝ անտարակոյս է նրանց ունենալու չաջողութիւնը: Թատրոնի գազափարի խնդիրը, հիմնաքարը պիտի լինի զերասանական ընկերութիւնը, իսկ այդ գաղափարը եղած տեղում՝ իրանք իրանց կը հեռանան մանր-մունր հաշիւները: Խմբի համար Թիֆլիս են հրաւիրուած բոլոր բացակայ զերասանները, որոնց միանալով խումբը բաղկացած է լինում 18—19 հոգուց:

Առաջին ներկաւացման համար որոշուած է «Ղարաբաղի աստղագէտը» պատմական դրաման:

Թատրոնատէր հասարակութեան է մնում ամեն կերպ քաջալերել և աջակցել խմբին, որպէս զի նա կարող լինի կանգնել իւր արժանաւոր բարձրութեան վերայ:

Բոլոր սրտից չաջողութիւն ենք ցանկանում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-Ֆրանսիական դաշնակցութիւնը Մինիստր Հանոտո'ի ճառը:—Մինիստրական փոփոխութիւն Անդլիալում: Պարլամենտական ընտրութիւնների պատրաստութիւններ: Կուսակցութիւնների լուսերը: Հայկական խնդիրը, Անդլիան և Իտալիան:—Պարլամենտական ընտրութիւններ Իտալիալում: Մինիստրական փոփոխութիւններ Աւստրիալում:

Ֆրանս-ռուսական բարեկամութեան բնաւորութիւնը վերջնականապէս պարզեց: Այդ բարեկամութեան առաջին արտայայտութիւններն էին ռուսաց Կրոնշտատն այցելելը Ֆրանսիական նաւատորմի մի էսկադրի կողմից 1891 թւականի յուլիսին և ռուսաց նաւատորմի մի էսկադրի փոխայցելութիւնը 1893-ի սեպտեմբերին Ֆրանսիացոց Տուլոն պատերազմական նաւահանգստում: Ար այդ բոլորով Ֆրանսիայի և Ռուսիայի մէջ քաղաքական բարեկամութիւն էր հաստատուում—այդ մասին ոչ ոք չէր կասկածում ոչ Ֆրանսիայում, ոչ Ռուսաստանում և ոչ էլ մնացեալ Եւրոպայում: Բայց թէ ինչ ձև է տրած այդ բարեկամութեան, — ահա մի խնդիր, որ ամբողջ տարիներ շարունակ զբաղեցրել է քաղաքական աշխարհը. գրաւոր պայման կայ կապուած երկու պետութիւնների մէջ, թէ գրաւոր պայման չկայ կապուած նոցա մէջ,—խնդիրը այդ էր. և այդ հարցը դրեց նոյն այն ժամանակ, երբ Ֆրանսիական կոնտր-ադմիրալ Ժերէէին և նորա էսկադրին փառահեղ ընդունելութիւն արեց Կրոնշտատում և Պետերբուրգում 1891 թ-ին: Իբրև ամբողջ քաղաքական աշխարհը հետաքրքրող և քաղաքական տեսակետից առաջնակարգ մի հարց՝ մենք պարօք համարեցինք նոյն այդ ժամանակ այդ հարցը շոշափել «Մուրճ»-ում, և ահա թէ ինչպէս ձևակերպեցինք մեր կարծիքը այդ մասին. մենք գրում էինք.

«Թէ արդեօք Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացած

է դաշնակցական որ և է գրաւոր պայման, ստորագրած երկու կողմերի ներկայացուցիչներից,—այդ հարցին մենք մեր ընթերցողներին առաջով չենք կարող դրական պատասխան տալ. բայց եթէ մեր զգացմունքին ապաւինենք՝ մենք հաւանական ենք գտնում, որ դաշնակցութիւնը Ֆրանսիայի և Ռուսիայի միջև գրաւոր դոկումէնտի ձև ստացած լինի (դեռ ևս) փոխ-ժողովեալ փերէի այցելութեան ժամանակ Ռուսաստանի մայրաքաղաքին»:

(Տես «Մուրճ», 1891 թ., № 10, էջ 1266—67):

Գրաւոր դաշնագրութեան զոյութիւնը ընդունելու համար մեզ հիմք էր ծառայում նաև այն, որ, ինչպէս նոյն յօդաւածում ասում էինք՝

«...Ֆրանսիական մինիստրների յաճախակի կրկնած ճառերը մեծ վստահութիւն են ներշնչում և ուսաց բարեկամութեան մասին այնպէս են խօսում, որ ենթադրել են տալիս ստորագրած պայմանագրութիւն»:

(տես նոյն յօդաւածը, էջ 1267):

Երկու տարի դորանից անցած, ուսաց հսկադրի փոխ-այցելութեան առիթով մենք գրում էինք հետևեալը՝

«Ռուսաց նաւային հսկադրի Տուլոն այցելելովը ոչ միայն և ամրապնդում է արդէն տարիներ առաջ կցած մի բարեկամութիւն, այլ դորանով իսկական դաշն է կապւում և Ռուսիայի և Ֆրանսիայի միջև: Այդպիսի ցոյցերից յետոյ և անհնարին է իրար հետ կապւած չզգալ և բոլոր քաղաքական գործերում ձեռք ձեռքի տւած չլինել թանաք»: (Տես «Մուրճ», 1893 թ. № 10, էջ 1453):

Հայկական և չինա-եապոնական խնդիրներում Ֆրանսիայի բռնած դիրքը եկաւ Ֆակտորէն ապացուցանելու, որ իրօք Ֆրանսիան և Ռուսիան անհնարին է որ բոլոր քաղաքական գործերում ձեռք ձեռքի տւած չլինեանան. իսկ Ֆրանսիական պատգամաւորների ժողովի նիստում առ 29-ին մայիսի (նոր տոմարով 10-ն յունիսի) արտաքին գործերի մինիստր Հանտոօ'ի և մինիստր-նախագահ Ռիբո'ի ճառերը եկան յայտնելու, որ Ռուսիայի և Ֆրանսիայի այդ

համերաշխ գործողութիւնը հետեանք է այդ երկու պետութիւններին մէջ կռած գրաւոր դաշնի Ուրեմն այն, ինչ չորս տարի առաջ մենք հաւանական էինք համարում, այն է գրաւոր դաշնը, --նա իսկապէս գոյութիւն է ունեցել:

Առիթը, այդ յայտնութիւնը անելու համար, ընդդիմադիր կուսակցութեան կողմից Միչըրանի հարցապնդումն էր կառավարութեան արտաքին քաղաքականութեան մասին, որով Միչըրանը յարձակում էր այն բանի վրայ որ Ֆրանսիան ընդունել է Գերմանիայի առաջարկը՝ մարտանաւեր ուղարկել Կիլի ջրանցքի բացման հանդէսին (բացման օրը 9/21-ն յունիս) և յարձակում էր, որ Ֆրանսիան պատերազմ մղելու վտանգի մէջ էր դրել իրան՝ միանալով Ռուսիայի հետ չդէմ Եսպոնիայի պահանջներով Սիմոնուէկի հաշտութեան դաշնի փոփոխութիւնը: Պաշտպանելով կառավարութեան բռնած դիրքը թէ Կիլի ջրանցքի բացման առիթով, թէ Եսպոնիայի դիմաց և թէ տաճկահայկական խնդրի մէջ, --մինիստր Հանտոս հազորդեց այն հեռագիրը, որով նա պատասխանում էր ռուսաց կառավարութեան տւած հարցմունքին, թէ կը կամենայ արդեօք Ֆրանսիան միանալ Ռուսիայի հետ չին-եպոնական դաշինքի դէմ նորա յարուցած խնդրում: Կարճ հեռագրի մէջ ասւած է. «Ֆրանսիան իւր դիտաւորութիւններից առաջինն է համարում յարգանքը դէպի իւր դաշնագրութիւնները: Ահա ինչու մենք տրամադիր ենք ընդունել և այլն»:

Իորանով առաջին անգամ պաշտօնական տեղից արտասանեց ռուս-ֆրանսիական դաշնագրութիւն խօսքը: Մինիստր-նախագահ Ռիբօն ապա հաստատեց դաշնագրութեան գոյութիւնը, հրաժարելով սակայն նորա մանրամասնութիւնների մէջը մտնել և նոցա հանրաժանօթ դարձնել: Չյայտնւեց նաև ժամանակը, երբ դաշնագրութիւնը կապւեց:

Այդ իրողութիւնը լիքն է քաղաքական հետեանքներով: Չին-եպոնական խնդրում տարած յաղթանակը, որով Եսպոնեան ստիպւեց լիաթոնք թերակղզին յետ տալ Չինաստանին, մի յաղթանակ, որի անմիջական հետեանքն էր Չինաստանի համար 500 միլիոն ռուբլու Ռուսաստանի ձեռքով իրազործած փոխառութիւնը (դա առաջին դէպքն է, որ Ռուսիան մի այլ պետութեան համար փոխառութիւն է իրագործում). տաճկահայկական խնդրում կատարեալ համաձայնու-

Թիւնը Ռուսիայի և Ֆրանսիայի մէջ, — այդ երկու քաղաքական գործերը զուշակել են տալիս կւած դաշնադրութեան բովանդակութիւնը, զոնէ ինչ վերաբերում է արևելեան խնդիրներին: Անկասկած է, որ, բացի որոշումներից միջին-եւրոպական երրեակ դաշնակցութեան նկատմամբ, ռուս-ֆրանսիական դաշնադրութիւնը վերաբերմունք ունի նաև Անգլիային, որը ընդհանուր խնդիրներ ունի թէ Ռուսիայի հետ Ասիայում և թէ Ֆրանսիայի հետ Միջերկրական ծովում, մանաւանդ Եգիպտոսում և նոյն իսկ հեռաւոր Ասիայում: Նկատելու արժանի է որ մինիստր Զաննոտի վերը յիշւած ձառի մէջ Եգիպտոսի խնդիրը շոշափւեց, ակնարկով Ֆրանսիական սլարլամէնտի թեթևամիտ արարքի վրայ, որը վայր զլորեց Գամբետտայի մինիստրութիւնը յունւարին 1882 թ., երբ նա ազդու միջամտութիւն էր ուզում գործել եգիպտական խնդրի մէջ:

Անգլիայում Ռոսբերիի լիբերալ մինիստրութիւնը որը ուղղակի շարունակութիւն էր ծերութեան պատճառով հրաժարական տւած Գլադստոնի մինիստրութեան, հրաժարական տւեց հին տոմարով 12-ն յունիսի, իսկ 14-ին պահպանողականների պարագլուխ մարկիզ Սոլսբրիին ընդունեց թագուհու առաջարկը՝ նոր մինիստրութիւն կազմելու: Մինիստրութիւնը ներկայացնում է մի խառնուրդ պահպանողականների և այն լիբերալների, որոնք, Դիւոնշիրեան դքսի (նախկին լորդ Զարտինգտոն) առաջնորդութեամբ՝ բաժանւեցին Գլադստոնից՝ իրլանդական հոմսուլի (ինքնավարութեան) ծրագրի պատճառով: Այդ բաժանւածները, որոնք կամենում են որ Իրլանդիան կատարելապէս միացած (ունիա) մնայ Անգլիայի հետ, կոչւում են այդ իսկ պատճառով ունիոնիստներ, որոնց ընդհանուր պարագլուխը Դիւոնշիրի դուքսն է, իսկ յատկապէս երեսփոխանական ժողովում՝ Չամբրլէնը: Երկուսն էլ մտնում են Սոլսբրիի մինիստրութեան մէջ, ուր, բացի Սոլսբրիից, որ մինիստր — նախագահ է և արտաքին գործերի մինիստր, զուտ պահպանողականներից կան Բալֆուր — առաջին լորդ գանձարանի, Լիքս-Բիլ — Ֆինանսական, Գոչէն — ծովային մինիստր: Ընդամենը կարինտը բաղկացած է 17 հոգուց, բայց ուղղութիւն տւողները կը լինեն մի քանիսը միայն:

Սոլսբրիի կաբինէտը հարկ համարեց երեսփոխանական ժողովը շուտով լուծել տալ, որ և կատարեց նոր տոմարով յուլիսի 10-ին: Ընտրողական պաշքարը զօրեղ կերպով արդէն սկսած է: Լիբերալները ճրագրում առաջին խնդիրը այս անգամ ոչ թէ իրլանդական ինքնավարութիւնն է, այլ լորդերի պալատի դէմ կռիւը, որով լիբերալները կամենում են որ երեսփոխանական ժողովը գերակշիռ նշանակութիւն ունենայ լորդերի պալատից, մինչդեռ ցայժմ դոքա իրար հաւասար են: Լորդերի պալատը իւր իննը տասերորդականով խիստ պահպանողական է և լիբերալները յոյս չունեն իրլանդական ինքնավարութեան օրինագիծը անցկացնել—առանց նախապէս կոտրելու լորդերի պալատի օրէնսդրական կարևորութիւնը: Ընտրութիւնները պիտի կատարւած վերջացրած լինեն մինչ երկու շաբաթ: Հազիւ թէ պահպանողական կուսակցութիւնը զօրեղ մեծամասնութեամբ դուրս գայ: Հաւանական է որ ունիոնիստ կուսակցութիւնը աւելի զօրեղ դուրս գայ քան մինչև այժմ էր, օգտւելով պահպանողականների աջակցութիւնից, դէպի որոնց նոքա այժմ աւելի են մօտ են, քան 1892 թ. ընտրութիւններին:

Հայկական խնդրի նկատմամբ նոր մինիստրութիւնը իւր զիտաւորութիւնները դեռ ևս չայտնած չէ որոշ կերպով. այդ կը պարզւի միայն պարլամէնտական ընտրութիւններից յետոյ: Բայց «Ստանդարտ» օրաթերթը, որը պահպանողականների գլխաւոր օրգանն է, կարծել է տալիս որ նոր մինիստրութիւնը չի փոխիլ նախկին մինիստրութեան ուղղութիւնը այդ խնդրում: Համեմատեցէք այդ մասին նաև «Մուրճ»-ի ներկայ համարի ժամանակակից տեսութեան առաջին էջերը: Հաւանական է, որ Սոլսբրի կ'աշխատէ ամրացնել նաև Անգլիացի կապերը Իտալիայի հետ, որից անկասկած կարող է շահւել նաև հայկական դատը, դէպի որը Իտալիայի բարխտրամադրութիւնները չայտնի են արդէն մեր ընթերցողներին:

Իտալիայում կատարուեցին նոր պարլամէնտական ընտրութիւններ, նոր տոմարով 25 մայիսի, ուր մինիստր-նախագահ Կրիսպին տարաւ մեծ յաղթանակ. ընտրւածներից շուրջ 350 հոգի նորա

կուսակիցներն են, և միայն շուրջ 150 հոգի—ընդդիմադիրներ։
Սակայն իտալական գործերի մասին մի այլ անգամ։

Աւստրիացում կոմս Վինդիշգրեցի մինիստրութիւնը յունիսի
Տօին հրաժարական տւեց. կոմս Կիլմանսէզ նշանակեց ներքին գոր-
ծերի մինիստր և մինիստր-նախագահ։ Գորանից առաջ կոմս Կալնո-
կին, Աւստրո-Ռւնգարիացի արտաքին գործերի մինիստրը, ունգարական
մինիստրութեան գլխաւոր Բանֆիի հետ ընդհարում ունենալով հրա-
ժարական տւեց, 14 տարի աւստրո-ունգարական արտաքին քաղա-
քականութիւնը ղեկավարելուց յետոյ։ Նորա տեղը նշանակւած է
կոմս Գլուխովսկից։

Z.

ԶԱՆԱԶԱՆ 1 ՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ԱՄԱՌԻԱՅ ՀԱՄԱՐՆԵՐԸ (№ 7 և 8) լույս կը տեսնեն առանձին-առանձին, սովորականից աւելի բարակ տետրներով, և ոչ միացրած, ինչպէս սովորութիւն էր վերջին չորս տարիներս:

«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ շարունակոււմ է: Բաժանորդ գրողները ստանում են բոլոր համարները շունար ամսից սկսած:

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՅՆԵՆԸ, որ սպազրում ենք «Մուրճի» ներկայ համարում, կատարած է հալոց (գլխատրապէս «Մշակ»-ի) և ռուսաց թերթերում լույս տեսած թարգմանութիւնների հիման վրայ: Ծրագրի բնագիրը, որ Ֆրանսերէնն է, մենք չկարողացանք ձեռք բերել. մենք չգտանք այն սպւած նոյն իսկ Պարիզի Temps լրագրում: Ռուսերէն և հայերէն թարգմանութիւնները կատարւած են անգլիերէնից: Զգիտենք թէ արդեօք անգլիական թերթերում տպածները՝ բառ առ բառ իրար նման են թէ ոչ, բայց սա հաստատ է, որ անգլիերէնից կատարւած ռուսերէն և հայերէն թարգմանութիւնները իրար համաձայն են ոչ-կատարելապէս: Համեմատութեան համար մենք աչքի առաջ ենք ունեցել գլխատրապէս ռուսաց «Նովոստի» և հալոց «Մշակ» լրագիրների թարգմանութիւնները, որոնք կատարւած են անգլիերէնից, այլ նաև «Արձագանք»-ում տպւածը, որը, ըստ ամենայն հաւանականութեան՝ թարգմանւած է ռուսերէնից (այդ թերթի խմբագրութիւնը իւր աղբիւրը ցոյց չտւեց). նա շատ կէտերում համաձայն է «Նովոստի»-ին: Ունեցել ենք աչքի առաջ նաև Թիֆլիսի ռուսաց՝ «Նովոս Արագրենի»-ի Լոնդոնի աշխատակցի անողորմ կերպով կրճատւած թարգմանութիւնը: Համեմատութիւնները ցոյց տւին, որ նոքա իրարից շատ կէտերում տարբերոււմ են, հարկաւ, ոչ միայն ոճերով այլ և իմաստով: Եւ միւս կողմից՝ մենք հաւաստիութիւն ձեռք բերինք, որ ոչ միայն նոքա իրարից տարբերոււմ են, այլ և ոչ մէկը նոցանից լիակատար կերպով ճիշդ չէ, և սխալները երբեմն, ըստ երևութիւն, շատ խոշոր են: Մինչև որ Ֆրանսերէն բնագիրը կը հրատարակւի կամ եղածը ձեռք կը բերենք՝ մենք հրատարակոււմ ենք այս

համարում այն, ինչ չիչեալ թարգմանութիւնների օգնութեամբ և մանրակրկիտ համեմատութեամբ կարողացել ենք կազմել, վստահ լինելով որ մեր տաճը թէ աւելի ճիշտ է խմբագրւած և թէ զերծ է գէթ այն ոչ սակաւաթիւ սխալներից, որ կարողացել ենք նկատել միւս թարգմանութիւնների մէջ:

ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՁԵԱՆՑԻ չօղւածները Գարագաշեանի «Քննական պատմութիւն Հայոց» մեծ երկասիրութեան մասին սկսում են երեւալ «Մուրճ»-ում ներկայ համարից սկսած: Անկասկած է որ այդ չօղւածները լարւած ուշադրութեամբ կը կարողացեն թէ «Մուրճ»-ի հասարակութեան կողմից և թէ հեռւոր գիտնական աշխարհում: Գրքի առաջին հատորի քննութիւնը կը վերջանայ «Մուրճ»-ի չա. որդ համարում: Երկրորդ հատորի մասին քննութիւնը պատրաստում է:

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՌՈՒՍԱՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ: Մալխի 22-ին կաթ. Նոր-Նախիջևանից ուղևորւեց Պետերբուրգ մի արտակարգ գնացքով, որ պատրաստել էր Մոսկւայի հաչ հասարակութիւնը, ուղևկցութեամբ Մոսկւայի հաչ գաղութի ներկայացուցիչների: Կամենեցկայա կալարանում դիմաւորեց տեղական հաչ գաղութը աղ ու հացով: Կաթողիկոսը գիշերեց Միխայլովսկա կալարանում 23-ին: Վորոնէժի կալարանում պատգամաւորութիւն ներկայացաւ: Ռեաժակ'ում գիշերեց: Ռեազանում ներկայացաւ Մոսկւայից եկած նոր պատգամաւորութիւն: Կաթողիկոսը ժամանեց Մոսկւա 24 մալխի. օրւայ ժամ 2¹/₂-ին: Կալարանում դիմաւորեցին հաչ հասարակութիւնը և Լազարեան ճեմարանի աշակերտներն իրանց ուսուցիչներով: Տրւեց նախաճաչ 30 հոգու: Սմբատ Շահազիզ առաջարկեց Կաթողիկոսի կենացը: Նոյն օրւայ ժամ 5-ին 30 րոպէ Հայրապետը նոյն գնացքով շարունակեց ճանապարհը գէպի Պետերբուրգ, ուր ժամանեց մալխի 25-ին, ժամ 3 կէսօրից չետու: Կալարանը ընդառաջ էին գնացել Պետերբուրգի հաչ պատգամաւորութիւնը (կազմւած գեներալ Ալխազեանից, Կ. Եզեանից, Եաղուբեանից և ուրիշներից), օտար դաւանութիւնների դեպարտամէնտի դերեկտոր Մոստովյ գեներալ Տիմոֆէեւ և ժողովրդի խուռն բազմութիւն: Կաթողիկոսը, ուղևկցած երկար ժամանակ չվերջացող կեցցէներով՝ չքեղ կարէտի մէջ, որին լծւած էին զուգ-զուգ երկշար չորս ձի, ուղևորւեց հաչոց եկեղեցին, ուր Նորան սպասում էր տեղական հաչ հոգևորականութիւնը: Մաղթանքը լսելուց չետու, Վեհափառը ըստ պատշաճի կարճ քարոզ խօսեց և ապա ուղևորւեց իրա համար պատրաստւած քնակարանը, Միլիտոնայա փողոց: Նոյն օրը Վեհին այցելեց Պետերբուրգի գրադոնաչալնիկ ֆոն Վալ:

Յաջորդ օրը կաթողիկոսը այցելեց ներքին գործերի մինիստրին, որը իսկույն իւր փոխադարձ այցելութիւնն արաւ կաթողիկոսին: Վեհափառին այցելեց և ժողովրդական լուսատուութեան մինիստր կոմս Գելեանով (ծնունդով հաչ և հաչ-լուսաւորչական): Կաթողիկոսը ընդունեց իւր մօտ բարձրագոյն դպրոցներէ հաչ ուսանողներին, չետոյ Պետերբուրգի հաչ տիկիճներին: Նոյն օրը հաչոց եկեղեցում պատարագ մատուցեց կաթողիկոսին ուղեկցող Կարապետ եպ. Ալվազեան, իսկ Վեհափառը քարոզ խօսեց:

Մալխի 3-ին Ամենայն Հաչոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ ներկայացաւ Նոյին Կալսերական Մեծութիւններ կալսր Նիկոլայ II-ին և կալսրուհի Ալեքսանդրա Ֆէոդորովնային Պետերհոֆի պալատում: Ընդունելութիւնը փառահեղ հանդիսով կատարեց: Պետերհոֆ գալու համար կառավարութիւնը պատւիրել էր սալոն-վագոն, իսկ շքախմբի համար առաջին կարգի վազոններ: Պետերհոֆ հասաւ ժամ 1-ին: Երկաթուղու կալարանի արքայական սենեակներում Նորին Օծութեանը դիմաւորեցին արարողապետը և հանդիսաւոր արարողութիւնների ատենի կառավարիչը: Կալարանից պալատ ուղևորելու համար կաթողիկոսի կարգադրութեան ներքոյ էր դրած Ալեքսանդր II կալսեր պատմական շքականքը, վեց սպիտակ ձի լծած, երեք շարքով: Վեհափառին ուղեկցողները համար նշանակւած էին ոսկեզօծ պալատական կառքեր: Կաթողիկոսի առջևից կառքի մէջ տանում էին խաչն ու գաւազանը Յուսիկ Մովսիսեան և Մխիթար վարդապետները, երկրորդ կառքում միւս Յուսիկ վարդապետը բռնած էր կաթողիկոսի գաւազանը: Կաթողիկոսական կառքին հետևում էին չորս ձիաւոր պահակներ, իրանց գլխաւոր սպայի առաջնորդութեամբ. ապա գալիս էր կառքը Կարապետ եպիսկոպոսով և Կ. Եղեանով, 5-րդ կառքում՝ Բարդուղիմէոս և Նահապետ վարդապետները, 6-րդում՝ Տիրալը վարդ. և Վահան սարկաւազը, 7-րդում պալատական անձերը, 8-րդում՝ շաթիրները: Մեծ պալատի մօտ ընդառաջ եկան արարողապետ իշխ. Դուգորուկով և աւագ-հոֆմարշալ իշխ. Տրուբեցկոյ, որոնք առաջնորդեցին դէպի ընդունարանի դահլիճը: Այդտեղ Վեհափառին ներկայացաւ Փրէլլինա կոմսուհի Ռամսդորֆ, ներկայ էր նաև պալատական մինիստրի պաշտօնակատար Ֆրեդերիկս: Ընդունելութեան ընթացին Վեհափառը հրաւիրեց արքայական ընդունարանը, իսկ շքախումբը առաջնորդեցին դէպի աւան-դալը: Թարգմանի պաշտօնը կատարում էր կառավարութիւնից նշանակւած գաղտնի խորհրդական Կ. Եղեան: Ունկնդրութեան միջոցին, քառօր ժամ անցած՝ ներս հրաւիրեց կաթողիկոսի շքախումբը, որի անդամներին կաթող. լականէ լանանէ ներկայացրեց Թագաւոր կալսեր և Թագուհի-Կալսրուհուն, և որոնք իսկույն դուրս եկան

Նոյն շարքով դահլիճ: Ամբողջ ունկնդրութիւնը տեւեց 20 բոպէ: Ըստ ուսուսաց հեռագրական գործակալութեան՝ ունկնդրութեան միջոցին Հայոց Կաթողիկոսը շնորհաւորեց Թագաւոր Կայսրին՝ Նորին Մեծութեան գահ բարձրանալու առթիւ և արտապատեց բոլոր երկիրների հայերի շնորհապարտ անձնւիրութեան զգացումները: Թագաւոր-Կայսրը հրճւանք չալտնեց, որ տեսնում է իւր մօտ Նորին Օծութիւնը և շնորհակալութիւն չալտնեց Կաթողիկոսին՝ Նորա ցանկութեան համար այցելել Նոյցին Մեծութիւններին: Օրը չորեքշաբթի լինելով՝ պահոց նախաճաշ էր պատրաստւած, Վեհափառի համար ջոկ սեղան առանձին սենեակում, շքախմբի համար՝ այլ սենեակում: Ժամ 2-ին վերադարձը Պետերբուրգ կատարեց նոյն հանդէսով:

Վեհափառը, չունիսի 1-ին հեռագրով առ Էջմիածնի սինոդը հաղորդեց. «Շտապում եմ ինձ ուրախակից անել ձեզ. պատիւ ունեցալ ներկայանալու Նոյցին Կալսերական Մեծութիւններին Պետեր-նոֆի պալատում և արժանացալ ողորմած ընդունելութեան»:

Յունիսի 1-ին Կաթողիկոսը այցելեց արտաքին դործերի մի-նիստը իշխ. Լորանով-Ռոստովսկուն:

Յունիսի 2 ին կէսօրին Կաթողիկոսը Կարապետ եպ. Ալվա-պեանի և երկու վարդապետի ուղեկցութեամբ այցելեց Նորին Բարձր Սրբազնութիւն Պետերբուրգի և Լաղոգայի մետրոպոլիտ Պալաղիին: Աջնուհետև Կաթողիկոսն անցաւ Ալեքսանդրո-Նեւսկի վանքը, ուր Նորան զիմաւորեց ամբողջ միաբանութիւնը հանդիսաւոր աղօթք-ներով: Նորին Օծութիւնը համբուրեց ս. Ալեքսանդր-Նեւսկու շի-րիմը: Նոյն օրը Բարձր Սրբազան Պալաղին երկու չաջորդ վարդա-պեանների հետ այցելեց Նորին Վեհափառութեան:

Յունիսի 3-ին, շաբաթ օր, Կաթողիկոսին այցելեցին արտա-քին գործերի մինիստր իշխ. Լորանով-Ռոստովսկի և բարձրագուն պալատի աւագ-արարողապետ իշխան Կոլզորուկով:

Յունիսի 4-ին կիրակի Կաթողիկոսը հայոց եկեղեցում քարոզ խօսեց, որի բովանդակութիւնը տպեց «Նովոստ»-ի ուսուսաց լրագ-րում, նա վերաբերմունք ունէր Հայերի ներկալ վիճակին: Յալտնե-րով որ Հալատտանը կենդանի է և որ հին ազգերը մեռան, իսկ հալութիւնը մինչ ալսօր էլ կենդանի է և ապրում է, Կաթողի-կոսը շարունակեց. «Կուք լաւ դիտէք որ Հալատտանը ալժմ բա-ժանւած է երկու հարեան մեծ տէրութիւնների մէջ, Կուք բաղդա-ւոր էք. ձեզ վիճակեց մեծ Ռուստտանի Ամենաողորմած Կալսրի զօրեղ հովանու տակ աղատ կերպով դաւանել ձեր քրիստոնէական կրօնը և արդար աշխատանքով վալելել երկրալին բոլոր բարիքները: Բայց մեր եղբայրները Հալատտանի միւս մասում, ընկած թիւրքաց

